

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

1 (13)

2024

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2024

***Հրատարակության է երաշխավորել Հյուսիսային համալսարանի
գիտական խորհուրդը***

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ **Արմեն Ճուղուրյան**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, Հյուսիսային համալսարան

Խմբագրական խորհրդի անդամներ

Լուսինե Տլջյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Հյուսիսային համալսարան

Աստղիկ Աբրահամյան, բանասիրական գիտությունների թեկնածու, Հյուսիսային համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոնի ղեկավար

Արթուր Ղամբարյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան

Վալերի Միրզոյան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ազատ հետազոտող

Պիթեր Կոստա, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սլավոնական լեզուների ամբիոնի վարիչ, Պոցդամի համալսարան, Գերմանիա

Ռադովան Ստոյանովիչ, Էլեկտրական ճարտարագիտության և համակարգչային գիտությունների դոկտոր, Էլեկտրական ճարտարագիտության ֆակուլտետի պրոֆեսոր, Մոնտենեգրոյի համալսարան

Վիտալիյ Կոպնով, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ռեկտորի խորհրդական, Ռուսական պետական մասնագիտական-մանկավարժական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն

Գոհար Պետրոսյան, իրավագիտության դոկտոր, դոցենտ «Միջազգային հանցագործություն և արդարադատություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար, Նյու-Յուրք Սիթի համալսարան ԱՄՆ

Սերգեյ Զմիյակ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, «Միջազգային տնտեսություն և միջազգային տնտեսագիտական

հարաբերություններ» ամբիոնի վարիչ, Դոնեցկի պետական տեխնիկական համալսարան, Դոնեցկի Ժողովրդական Հանրապետություն

Նինո Ապցխաուրի, պատմագիտության դոկտոր, դոցենտ, Իվանե Ջավախիշվիլի անվան Թբիլիսիի պետական համալսարան, խորհրդական, Արտաքին գործերի նախարարություն, Վրաստան

Նինո Աբեգաձե, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Վիճակագրական տնտեսագիտության ամբիոն, Իվանե Ջավախիշվիլի անվան Թբիլիսիի պետական համալսարան

Իլուտա Արքիդանե, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ռեզեկնեի տեխնոլոգիական ակադեմիա, Լատվիա

© «Հյուսիսային համալսարանի հրատարակչություն», 2024 թ.

ЮСИСАПАЙЛ

(Северное сияние)

НАУЧНЫЙ ЖУРНАЛ СЕВЕРНОГО УНИВЕРСИТЕТА

1 (13) 2024

Редакционная коллегия

Главный редактор – **Армен Джугурян**, доктор экономических наук, профессор, заведующий кафедрой экономики и менеджмента, Северный университет

Члены редакционной коллегии

Лусине Флджян, доктор филологических наук, профессор, проректор по учебно-исследовательской работе и интернационализации, Северный университет

Асттик Абраамян, кандидат филологических наук, руководитель учебно-практического центра по связям с общественностью и СМИ, Северный университет

Артур Гамбарян, доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права, Российско-армянский (Славянский) университет

Валерий Мирзоян, доктор философии, профессор, свободный исследователь

Питер Коста – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой славянских языков, Поцдамский университет, Германия

Радован Стоянович, доктор инженерных и компьютерных наук, профессор факультета электрической инженерии, Университет Черногории, Черногорье

Виталий Копнов, доктор технических наук, профессор, советник ректора, Российский государственный профессионально-педагогический университет, Россия

Гоар Петросян, доктор юриспруденции, доцент, директор магистерской программы “Международная преступность и правосудие”, Городской университет Нью-Йорка, Университет, США

Сергей Змияк, доктор экономических наук, доцент, заведующий кафедрой "Мировая экономика и международные экономические отношения", Донской государственный технический университет, Донецкая Народная Республика

Нино Апциаури, доктор исторических наук, доцент, кафедра арменологии, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, советник, Министерство иностранных дел, Грузия

Нино Абездзе, доктор экономических наук, профессор, кафедра экономической статистики, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, Грузия

Илута Арбидане, доктор экономических наук, профессор, кафедра экономики и менеджмента, Резюкненская академия технологий, Латвия

HYUSISAPAYL

(Northern Lights)

SCIENTIFIC JOURNAL OF NORTHERN UNIVERSITY

1 (13) 2024

Editorial Board

Chief Editor` **Armen Tshughuryan**, Doctor of Sciences in Economics, Professor, Head of the Chair on Economic and Management, Northern University

Members of the Editorial Board

Lusine Fljyan, Doctor of Sciences in Philology, Professor, Vice-Rector for Education, Research and Internationalization, Northern University

Astghik Abrahamyan, PhD in Philology, Head of Media and Public Relations Training Centre, Northern University

Artur Ghambaryan, Doctor in Law, Professor, Head of the Department of Theory and History of State and Law, Russian-Armenian (Slavonic) University

Valeriy Mirzoyan, Doctor of Philosophy, Professor, Freelancer

Peter Kosta, Professor Doctor phil. habil, Head of the Chair of Slavic languages, Potsdam University, Germany

Vitaliy Kopnov, Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Gohar Petrossian, PhD in Law, Associate Professor, Director of International Crime and Justice MA Program, City University of New York, USA

Vitaliy Kopnov, Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Radovan Stojanović, Doctor in Electrical Engineering and Computer Sciences, Professor at the Faculty of Electrical Engineering, University of Montenegro, Montenegro

Nino Abezadze, Doctor of Sciences in Economics, Professor, Chair on Economic Statistics, Ivane Javakhishvili State University, Georgia

Iluta Arbidane, Doctor of Sciences in Economics, Professor, Chair on Economic and Management, Resekne Academy of Technologies, Latvia

Sergey Zmiyak, Doctor of Sciences in Economics, Professor. Head of the Chair on World Economy and International Economic Relations, Donetsk State Technical University. Donetsk People's Republic

Nino Aptsiauri, Doctor of History, Associate Professor, Chair on Armenology, Ivane Javakhishvili State University, Counselor, Ministry of Foreign Affairs, Georgia

«ԿԱՆԱՉ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՒՄԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Արմեն Ճուղուրյան

Հյուսիսային համալսարան, տնտեսագիտության դոկտոր

Jarmen2005@gmail.com

Համառոտագիր

Կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական հետևանքների գնահատումներին գործնականում և ակադեմիական միջավայրում շատ ավելի քիչ է ուշադրություն դարձվում, քան դրա հետևանքով կայուն զարգացմանը նպաստող փաստացի արդյունքներին: Կանաչ ձեռնարկատիրությունը հիմնականում դիտարկվում է որպես միջոց շրջակա միջավայրի պահպանության առումով, և այդ ուղղությամբ տրվում են տարբեր գնահատականներ, կազմակերպությունների կողմից շահառուներին են ներկայացվում տարաբնույթ հաշվետվություններ: Սակայն դեռևս չեն ամբողջականացվում կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական գնահատումների մեթոդներն ու մոտեցումներն այն դեպքում, երբ կազմակերպությունների կողմից դրսևորվող «կանաչ վարքագիծը» կարող է առաջացնել ոչ միայն բարենպաստ բնապահպանական հետևանքներ, այլև դրական ֆինանսական արդյունքներ: Հնդկաձուլ ներկայացվում են կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունավետության գնահատման մեթոդաբանության նոր մոտեցումներ՝ առաջարկելով կազմակերպությունների կողմից «կանաչ վարքագծի» ֆինանսատնտեսական չափումներ և դրանց հիման վրա իրականացվող կայուն զարգացման ֆինանսական գնահատումներ:

Հիմնաբառեր՝ կանաչ ձեռնարկատիրություն, կայուն զարգացման շահառուներ, ֆինանսական վերահսկողություն, գրաֆիկական վերլուծություն, ֆինանսական ցուցիչների տրենդներ:


Հիմնախնդրի դրվածքը և դրա լուծման արդիականությունը

Կանաչ ձեռնարկատիրությունը ոչ միայն գործարարության յուրահատուկ դրսևորում է ձեռք բերում, այլև առանձնահատուկ վարքագծային կանոններով գործընկերային շահառուների սպասումներն է սպասարկում: Կանաչ ձեռնարկատիրության նպատակադրումներից ելնելով՝ կարելի է արդեն իսկ ենթադրել դրանց հասանելիությամբ հետաքրքրված շահառուների լայն շրջանակի մասին, որի սահմանները կարող են

որոշակիորեն ընդլայնվել՝ ներառելով ժամանակի պահանջներից բխող նոր խաղացողների (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1.

«Կանաչ ձեռնարկատիրության» շահառուների շրջանակը¹



Այսպես, երկրների կառավարություններն իրենց գերատեսչական մարմիններով հանրային շահեր են հետապնդում և գործարարության հանդեպ պահանջկոտություն են դրսևորում բնական ռեսուրսների ռացիոնալ շահագործման, շրջակա միջավայրի պահպանման, սոցիալական արդարարության, կրթության հասանելիության ապահովման ուղղություններով: Սակայն կանաչ ձեռնարկատիրության առնչվող հանրային սպասումները կարող են դուրս մնալ պետական գերատեսչական մարմինների տեսադաշտից և անցնել հասարակական կազմակերպություններին: Դրանք կարող են լինել գենդերային հիմնախնդիրներին, հարստության բևեռացման մեղմմանը, արժանապատիվ աշխատանքին հասանելիությանն ուղղված լուծումներ: Ավելին, հասարակական կազմակերպությունները ձեռնարկում են անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ:

Տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես գործարարության կանաչ ձեռնարկատիրության շահառուներ են, քանի որ մի կող-

¹ Գծապատկերը՝ ըստ հեղինակի:

մից ձեռնարկատիրական գործունեության ընդլայնումը նոր աշխատատեղեր է բացում, բարելավում է ազգաբնակչության սոցիալական վիճակը, սակայն մյուս կողմից, առողջապահական և բնապահպանական ռիսկեր է պարունակում: Տեղական ինքնակառավարման մարմինները շահագրգիռ են վերականգնելու և խթանելու ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործումը, ապահովելու անտառների արդյունավետ կառավարումը, պայքարելու անապատացման դեմ, կանխարգելելու հողերի որակական վատթարացումը, կասեցնելու կենսաբազմազանության կորուստը:

Բիզնես գործընկերները նույնպես ընդգրկված են կանաչ գործարարության շահառուների առանցքային խմբում: Այսօր կարևորվում է գործարարության մոդելում գործող արժեքային շղթայի մասնակիցների վերաբերմունքը կայուն զարգացմանը: Կազմակերպությունները նախընտրում են այնպիսի մատակարարներ և գնորդներ, որոնք իրենց գործունեությամբ նպաստում են կանաչ ձեռնարկատիրության զարգացմանը: Բանկերը փորձում են կանխարգելել այնպիսի փոխառությունների տրամադրումներ, որոնց օգտագործումը բիզնեսի կողմից վատթարացնում է բնապահպանական միջավայրը: Վերջին տասնամյակում աստիճանաբար ակտիվանում է պատասխանատվությամբ ներդրումների մշակույթը, երբ բաժնետերերը խուսափում են գնել արժեթղթեր այնպիսի կազմակերպություններից, որոնք չեն վարում կանաչ ձեռնարկատիրության զարգացման ռազմավարություն, չեն ստեղծում դիմակայուն ենթակառուցվածքներ, անտարբեր են ներառական ու կայուն արտադրության զարգացմանը, առանձնապես մոտիվացված չեն նորարարության խթանման ասպարեզում:

Բիզնես գործընկերների համայնքում որպես կանաչ գործարարության զարգացման շահագրգիռ կողմ է նաև կազմակերպությունների կողմից հավաքագրված աշխատուժը, որը շահախնդիր է ոչ միայն մասնագիտական կարողությունների գծով պարբերաբար իրականացվող վերապատրաստումների, այլև գործատուի կողմից արդարացի վարձատրումների և աշխատակիցների սոցիալական պայմանների բարելավումների գծով: Հետևաբար ներկայումս արդիական է դառնում կանաչ ձեռնարկատիրության շուրջ համախմբված բազմաբնույթ շահառուներին անհրաժեշտ տեղեկատվական ապահովվածությունը, որպեսզի վերջիններս կարողանան ոչ միայն գնահատել գործարարության կայուն

զարգացման ռիսկերը և դրանց վերացման հնարավորությունները, այլև որոշումներ կայացնեն տեսանելի ապագայում կանաչ ձեռնարկատիրության ֆինանսատնտեսական արդյունավետության ապահովման գծով:

Կանաչ ձեռնարկատիրության մրցակցային գնահատումը ներկայումս չի սահմանափակվում միայն ֆինանսական արդյունքների տեսանկյունից, այլ նաև դիտարկվում է կայուն զարգացման հնարավորությունների առումով: Ձեռներեցների մասնավոր շահերի և գերշահույթների ձեռքբերումների նպատակադրումներն արդեն իսկ հակադրվում են գործարարության հանրային սպասումներին, երբ խնդիր է դրվում կանխարգելելու բիզնեսի հետևանքով ձևավորվող բնապահպանական ռիսկերը, բարձրացնելու բնօգտագործման արդյունավետությունը, նպաստելու օգտագործվող մարդկային կապիտալի որակական աճը, ստեղծելու գործընկերային սոցիալական կապիտալ: Այս առումով խնդիր է դրվում համակարգելու կայուն զարգացմանն առնչվող տեղեկատվությունը, որն իրականացվելու է կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվություններով: Իսկ քանի որ գործարարության կայուն զարգացման ներուժը բնութագրվում է ոչ ֆինանսական և ֆինանսական տեղեկատվությամբ, ապա գործնականում առաջանում են նաև բիզնեսի կայուն զարգացման տեղեկատվության հաշվետվողականության ձևաչափի ներկայացման հիմնախնդիրներ, որոնք իրենց լուծումներին են սպասում:

Ի սկզբանե գործարարությունն սկսեց ակտիվանալ նախաձեռնող անհատների կամ խմբերի կողմից, որի մոտիվացիան սեփական շահունենալն էր: Արտադրելով նյութական բարիքներ կամ հանրությանը տրամադրելով ծառայություններ՝ հաջողակ գործարարները բարձրացնում էին աշխատանքի արտադրողականությունը, կիրառում ռեսուրսների օգտագործման արդյունավետ ուղիներ և արտադրական գործոնների ռացիոնալ համակցությամբ ձևավորում հավելյալ արդյունք, որը ծառայում էր ի նպաստ սեփական շահերի: Մեր օրերում գործարարության կազմակերպման ձեռներեցների առաջնահերթ մոտիվացիան նույնպես շահույթի ստացումն է, ֆինանսական կայունության ամրապնդումը և շուկայում մրցակցային դիրքերի ձեռքբերումը: Սակայն դրա հետ մեկտեղ անհրաժեշտություն է առաջանում գնահատելու, թե շրջակա միջավայրի պահպանության ինչ գնով է ձևավորվում այդ շահույթը:

Գործարարությունը չի կարող անվերջ ծառայել սեփականատերերին և անհատական շահեր հետապնդել, քանի որ այն անմիջականորեն պարտավորություններ ունի հենց ձեռներեցական շահերից դուրս: Մասնավորապես ձեռնարկատերն օգտագործում է բնական ռեսուրսներ, հանածոներ, հավաքագրած աշխատուժ, որն, ըստ էության, իր գործունեության արգասիքը չէ և նրան տրվել է ուղղակի հնարավորություն այդ ամենից օգտվելու համար, հետևաբար գործարարը պարտավոր է այդ ռեսուրսներն օգտագործել այնպես, որ դրանք հասանելի լինեն գալիք սերունդներին:

Հենց այս հիմնարար մոտեցումն է ի սկզբանե ընկած կանաչ ձեռնարկատիրության կայուն զարգացման պահանջատիրության հիմքում: Ձեռնարկատիրության ապահովումն առաջին հերթին պահանջում է ներկա արտադրական ռեսուրսների այնպիսի պոտենցիալի փոխանցում ապագային, որպեսզի սերունդները կարողանան շարունակել իրենց ձեռներեցությունը և չբախվեն անխնա օգտագործված և սպառված հումքահանքային և բնական պաշարների փաստին, որն էլ իր հերթին կխափանի գործարարության կայուն ընթացքը: Չէ՞ որ գործարարությունը, ստեղծելով հանրային բարիքներ և բավարարելով մարդկության սպառողական պահանջմունքները, որոշակիորեն վնասում է նաև շրջակա միջավայրին և հանրային տեսանկյունից ձևավորում բացասական արդյունքներ: Այս առումով ձեռնարկատիրության մասնավոր շահերի «ախորժակը» կայուն զարգացման տեսանկյունից զսպվում է հանրության նկատմամբ ռեսուրսների արդյունավետ օգտագործման պատասխանատվությամբ:

Մյուս կողմից գործարարության միջավայրի ռեսուրսները շահագործելիս և անձնային շահերին հետամուտ լինելիս ձեռներեցները տալիս են սեփական «հիմնավորումներ» այն առումով, որ բիզնես գործունեությունն ուղեկցվում է վնասների փոխհատուցման ռիսկերով, հետևաբար ռեսուրսների արդյունավետ օգտագործման պահանջների շրջանցմամբ գերշահույթների ստացումն իրենց տեսանկյունից կարող է և արդարացված համարվել: Այս դեպքում արձանագրվում է, որ շահույթ հետապնդող գործարարությունը բնութագրվում է հավանական ռիսկերով, երբ ռեսուրսներ ներգրավվելով և օգտագործվելով՝ ձեռներեցներն ունենում են վնասներ՝ ձևավորելու հավանականություն, նամանավանդ, երբ կիրառում են նորամուծական գաղափարներ, ուստի և կայուն զար-

գացման ռեսուրսների անարդյունավետ օգտագործման հաշվին գերշահույթների ստացումը մասնավոր հատվածի կողմից արդարացվում է յուրովի:

Սակայն հանրության տեսանկյունից նման մոտեցումն ընդունելի չէ, քանի որ բիզնես գործունեությունն այս դեպքում դիտարկվում է հանրային շահերի պրիզմայով: Նման պարագայում հասարակությունը հետաքրքրված է բիզնեսի կայուն զարգացմամբ, և ձեռնարկատիրությունը գնահատում է ոչ միայն հանրային բարիքներ ստեղծելու, այլև հետագա գործարարությունը շարունակելու և դրան աջակցող տնտեսական պոտենցիալն ընդլայնելու տեսանկյունից: Հանրությունը սպասում է այնպիսի հարցադրումների պատասխաններ, ինչպիսիք են՝ ինչպե՞ս են փոխհատուցվում գործարարության ընթացքում սպառված բնական ռեսուրսները, ինչպիսի՞ն են բնօգտագործման արդյունավետությունը, ինչպե՞ս են կանխվում շրջակա միջավայրին գործարարության հետևանքով թույլ տրված վնասները, որքանո՞վ են գործարարները նպաստում օգտագործվող մարդկային կապիտալի որակական կազմի ընդլայնմանը, և ինչպե՞ս է ապահովվում բիզնեսի ֆինանսական կառավարման արդյունավետությունը:

Կանաչ ձեռնարկատիրության արդյունավետության գնահատմանը կառավարչական տեսանկյունից կարող են ցուցաբերվել տարբեր մոտեցումներ, որոնք դրսևորվում են հիմնականում երկու ուղղությամբ՝ ֆինանսական և ոչ ֆինանսական: Եթե դիտարկվում է կանաչ ձեռնարկատիրության ոչ ֆինանսական կողմը, ապա այն հիմնվում է կայուն զարգացման սկզբունքների վրա: Իսկ երբ գնահատվում են ֆինանսական վերջնարդյունքները, ապա համադրվում են կանաչ ձեռնարկատիրության ծախսերն ու դրանցից բխող ուղղակի և այլընտրանքային եկամուտները, ընդ որում՝ ոչ միշտ է, որ բիզնես գործունեության այս տեսակը հանդես է գալիս զուտ եկամտով, և գործնականում կանաչ ձեռնարկատիրությունը կարող է նաև շահույթ չհետապնդել:

Տեսաբանների շրջանում կանաչ ձեռնարկատիրությունը հիմնականում ընկալվում է որպես շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական արդարության ապահովման, ռեսուրսարդյունավետության դիտանկյունից՝ շրջանցելով այդ գործունեության ֆինանսական կողմը: Սակայն կանաչ ձեռնարկատիրությունը, կայուն զարգացում ապահովելուց բացի, կարող է նաև թիրախավորվել կազմակերպությունների շա-

հույթի ավելացմանը, ընդ որում՝ այն կարող է գնահատվել ուղղակի և անուղղակի մոտեցմամբ: Առաջին դեպքում համադրման են ենթարկվում կանաչ ձեռնարկատիրության կազմակերպման ծախսերն ու դրանց առնչվող եկամուտները, իսկ երկրորդ դեպքում դիտարկվում են այն բարենպաստ ֆինանսական արդյունքները, որոնք ձևավորվում են կանաչ բիզնեսի հետևանքով: Այսպես, երբ կազմակերպությունները օգտագործում են անթափոն տեխնոլոգիաներ, ապա կատարում են լրացուցիչ ծախսեր վերադարձվող թափոնների հավաքագրման և վերամշակման ուղղությամբ՝ արդյունքում, իհարկե, ստանալով նաև հավելյալ եկամուտներ: Կամ կիրառելով կանաչ տեխնոլոգիաներ՝ կազմակերպությունները նվազեցնում են շրջակա միջավայրի աղտոտումը և դրա դիմաց կատարվող բնապահպանական հարկերն ու տուգանքների վճարումները:

Մեթոդաբանություն

Կազմակերպությունների կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունքների հաշվետվողականության արդյունքները վիճակագրությունում շատ սուղ են կամ գրեթե բացակայում են: Նման ցուցանիշները լրացուցիչ հաշվարկներով են ներկայացվում, որը մեր կողմից կատարվել է ՀՀ սննդամթերքի արդյունաբերության ոլորտում: Այդ նպատակով նախ դիտարկվել են ոլորտում տեղի ունեցած պատրաստի արտադրանքի իրացման շրջանառությունում գնեբեացված զուտ շահույթի տեսակարար կշռի ցուցանիշները, և այնուհետև դրանք համադրվել արդյունաբերական այդ ոլորտում վճարած բնապահպանական տուգանքների հետ, որոնք նույնպես հաշվարկվել են իրացման շրջանառության նկատմամբ (տե՛ս աղյուսակ 1): Այսպիսով՝ վերլուծական գնահատումների համար օգտագործվել են հարաբերական ցուցանիշներ՝ տեսակարար կշիռների տեսքով, որը հնարավորություն է ընձեռնում համեմատություններ իրականացնելու նաև արդյունաբերական այլ ճյուղերում իրականացվող կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական ցուցանիշների հետ:

Աղյուսակ 1.

ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների շահույթի և բնապահպանական վնասների տեսակարար կշռի շարժընթացը իրացման շրջանառությունում²


Տարիներ	Զուտ շահույթի տեսակարար կշիռը իրացման հասույթում (%)	Բնապահպանական տուգանքների տեսակարար կշիռը իրացման հասույթում (%)
2011	8	4
2012	12	3
2013	9	5
2014	11	1
2015	6	5
2016	4	0.4
2017	13	0.7
2018	15	2
2019	12	0.9
2020	7	0.7
2021	10	0.5
2022	11	0.3
2023	13	0.1

Կազմակերպությունների իրացման շրջանառությունում զուտ շահույթի և բնապահպանական տուգանքների ֆինանսական ցուցանիշների շարքերով (աղյուսակ 1) հաշվարկվել են համապատասխան միտումների գծային հավասարումներ և դրանց ներկայացման R squared Value of charts (տե՛ս գծապատկեր 2):

² Աղբյուրը՝ համաձայն ԱՎԾ տարեգրքերի:

Գծապատկեր 2.

Կազմակերպությունների իրացման շրջանառությունում զուտ շահույթի և բնապահպանական տուգանքների ֆինանսական ցուցանիշների տրենդը³



Մենդի վերամշակման ոլորտում գործող Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների զուտ շահույթի և բնապահպանական տուգանքների ֆինանսական հարաբերական ցուցանիշների շարքերով իրականացվել է գրաֆիկական վերլուծություն, որը հնարավորություն է ընձեռել համեմատական դաշտում գնահատելու կանաչ ձեռնարկատիրության և պրոֆիլային գործունեության արդյունքները՝ կատարելով համապատասխան եզրահանգումներ:

Հետազոտության արդյունքները

Կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունքների գնահատման ցուցիչ կարող է հանդես գալ կազմակերպությունների կողմից բնապահպանական տուգանքների տեսակարար կշիռը՝ իրացման շրջանառությունում: Եթե գործարարությունը ձգտում է ընդլայնման, ապա այդ պարագայում ֆինանսական առումով իրացման շրջանառության աճը համադրվում է շրջակա միջավայրի պահպանման ծախսերի հետ: Իսկ շրջակա միջավայրի պահպանման միջոցառումների ֆինանսական ար-


³ Կազմվել է՝ ըստ աղյուսակ 1-ի տվյալների:

դյունք կարող է հանդիսանալ նաև կազմակերպությունների կողմից բնապահպանական տուգանքների շարունակական կրճատումը: Հետևաբար, երբ կազմակերպությունների բիզնես գործունեության ընդլայնման արդյունքում շահույթի աճն ուղեկցվում է բնապահպանական տուգանքների կրճատմամբ, նման իրավիճակը վկայում է կանաչ ձեռնարկատիրության ակտիվացման մասին:

Հաշվի առնելով այս տեսակետը՝ մեր կողմից առաջարկվում է կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունավետությունը գնահատելիս համեմատելի դարձնել կազմակերպությունների իրացման շրջանառությունում զուտ շահույթի ու բնապահպանական տուգանքների փոփոխությունների միտումները և դրանց արդյունքները ներկայացնել գրաֆիկորեն (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3.

Կանաչ ձեռնարկատիրության ակտիվացումը՝ կազմակերպության զուտ շահույթի աճի նկատմամբ բնապահպանական տուգանքների նվազման տեմպերի առաջանցիկության պարագայում⁴




Այսպես՝ գծապատկեր 4-ի y_1 ֆունկցիան ներկայացնում է գործարարության ընդլայնման արդյունքում իրացման շրջանառությունում կազմակերպության զուտ շահույթի տեսակարար կշռի աճի տրենդը,

⁴ Կազմել է հեղինակը:

որտեղ հաստատուն գծային ֆունկցիայի ազատ անդամ b_1 -ն արտացոլում է վերլուծվող ցուցանիշի աճը: Իսկ y_2 ֆունկցիան ներկայացնում է գործարարության ընդլայնման արդյունքում իրացման շրջանառությունում կազմակերպության բնապահականական տուգանքների տեսակարար կշռի նվազման տրենդը, որտեղ հաստատուն գծային ֆունկցիայի ազատ անդամ b_2 -ն արտացոլում է վերլուծվող ցուցանիշի նվազումը: Հետևաբար, երբ դիտարկվում է բնապահականական տուգանքների տեսակարար կշռի նվազեցման տրենդային առաջանցիկություն զուտ շահույթի տեսակարար կշռի աճի նկատմամբ, ապա արձանագրվում է կազմակերպության կողմից կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունավետության աճ:

Գծապատկեր 4.

Կանաչ ձեռնարկատիրության հետընթացը՝ կազմակերպության զուտ շահույթի նկատմամբ բնապահականական տուգանքների աճի տեմպերի առաջանցիկության պարագայում⁵



Եվ հակառակը, երբ կազմակերպության գործարարության ընդլայնումը հանգեցնում է զուտ շահույթի տեսակարար կշռի աճին, սակայն

⁵ Կազմել է հեղինակը:

դրան գուգահեռ առաջանցիկության աճ է արձանագրվում բնապահ-
պանական տուգանքների վճարումներում (տե՛ս գծապատկեր 4),

$$\Delta y_{n+1} / \Delta y_n < 1.0$$

ապա արձանագրվում է, որ կազմակերպությունը հետընթաց է ապրում
կանաչ ձեռնարկատիրության կազմակերպման հարցում, ընդ որում՝
բնապահպանական տուգանքների և զուտ շահույթի տեսակարար
կշիռների հավելաճի կամ նվազման տրենդների արագությունը որոշվում
է արսիսների առանցքի հետ դրանց հատման a և b անկյունների մեծությ-
յունով (տե՛ս գծապատկերներ 3 և 4): Հետևաբար դիտարկվող գծային
ֆունկցիաներում այդ անկյունների տանգենս մեծությունները՝ որպես k_1 և
 k_2 ցուցիչներ, կարող են գնահատել կանաչ ձեռնարկատիրության ակտի-
վացման կամ հետընթացի արագությունները, եթե դրվեն համեմատությ-
յան մեջ:

Այսպես, գծապատկեր 2-ում բնապահպանական տուգանքների
տեսակարար կշռի փոփոխման տրենդի արագությունը գերազանցում է
զուտ շահույթի տեսակարար կշռի փոփոխման տրենդի արագությանը,
քանի որ մոդուլային արժեքով $k_2/k_1 > 1$: Իսկ դա ևս լրացուցիչ միջոց է
կանաչ ձեռնարկատիրության ընդլայնումը գնահատելիս:

Աղյուսակ 2.

*Կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունավետության
գրաֆիկական գնահատման սցենարներ*

Սցենարներ	Իրավիճակի ցուցիչներ		Իրավիճակի մեկնաբանումներ
	Կանաչ ձեռնարկատի- րության զարգացման տեմպը	Կանաչ ձեռնարկատի- րության զարգացման ուղղությունը	
Սցենար I	$k_2/k_1 > 1,0$	$\Delta y_{n+1} > \Delta y_n$	Կանաչ ձեռնարկատի- րության արագընթաց զարգացում
Սցենար II	$k_2/k_1 < 1,0$	$\Delta y_{n+1} > \Delta y_n$	Կանաչ ձեռնարկատի- րության կայուն զարգացում
Սցենար III	$k_2/k_1 < 1,0$	$\Delta y_{n+1} < \Delta y_n$	Կանաչ ձեռնարկատի- րության հետընթաց

Այսպիսով՝ կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունավետության գրաֆիկական գնահատման հետևյալ սցենարներն են առաջարկվում մեր կողմից (տե՛ս աղյուսակ 2):

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, առաջարկվող ցուցիչներով գնահատվում են կազմակերպությունների կողմից իրականացվող կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունավետությունը: Հարկ է նաև նշել, որ կանաչ ձեռնարկատիրության կազմակերպման արդյունավետությունը գնահատվում է նաև ոչ ֆինանսական տեղեկատվությամբ՝ օգտագործելով արդեն հրապարակվող ֆինանսական համապարփակ հաշվետվություններ, որոնք կարգավորվում են հաշվապահական հաշվառման միջազգային IFRS-S միջազգային ստանդարտներով:

Սահմանափակումներ

Կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունավետության գնահատման մեր կողմից առաջարկվող մեթոդաբանությանը հատուկ են մի շարք սահմանափակումներ:

1. Կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունավետության շրջանակն առավել ընդարձակ է, քան մեկ ցուցիչի օգտագործումը: Բնապահպանական տուգանքների տեսակարար կշիռը կազմակերպությունների իրացման շրջանառությունում, իհարկե, կատարում է կանաչ բիզնեսի գնահատման առանցքային դերակատարում, սակայն այն ամբողջական չի կարող արտացոլել կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական հետևանքները: Իրավիճակն առավել համապարփակ կգնահատվի, եթե համադրության մեջ դրվեն նաև կանաչ ձեռնարկատիրության կազմակերպման լրացուցիչ ծախսերն ու դրանց հետևող հավելյալ եկամուտները:
2. Բնապահպանական տուգանքների կրճատման և գործարարության զուտ շահույթի տեսակարար կշիռների համեմատական գնահատումները կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունքները գնահատելիս հաշվի չեն առնում գնային տատանումները, օրենսդրական փոփոխությունները, շուկայական արտաքին գործոնների ազդեցությունները, որոնք պետք է չեզոքացվեն կանաչ ձեռնարկատիրության ֆինանսական արդյունավետության վերլուծության ժամանակ:
3. Քանի որ ֆինանսական ցուցանիշները հաշվարկվում են զուտ շահույթի և բնապահպանական տուգանքների տրեւնդի ֆունկցիոնալ կա-

պի հիմքով, ապա գնահատման հավաստիությունը մեծապես կախված է տրենդի դրսևորումներից, որը ոչ միշտ է լիարժեքորեն ներկայացնում իրավիճակը:

Եզրակացություններ

Կանաչ ձեռներեցությունը կազմակերպման արդյունավետությունը հիմնականում դիտարկում է ոչ ֆինանսական ձեռքբերումների տեսանկյունից, երբ գործնականում գնահատականներ են տրվում բիզնեսի կողմից շրջակա միջավայրի վրա բացասական ներազդեցության կրճատումների ուղղությամբ: Սակայն կանաչ ձեռներեցությունը, համարվելով բիզնեսի առանձնահատուկ ոլորտ, նույնպես կարիք ունի ֆինանսական և տնտեսական վերջարդյունքներով գնահատումների: Այս առումով անհրաժեշտություն է ծագում համադրելու ավանդական գործունեության ֆինանսատնտեսական արդյունքները՝ կազմակերպությունների կանաչ ձեռներեցության արժեքային ցուցանիշների հետ: Նման պահանջը բավարարելու համար արդիական է համարվում այնպիսի ֆինանսական ցուցիչների մշակումն ու գործնական կիրառումը, որով հնարավորություն է ստեղծվում ֆինանսապես չափելու շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ կազմակերպության ձեռքբերումները և դրանք համադրելի դարձնելու բիզնեսի պրոֆիլային գործունեության հետ: Ավելին, կանաչ ձեռներեցության ֆինանսական արդյունավետության ցուցիչները պետք է կիրառելի լինեն համեմատական վերլուծությունների ժամանակ այնպես, որ համադրելի դառնան ոչ միայն միևնույն արտադրական ճյուղի, այլև տնտեսության մյուս ոլորտներում կազմակերպվող կանաչ ձեռներեցության ֆինանսատնտեսական արդյունքային ցուցանիշները: Այս առումով նպատակահարմար են բնապահպանական տուգանքների և զուտ շահույթի փոփոխման միտումների համադրումները կազմակերպությունների իրացման շրջանառության կազմում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Arbidane, I., Khachatryan, N., Martirosyan, N., Issues of Accounting information disclosure for ecosystem services, Economic, Finance and Accounting journal, № 2, 2023, pp: 87-108.
2. Bortolini Marco, Enhancing Stock Efficiency and Environmental Sustainability Goals in Direct Distribution Logistic Networks,

- International Journal of Advanced Operations Management, vol. 11, №1–2, 2019, pp: 8–25.
3. **Hakobyan A., Tshughuryan A., Martirosyan G.**, The integrated reporting philosophy in business strategy, *Wisdom*, № 1 (25), 2023, pp: 174–175.
 4. **Magon, Renata Bianchini**, Sustainability and Performance in Operations Management Research, *Journal of Cleaner Production*, vol. 190, Elsevier Ltd, 2018, pp: 104–17.
 5. **Mnactsakanyan H., Gasparyan V.**, The issues of accounting information for sustainable bussines development, *Economics, Finance and Accounting*, vol. 2, № 12, 2023, pp: 45–56.
 6. **Mustapha, Mohamad Asrul**, Sustainable Green Management System (SGMS) – An Integrated Approach towards Organisational Sustainability, *Journal of Cleaner Production*, vol. 146, Elsevier Ltd, 2017, pp: 158–72.
 7. General Requirements for Disclosure of Financial Information Related to Sustainability, 2023, <https://www.ifrs.org/content/dam/ifrs/project/general-sustainability-related-disclosures>
 8. **Famiyeh Samuel**, Green Supply Chain Management Initiatives and Operational Competitive Performance. Benchmarking, vol. 25, № 2, 2018, pp: 607–31.
 9. **Raharjo, Kusdi**, The Role of Green Management in Creating Sustainability Performance on the Small and Medium Enterprises, *Management of Environmental Quality: An International Journal*, vol. 30, № 3, 2019, pp: 557–77.
 10. **Raut, Rakesh D.**, Examining the Performance Oriented Indicators for Implementing Green Management Practices in the Indian Agro Sector. *Journal of Cleaner Production*, vol. 215, Elsevier Ltd, 2019, pp: 926–43.
 11. **Sala S., Ciuffo B. and Nijkamp P.**, A systemic framework for sustainability assessment, *Ecological Economics*. Elsevier, 119, 2015, pp: 314–325.
 12. **Schaltenbrand Birte**, See What We Want to See? The Effects of Managerial Experience on Corporate Green Investments, *Journal of Business Ethics*, vol. 150, № 4, Springer Netherlands, 2018, pp: 1129–50.
 13. **Savastano M., Samo A. H., Channa N. A. & Amendola, C.**, Toward a conceptual framework to foster green entrepreneurship growth in the agriculture industry. *Sustainability*, № 7 (14), 2022, pp: 2–16.
 14. **Sachini Senadheera, Yong Sik**, The development of research on environmental, social, and governance (ESG): A bibliometric analysis, *Sustainable Environment*, vol. 8, № 1, 2022.

15. Shu, Chengli, How Green Management Influences Product Innovation in China: The Role of Institutional Benefits, Journal of Business Ethics, vol. 133, № 3, 2016, pp: 471–85.
16. Sulich A. and Rutkowska M., Factor analysis of the green management in the context of Poland regions sustainable development, in Experimental and Quantitative Methods in, 2020.
17. Contemporary Economics: Computational Methods in Experimental Economics (CMEE) 2018 conference, pp: 143–156.
18. Tshughuryan A., Khachatryan N., Ecosystem services financial management information security issues, History and politics, scientific journal, № 2(25), 2023, pp: 71-94.
19. Tshughuryan A., Savastano M., Audit for green business ecosystem operation, Economics, finance and accounting, scientific journal, № 1(13), 2024, pp: 85-95.

ПУТИ ФИНАНСОВОГО КОНТРОЛЯ ЗЕЛЕННОГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА

Армен Джугурян

Северный университет, доктор экономических наук

Оценкам финансовых последствий «зеленого» предпринимательства уделяется гораздо меньше внимания на практике и в научных кругах, чем фактическим результатам устойчивого развития, которые возникают в результате этого. Зеленое предпринимательство в основном рассматривается как мера с точки зрения защиты окружающей среды, и в этом направлении проводятся различные оценки, организации представляют бенефициарам различные отчеты. Однако методы и подходы финансовой оценки зеленого предпринимательства до сих пор не доработаны, поскольку зеленое поведение организаций может вызвать не только благоприятные экологические последствия, но и положительные финансовые результаты. В статье представлены новые подходы к методологии оценки финансовой эффективности зеленого предпринимательства, предложены финансово-экономические измерения зеленого поведения организаций и основанные на них финансовые оценки устойчивого развития.

Ключевые слова: зеленое предпринимательство, бенефициары устойчивого развития, финансовый контроль, графический анализ, тенденции финансовых показателей.

WAYS OF FINANCIAL CONTROL OF GREEN ENTREPRENEURSHIP

Armen Tshughuryan

Northern University, Doctor of Economics

Assessments of the financial implications of green entrepreneurship receive much less attention in practice and academia than the actual sustainable development outcomes that result from it. Green entrepreneurship is mainly considered as a measure in terms of environmental protection, and in this direction, various assessments are made, various reports are presented to the beneficiaries by the organizations. However, the methods and approaches of financial evaluations of green entrepreneurship are still not completed, in the event that green behavior displayed by organizations can cause not only favorable environmental consequences, but also positive financial results. The article presents new approaches to the methodology of evaluating the financial efficiency of green entrepreneurship, proposing financial and economic measurements of green behavior by organizations, and financial evaluations of sustainable development based on them.

Keywords: green entrepreneurship, beneficiaries of sustainable development, financial control, graphic analysis, trends of financial indicators.

**«ԿԱՆԱՉ ՆՈՐԱՄՈԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սվետլանա Կարապետյան

Հյուսիսային համալսարան, մանկավարժական գիտությունների
թեկնածու

sveta.karapetyan@yahoo.com

Համառոտագիր

«Կանաչ նորամուծությունները» ներկայումս դասվում են կառավարման առաջնահերթությունների շարքին: Թեպետ այդ նորամուծությունները հիմնականում չեն ապահովում լրացուցիչ շահույթ, սակայն նպաստում են գործարարության բարի համբավի ձևավորմանը և շուկայում կազմակերպությունների մրցակցային դիրքերի ամրապնդմանը: Հոդվածում վերլուծվում են «կանաչ նորամուծությունների» կառավարման առանձնահատկությունները և ներկայացվում են առաջարկություններ կայուն զարգացմանը նպաստող նորարարական գործառնությունների կառավարչական գործառնությունների գծով՝ կազմակերպության բիզնես մոդելի արժեքային շղթայում:

***Հիմնաբառեր՝** կայուն զարգացում, «կանաչ նորամուծություններ», նորարարությունների արժեքը, կառավարում, կառավարչական որոշումներ, «կանաչ գործարարության» շահադրդում:*

Ներածություն


«Կանաչ նորամուծությունների» կառավարումը գործնականում հանդես է գալիս մի շարք առանձնահատկություններով և որոշակիորեն տարբերվում է գործարարության ավանդական կառավարումից: Առաջին տարբերակիչ հատկանիշների թվին են դասվում «կանաչ նորամուծությունների» կառավարման նպատակադրումները: Այստեղ առաջնահերթություն չի համարվում գործարարության ոլորտում իրականացվող նորամուծություններից շահույթի ձևավորման գործընթացի կազմակերպումն ու վերահսկողությունը, քանի որ «կանաչ նորամուծությունների» բուն նպատակը հիմնականում ոչ թե տնտեսական, այլ բնապահպանական շահն է, ուստի «կանաչ նորամուծությունները» կառավարելիս խնդիր է դրվում գնահատելու կիրառվող նորարարությունների դրական ազդեցությունը շրջակա միջավայրի պահպանության, տնտեսության կայուն զարգացման վրա: Այս առումով կարևորվում է կառավարման տեսանկ-

յունից «կանաչ նորամուծությունների» հետևանքով ձևավորվող արժե-
շղթայի դիտարկումը, ձևավորվող դրական և բացասական արդյունքների
գնահատումը, ինչպես նաև բնապահպանական միջոցառումների շահա-
դրման լծակների վերահանումը:

Հետազոտության արդյունքներ

Շուկայում մրցակցային դիրքերի ապահովումը բնավ չէր կարող իրա-
կանացվել, եթե ձեռնարկատերերը շարունակաբար չդիմեին նորամու-
ծությունների, և ի տարբերություն ավանդական գործարարների՝ իրենց
վրա չվերցնեին տնտեսավարման լրացուցիչ ռիսկեր: Ձևավորվող այս
իրավիճակը հստակ բնորոշվեց ձեռներեցության զարգացման երրորդ
փուլում (տե՛ս գծապատկեր 1), երբ ձեռնարկատիրությունը զուգորդվեց
նորամուծական ռիսկերով և ստեղծարար մտքերի կիրառական դրսևո-
րումներով, որոնք, լրացուցիչ շահույթներ ապահովելուց բացի, ունեին
նաև տնտեսավարման վնասների ձևավորման ռիսկեր⁶:

*Գծապատկեր 1.
Ձեռնարկատիրական գործունեության
զարգացման փուլերը⁷*



⁶ Տե՛ս **Tshughuryan A., Khachatryan N.**, Ecosystem services financial management information security issues, History and politics, scientific journal, № 2 (25), 2023, pp: 71-94:

⁷ Տե՛ս **Sala S., Ciuffo B. and Nijkamp P.**, A systemic framework for sustainability assessment, Ecological Economics. Elsevier, 119, 2015, pp: 314-325:

Սակայն այս ամենը չէր խանգարում ձեռնարկատերերին գնալ ռիսկի և հետապնդելով մասնավոր շահեր՝ երբեմն գերշահույթների հաշվին փոխհատուցել վնասները:

Ձեռնարկատիրությունը ներկայումս թևակոխում է կայուն զարգացման փուլ, որը ենթադրում է ոչ միայն տնտեսվարողների մասնավոր շահերի բավարարում, այլև տնտեսական գործունեության արդյունքների նկատմամբ հանրային վերաբերմունքի գնահատում⁸: Այս դեպքում արդեն ձեռնարկատիրության կողմից հավելյալ արդյունքների կազմում ընդգրկվում են ոչ միայն մասնավոր տնտեսական օգուտները, այլև հանրային շահեր հետապնդող այն արդյունքները, որոնք ուղղված են բնապահպանությանը, մարդկային կապիտալի որակական աճին, գործարարության սոցիալական վստահության միջավայրի ձևավորմանը, կառավարման արդյունավետ համակարգին⁹:

«Կանաչ նորամուծության» եզրույթը տնտեսագիտական համայնքում թերևս սկսեց ակտիվ շրջանառվել 21-րդ դարի սկզբին, երբ տնտեսական գործունեության կողմից շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության ռիսկերի կանխարգելման հիմնախնդիրներն առավել ակնհայտ դարձան: Բնականաբար մինչ այդ բնապահպանական լուծումները միշտ էլ գտնվել են հանրության ուշադրության կենտրոնում, երբ շարունակաբար հարցադրումներ էին կատարվում, թե ինչպես լուծել ջերմոցային գազերի արտանետումների, վնասակար թափոնների արդյունավետ կառավարման, վերականգնվող էներգիայի օգտագործման խնդիրները: Ներկայումս այդ հարցադրումները փոխադրվեցին նաև կանաչ ձեռնարկատիրության ոլորտ, որտեղ ընդգծված ձևով ավանդական գործարարությունը սկսեց փոխհամագործակցության եզրեր փնտրել շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված ձեռներեցության հետ¹⁰:

Կանաչ ձեռնարկատիրությունը չի ենթադրում սոսկ բնապահպանություն. այն առավել ընդգրկուն է և գործում է կանաչ տնտեսավարման

⁸St' u **Mustapha, Mohamad Asrul**, Sustainable Green Management System (SGMS) – An Integrated Approach towards Organisational Sustainability, Journal of Cleaner Production, vol. 146, Elsevier Ltd, 2017, pp: 158–72:

⁹St' u **Raharjo, Kusdi**, The Role of Green Management in Creating Sustainability Performance on the Small and Medium Enterprises, Management of Environmental Quality: An International Journal, vol. 30, № 3, 2019, pp: 557–77:

¹⁰St' u **Famiyeh Samuel**, Green Supply Chain Management Initiatives and Operational Competitive Performance. Benchmarking, vol. 25, № 2, 2018, pp: 607–31:

էկոհամակարգում: Այստեղ առանցքային դերակատարումով են հանդես գալիս «կանաչ» մարքեթինգը, մենեջմենթը, ֆինանսավորումն ու կրթությունը, առանց որոնց ներդաշնակ կիրառման պարզապես արդյունավետ չի գործի կանաչ ձեռնարկատիրությունը¹¹: Միաժամանակ իր կարևորությունն է ստանում «կանաչ նորամուծությունների» արդյունավետ կառավարումը:

«Կանաչ նորամուծությունների» կառավարման հիմնական նպատակը շրջակա միջավայրի պաշտպանությանն աջակցելն է, որը հաշվի է առնվում գործարարության կայուն զարգացման ծրագրերում: Ընդհանուր առմամբ բիզնեսում նորամուծությունը ստեղծարար մտքի գեներացումն է այնպես, որպեսզի ստեղծվի վաճառահանվող նոր արտադրանք կամ ծառայությունների տեսակ՝ նպատակ ունենալով շուկայում ամրապնդելու կազմակերպության մրցունակությունը, բարձրացնելու արտադրողականությունը, բարելավելու թողարկման որակը: «Կանաչ նորամուծությունների» պարագայում բիզնես նպատակադրումներն էապես փոխվում են, քանի որ այս դեպքում հիմնական թիրախը դառնում է կայուն զարգացման ապահովումը, շրջակա միջավայրի պահպանությունը¹²:


Այս առումով կառավարումը նախևառաջ գնահատում է, թե կազմակերպությունը որքան ներուժ ունի կանաչ նորամուծությունների իրականացման համար (տե՛ս գծապատկեր 2):

¹¹ Տե՛ս **Karapetyan S., Khachatryan N.**, Methodological issues of organization green education, Education in the 21st Century, vol. 11, № 1, 2024, pp: 45-54:

¹² Տե՛ս **Mnactsakanyan H., Gasparyan V.**, The issues of accounting information for sustainable bussines development, Economics, Finance and Accounting, vol. 2, № 12, 2023, pp: 45-56:

Գծապատկեր 2.

«Կանաչ նորամուծությունների» կառավարման շրջանակը¹³



Իսկ այդ ներուժը կարող է բազմապեկտոր ուղղություններ ունենալ, ինչպիսիք են այլընտրանքային էներգիայի օգտագործումը, ռեսուրսա-խնայող տեխնոլոգիաների շահագործումը, վնասաբեր արտանետումների կրճատումը, շրջանաձև տնտեսության կազմակերպումը և այլն, ընդ որում՝ կազմակերպություններում «կանաչ նորամուծությունները» կարող են չտեղայնացվել և ուղղակիորեն չդրսևորվել, սակայն խթանիչ դեր կատարել կայուն զարգացման արժեշղթայի ձևավորման գործում¹⁴:

Այսպես, ծաղիկների աճեցման ջերմոցային տնտեսությունում կիրառում են սնուցման նոր տեխնոլոգիաներ, երբ բույսերի արմատները սնվում են ոչ թե հողից, այլ ջերմոցում շրջանաձև հոսող առվակներում տեղակայումից, որոնք պարունակում են բազմաթիվ քիմիկատներ: Այս նորամուծության արդյունքում շեշտակիորեն բարձրանում է ծաղիկների բերքատվությունը, սակայն տեխնոլոգիական թափոնների կառավարման, այսինքն՝ քիմիկատներով հագեցված սնուցող ջրի վնասագերծման հարց է

¹³ Կազմվել է հեղինակը:


¹⁴ St' u Savastano M., Samo A. H., Channa N. A., & Amendola C., Toward a conceptual framework to foster green entrepreneurship growth in the agriculture industry. Sustainability, № 7 (14), 2022, pp: 2-16:

առաջանում: Հետևաբար ջերմոցային տնտեսությունը սարքաշինական գործարանին պատվիրում է հատուկ նորամուծական ֆիլտրեր, որոնք ջրից կորզում են թունավոր քիմիկատներ և հնարավորություն ստեղծում մաքրված ջուրը օգտագործելու ռոտացիոն նպատակներով:

Այնուհանդերձ կանաչ նորամուծությունների արժեզրթան այս- քանով չի ավարտվում, քանի որ կորզված թունաքիմիկատները հավաքա- գրվում և ուղարկվում են նոր տեխնոլոգիաներով վերամշակման անօր- գանական քիմիայի ինստիտուտ՝ դպրոցական լաբորատորիաներում ուսումնական նորարարական փորձերի կիրառելու համար: Եվ ստաց- վում է այնպես, որ «կանաչ նորամուծությունը» անմիջապես չի դրսևոր- վում ջերմոցային տնտեսությունում, որտեղ կիրառվում է բիզնեսի խթան- ման նպատակով ծաղիկների սնուցման նորագույն տեխնոլոգիան, սա- կայն վերջինս ջերմոցային տնտեսությունից դուրս նորարարությունների արժեզրթա է ձևավորում (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3.

«Կանաչ նորամուծությունների» արժեզրթա ¹⁵



Հետևաբար «կանաչ նորամուծությունների» արդյունքների կառա- վարման մոնիտորինգը կարող է իրականացվել նաև կազմակերպության սահմաններից դուրս՝ պարզելու համար, թե նորարարական միջոցա- ռումները ինչպիսի արժեհամակարգ են ձևավորում¹⁶: Եթե մեր օրինակում ջրային քիմիկատների լուծույթներով ծաղիկների սնուցումը բիզնես

¹⁵ Կազմել է հեղինակը:

¹⁶ Տե՛ս **Raut, Rakesh D.**, Examining the Performance Oriented Indicators for Implementing Green Management Practices in the Indian Agro Sector, Journal of Cleaner Production, vol. 215, Elsevier Ltd, 2019, pp: 926–43:

նորամուծություն է դիտարկվում, քանի որ դրա շնորհիվ բարձրանում է տնտեսավարման արտադրողականությունը, ապա մյուս կողմից այն ռիսկային է համարվում բնապահպանության առումով, քանի որ թունաքիմիկատներով հագեցած ջուրը համարվում է վնասակար թափոն, և դրա համար վճարվում են միայն բնապահպանական տուգանքներ: Իսկ երբ այդ նորամուծության արդյունքում ձևավորվում է կանաչ գործարարության արժեքը, ապա կառավարման առջև խնդիր է դրվում մոնիտորինգի ենթարկելու և գնահատելու վերջինիս գործունեությունը: Այս դեպքում արդեն կառավարիչների կողմից «կանաչ նորամուծությունների» ներուժը գնահատելիս համադրում են տեսանելի արժեքը՝ առաջացնելով դրական և բացասական տնտեսական արդյունքները¹⁷:

«Կանաչ նորամուծությունների» կառավարման գործառույթներում առանցքային է համարվում նաև շահադրդումը¹⁸: Որպես կանոն՝ այդ նորամուծությունները շահույթ չեն հետապնդում և դժվարությամբ են իրենց գործնական կիրառելիությունը ստանում, ուստի «կանաչ նորամուծությունների» ներուժը դիտարկելիս (տե՛ս գծապատկեր 2) կառավարիչները գնահատում են նորարարական գաղափարների շահադրդման հնարավոր ուղղությունները, որոնք կարող են ձևավորվել «ներքին» կամ «վերին»։ Դիցուք՝ մեր օրինակում ծաղիկները սնուցող ջրերի ֆիլտրացիայի «կանաչ նախաձեռնության» շահադրդում կարող է իրականացվել ջերմոցային տնտեսության կողմից, եթե սարքաշինական գործարանին տրվի ֆիլտրերի պատվեր՝ հավելյալ գնով: Եվ իր հերթին քիմիայի ինստիտուտը դպրոցի լաբորատորիային վերամշակած թունաքիմիկատները վաճառի դպրոցի լաբորատորիային գեղջված գներով:

Այնուհանդերձ «կանաչ նորամուծությունների» իրականացման շահադրդումը կարող է ձևավորվել նաև «վերին», երբ պետությունը հարկային արտոնություններ տրամադրի սարքաշինական գործարանին բնապահպանական ֆիլտրեր արտադրելիս, կամ քիմիայի ինստիտուտին՝ վնասակար թափոնները վերամշակելիս: Ավելին, ջերմոցային

¹⁷ Տե՛ս **Schaltenbrand B.**, See What We Want to See? The Effects of Managerial Experience on Corporate Green Investments, Journal of Business Ethics, vol. 150, № 4, Springer Netherlands, 2018, pp:1129–50:

¹⁸ Տե՛ս **Sachini S., Yong Sik**, The development of research on environmental, social, and governance (ESG): A bibliometric analysis, Sustainable Environment, vol. 8, № 1, 2022:

տնտեսությունը կարող է տնտեսապես շահել, երբ ծաղիկների աճեցման նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում թողարկման աճի ծավալներին զուգընթաց կրճատվեն ջրի ֆիլտրացիայի արդյունքում ձևավորվող բնապահպանական տուգանքները, որը նույնպես կառավարիչները պետք է հաշվի առնեն «կանաչ նորամուծությունների» արժեզրթան պլանավորելիս (տե՛ս գծապատկեր 2)¹⁹:

Եզրակացություն

«Կանաչ նորամուծությունների» կառավարումը չպետք է դիտարկել լոկալացված՝ սահմանափակելով այն սոսկ կազմակերպության ներսում: Գործնականում կարող են հաճախ հանդիպել դեպքեր, երբ իրականացվող նորամուծություններն անմիջականորեն չդրսևորվեն կազմակերպության շրջանակում, սակայն ազդեցիկ լինեն վերջինիս բիզնես մոդելի ձևավորման վրա²⁰: Նպատակահարմար ենք համարում «կանաչ նորամուծությունների» կառավարումը դիտարկել կազմակերպության բիզնես մոդելի արժեզրթայի տիրույթում, որը հնարավորություն կընձեռի իրականացնելու էկոնորամուծությունների գծով ողջամիտ կառավարչական որոշումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Karapetyan S., N. Khachatryan N.**, Methodological issues of organization green education, Education in the 21st Century, vol. 11, 1, 2024, pp: 45-54.
2. **Mnactsakanyan H., Gasparyan V.**, The issues of accounting information for sustainable bussines development, Economics, Finance and Accounting, vol. 2, №12, 2023, pp: 45-56.
3. **Mustapha, Mohamad Asrul**, Sustainable Green Management System (SGMS) – An Integrated Approach towards Organisational Sustainability, Journal of Cleaner Production, vol. 146, Elsevier Ltd, 2017, pp: 158–72.
4. **Famiyeh Samuel**, Green Supply Chain Management Initiatives and Operational Competitive Performance. Benchmarking, vol. 25, № 2, 2018, pp: 607–31.

¹⁹ Տե՛ս **Tshughuryan A., Savastano M.**, Audit for green business ecosystem operation, Economics, finance and accounting, scientific journal, № 1 (13), 2024, pp: 85-95:

²⁰ Տե՛ս **Shu, Chengli**, How Green Management Influences Product Innovation in China: The Role of Institutional Benefits, Journal of Business Ethics, vol. 133, № 3, 2016, pp. 471–85:

5. **Raharjo, Kusdi**, The Role of Green Management in Creating Sustainability Performance on the Small and Medium Enterprises, Management of Environmental Quality: An International Journal, vol. 30, № 3, 2019, pp: 557–77.
6. **Sala S., Ciuffo B. and Nijkamp P.**, A systemic framework for sustainability assessment', Ecological Economics. Elsevier, 119, 2015, pp: 314–325.
7. **Schaltenbrand Birte**, See What We Want to See? The Effects of Managerial Experience on Corporate Green Investments, Journal of Business Ethics, vol. 150, № 4, Springer Netherlands, 2018, pp: 1129–50.
8. **Savastano, M., Samo, A. H., Channa, N. A., & Amendola, C.**. Toward a conceptual framework to foster green entrepreneurship growth in the agriculture industry. Sustainability, № 7(14), 2022, pp: 2-16.
9. **Sachini Senadheera, Yong Sik**. The development of research on environmental, social, and governance (ESG): A bibliometric analysis, Sustainable Environment, vol. 8, № 1, 2022.
10. **Shu, Chengli**, How Green Management Influences Product Innovation in China: The Role of Institutional Benefits, Journal of Business Ethics, vol. 133, № 3, 2016, pp. 471–85.
11. **Raut, Rakesh D.**, Examining the Performance Oriented Indicators for Implementing Green Management Practices in the Indian Agro Sector, Journal of Cleaner Production, vol. 215, Elsevier Ltd, 2019, pp. 926–43.
12. **Tshughuryan A., Khachatryan N.**, Ecosystem services financial management information security issues, History and politics, scientific journal, № 2(25), 2023, pp. 71-94.
13. **Tshughuryan A., Savastano, M.**, Audit for green business ecosystem operation Economics, finance and accounting, scientific journal, № 1(13), 2024, pp: 85-95.

ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ "ЗЕЛЕНЫМИ ИННОВАЦИЯМИ"

Светлана Карапетян

Северный университет, кандидат педагогических наук

"Зеленые инновации" в настоящее время входят в число приоритетов руководства. Хотя эти инновации в целом не приносят дополнительной прибыли, они способствуют формированию хорошей репутации бизнеса и укреплению конкурентных позиций организаций на рынке. В статье проанализированы особенности управления "зелеными инновациями" и представлены предложения по управленческим функциям инновационной деятельности, способствующим устойчивому развитию в цепочке создания стоимости бизнес-модели организации.

Ключевые слова: устойчивое развитие, "зеленые инновации", стоимостная цепочка инноваций, менеджмент, управленческие решения, выгода "зеленого бизнеса".

FEATURES OF "GREEN INNOVATIONS" MANAGEMENT

Svetlana Karapetyan

Northern University, candidate of pedagogical sciences

"Green innovations" are currently among the management's priorities. Although these innovations generally do not provide additional profit, they contribute to the formation of a good reputation of business and the strengthening of the competitive positions of organizations in the market. The article analyzes the features of the management of "green innovations" and presents suggestions on the managerial functions of innovative activities contributing to sustainable development in the value chain of the organization's business model.

Keywords: sustainable development, "green innovations", innovation value chain, management, managerial decisions, interest in "green business".

ISSUES IN SUSTAINABLE DEVELOPMENT AUDITING

Lusine Arustamyan

Northern University, PhD student

Lusinearustamyan758@gmail.com

Abstract: The present research deals with the role of sustainable development in the economy, the essence and specifications of sustainable development in audit as well as the possibilities for including data on sustainable development in financial reports.

Keywords: *financial reporting, sustainable development, auditing, IFRS-S standards.*

Introduction: The word "audit" is derived from the Latin verb "audire," meaning "to hear" or "listen." In medieval Latin, "audire" became "auditus," which meant "hearing" or "listening." From this root, various related meanings and derivatives arose over time such as:

- **Auditare (Latin):** This verb meant "to hear, listen to attentively." It forms the basis for the English word "audit" ²¹.
- **Auditus (Latin):** This noun referred to "a hearing" or "a listening," and in medieval Latin, it came to denote a formal examination of accounts.
- **Middle English:** The word "audit" entered Middle English from Old French "auditer," which meant "to hear" or "to listen" ²².
- **Early Usage:** By the late 14th century, "audit" was used in English to describe a formal examination of accounts, records, or transactions to verify their accuracy and correctness. This usage has persisted to the present day in the context of financial audits and other types of audits.

Results

Hence, the origin of the term "audit" may be traced back to its initial connection with the practice of attentive listening and scrutiny, which gradually transformed into a formal assessment or study of financial or other documents. Every procedure is executed with the aim of achieving the ultimate

²¹ Online Etymology Dictionary, www.etymonline.com.

²² Oxford English Dictionary, www.oed.com.

goals. The United Nations has established 17 Sustainable Development Goals (SDGs) to tackle worldwide challenges and achieve a more promising and sustainable future for everyone. The topics are addressed to encompass a broad spectrum of concerns, such as poverty, inequality, climate change, environmental degradation, peace, and justice. In order to conduct a comprehensive study on the audit of sustainable development, it is imperative to emphasize the primary objectives of sustainable development. Here are the following:

1. **No Poverty:** Eliminate the poverty in all its manifestations globally.
2. **Zero Hunger:** Reduce hunger, attain food security and enhanced nutrition, and foster sustainable agriculture.
3. **Good Health and Well-being:** Ensure healthy lifestyles and promote well-being for individuals of all ages.
4. **Quality Education:** Ensure that quality education is inclusive and equitable, and encourage lifelong learning opportunities.
5. **Gender Equality:** Establish gender equality and empower girls and women.
6. **Clean Water and Sanitation:** Ensure availability and sustainable management of water and sanitation.
7. **Affordable and Clean Energy:** Ensure access to affordable, reliable, sustainable, and modern energy.
8. **Decent Work and Economic Growth:** Promote sustained, inclusive, and sustainable economic growth, full and productive employment, and decent work.
9. **Industry, Innovation, and Infrastructure:** Build resilient infrastructure, promote inclusive and sustainable industrialization, and foster innovation.
10. **Reduced Inequality:** Reduce inequality within and among countries.
11. **Sustainable Cities and Communities:** Make cities and human settlements inclusive, safe, resilient, and sustainable.
12. **Responsible Consumption and Production:** Maintain sustainable consumption and production practices.
13. **Climate Action:** Take urgent action to combat climate change and its impacts.

14. **Life Below Water:** Maintain and wisely utilize the oceans, seas, and marine resources to promote sustainable development.
15. **Life on Land:** Protect, restore, and promote environmentally friendly utilization of terrestrial ecosystems, manage forests sustainably, battle desertification, halt and reverse land degradation, and prevent biodiversity loss.
16. **Peace, Justice, and Strong Institutions:** Promote peaceful and inclusive societies for long-term development, ensure access to justice, and establish effective, responsible, and inclusive institutions at all levels.
17. **Partnerships for the Goals:** Strengthen the implementation procedures and revive global partnerships for sustainable development²³.

These aims are interrelated and seek to balance social, economic, and environmental sustainability.

Financial auditing has typically focused on ensuring the accuracy of financial accounts published by corporations.

However, as financial reports typically include not just financial information but also declarations about sustainable development and other elements of organizational operations, auditors are increasingly tasked with determining the accuracy of these larger claims. This broader breadth assures that stakeholders obtain reliable information about an organization's financial stability as well as its commitments to sustainability and social accountability. Thus, modern auditing techniques include a thorough examination of both financial and non-financial data to provide an extensive overview of organizational performance.

The IFRS S1 standard addresses the disclosures related to imperishable financial information. The main objective of IFRS S1 is to require an entity to provide information regarding its sustainability-related risks and opportunities that are beneficial for the primary consumers of financial reports in making resource allocation decisions for the entity.

IFRS S1 was issued in June 2023 and applies to annual reporting periods beginning on or after January 1, 2024. External and internal influences have a significant impact on the organization's activities. Identifying and controlling the risks posed by these elements will help to ensure the organization's

²³United Nations, Department of Economic and Social Affairs, Sustainable Development, [Sustainable Development \(un.org\)](https://un.org/sustainabledevelopment).

continuous activities. IFRS S1 provides requirements for developing and reporting an entity's sustainability-related financial disclosures. It establishes the broad requirements for the content and presentation of these disclosures, ensuring that the information given can be useful to primary users in making decisions about resource allocation choices for the entity.

As is known, items are presented in monetary terms in financial statements and thus describe the value of the item. Currently, following the requirements of IFRS S1, organizations are obliged to present appropriate items in the financial statements for the purposes of sustainable development disclosures. Organizations might confront a range of challenges because the vast majority of the given information reveals that sustainable development is not quantitative or financial.

To address this issue, accounting approach and structure should be considered. In addition to the difficulty of expressing information in monetary terms in financial statements, sorting and segregating that information is also challenging. The formed unified system will allow for the presentation of the means used for ensuring sustainable development, predicting and controlling risks, and including them in the organization's unified accounting software system, as well as the completion of the data collection and reflection stages in the process of preparing financial reports.


International standards require firm annual reports to include essential disclosures related to financial information and sustainable development. However, no analytical methodologies for quantitatively comparing financial and non-financial metrics are offered. If all indicators in traditionally published financial reports are presented in a dram form and become comparable (expenditure, income, profit, etc.), the non-financial indicators appear in different measures (kg, centimeter, liter, cubic meter, etc.), making it difficult to assess the value arising from the organization's activity that promotes sustainable development and financial results in one field²⁴.

Financial statements should reflect information that is relevant, comprehensible and expresses a complete opinion about the item in question. By combining information related to the organization's overall performance and

²⁴ **Hakobyan A., Tshughuryan A., Martirosyan G.**, The integrated reporting philosophy in business stragey, *Wisdom*, №1(25), 2023, pp. 173.

sustainable development findings in one financial report, we must also ensure that the report is appropriate for the users of the report.

Figure 1: Consolidation of financial and non-financial items



To consolidate the information in financial statements, it is more appropriate to bring non-financial indicators into the financial field and express them in monetary terms. Applying the appropriate coefficient, unit of measurement, rate for each article. For example, human factors can be expressed in terms of man-hours. And using the same principle on other articles, we will be able to get as accurate, comparable and understandable information as possible and reveal sustainable development in financial reports.

Conclusion

The primary goal of a sustainability audit is to give credible data. An audit investigates the process of sustainable development management to determine its performance. Each organization has a plan that is essential for starting the process. The existence of a sustainable development strategy is also a vital criterion for the organization, and the audit examines the strategy's suitability and accuracy.

During the sustainability audit, the sustainability risks and opportunities presented in the financial statements are also excluded.

REFERENCES

1. IFRS S1, [www.ifrs.org/issued standards](http://www.ifrs.org/issued-standards).
2. Online Etymology Dictionary, www.etymonline.com.
3. Oxford English Dictionary, www.oed.com.
4. **Hakobyan A., Tshughuryan A., Martirosyan G.**, The integrated reporting philosophy in business strategy, Wisdom, № 1(25), 2023, pp: 173.
5. **Thshuguryan A., Grigoryan**, Green entrepreneurship audit, Text Book, Yerevan, 2024.
6. United Nations, Department of Economic and Social Affairs, Sustainable Development, [Sustainable Development \(un.org\)](http://Sustainable Development (un.org)).

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԻԴԻՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լուսինե Առուստամյան

Հյուսիսային համալսարան, ասպիրանտ

Կայուն զարգացման տեղեկատվության նկատմամբ ներկայումս ընդլայնվել է այն շահառուների շրջանակը, որոնք պահանջում են կազմակերպությունների կողմից հրատարակվող հաշվետվություններում ներկայացնելու «կանաչ գործարարության» արդյունքները: Սակայն նման տեղեկատվության արժանահավատությունը պետք է հաստատվի կայուն զարգացման աուդիտի կողմից, որը դեռևս գործնականում իր կազմակերպչական հիմնախնդիրներն ունի:

Հոդվածում դիտարկվում են կայուն զարգացման դերը տնտեսությունում, կայուն զարգացման աուդիտի անհրաժեշտությունը, վերջինիս պահանջները, կայուն զարգացման մասին տեղեկատվության արտացոլման տարբերակները ֆինանսական հաշվետվություններում:

***Հիմնաբառեր՝** ֆինանսական հաշվետվություններ, կայուն զարգացում, աուդիտ, IFRS-S ստանդարտներ:*

ВОПРОСЫ АУДИТА УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ

Լусине Арустамян

Северный университет, аспирант

Что касается информации об устойчивом развитии, круг бенефициаров в настоящее время расширился, что требует от организаций представлять результаты "зеленого бизнеса" в своих публикуемых отчетах. Однако достоверность такой информации должна быть подтверждена аудитом устойчивого развития, который на практике до сих пор имеет свою организационную проблему.

В статье рассматривается роль устойчивого развития в экономике, необходимость проведения аудита устойчивого развития, его требования, варианты отражения информации об устойчивом развитии в финансовой отчетности.

Ключевые слова: финансовая отчетность, устойчивое развитие, аудит, стандарты МСФО-С.

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԻ ԼԵԶՎԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Անի Իսրայելյան

aisrayalyan2002@mail.ru

Գիտական խորհրդատու՝

բ.գ.թ., դոցենտ Ծովինար Ասատրյան

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված է Սևակի վերաբերմունքը մայրենի լեզվի նկատմամբ: Լեզվի հարցերին բանաստեղծն անդրադարձել է ոչ միայն իր ստեղծագործություններում, այլ գրաքննադատական, հրապարակախոսական հոդվածներում: Մայրենիի հարցերին անդրադառնալիս Սևակը պարբերաբար շեշտում է, որ լեզուն ազգի հարստությունն է և ազգային ինքնության հիմնաքարը, ինչով էլ պայմանավորված է հեղինակի բժախնդիր վերաբերմունքն այդ հարցի նկատմամբ, ինչպես նաև անհանդուրժողականությունը օտարաբանությունների և անհարկի փոխառությունների հանդեպ անտեղի, ինչը մոռացության է մատնում հին բառերն ու բարբառները, իսկ այդ օտարաբանություններն աղտոտում և աղքատացնում են լեզուն:

***Հիմնաբառեր՝** Մայրենի լեզու, ազգ, ինքնություն, օտարամոլություն, գրականագետ, գրականագիտական քննադատություն:*

Պարույր Սևակը, մեծ բանաստեղծ լինելուց բացի, նաև գրականագետ և քննադատ էր: Իր տեսակետները, ժամանակի անհանգստություններն ու մտահոգություններն արտացոլված են ոչ միայն բանաստեղծություններում, այլ նաև իր հոդվածներում: Սևակի գրաքննադատական հոդվածներում աչքի են զարնում այնպիսի թեմաներ, որոնք առնչվում են մայր հողին, հայրենիքին և ազգայինը պահող ամենակարևոր երևույթին՝ լեզվին: Լեզուն է պահում ազգի ինքնությունը, և Սևակն իր հոդվածներում պարբերաբար անդրադառնում է լեզվի թեմային և ազգային ինքնությանը:

Լեզվի հանդեպ մեծ հետաքրքրությունը նկատվել է դեռ մանկուց: Ալբերտ Արիստակեսյանն իր «Պարույր Սևակ» գրքում հիշատակում է. «Դպրոցական տարիներից մինչև կյանքի վերջը շատ էր սիրում «բառեր» խաղը և կարող էր ժամերով զբաղվել դրանով, եթե խաղընկերներ լինեին: Հնչյունական հարուստ կազմություն ունեցող բառը դառնում էր յուրատեսակ շինանյութ այլ բառեր կազմելու համար: Հաղթում էր նա, ով ավելի շատ էր հազվագյուտ բառեր կազմում: Եվ մեծ մասամբ հաղթողն ինքն էր

լինում»¹: Այս ամենից բացի՝ Սևակն աչքի է ընկել նաև անհագ ընթերցասիրությամբ:

Բոլոր գրքերից առավել սիրել է կարդալ բառարան: Լևոն Հախվերդյանն իր գրքում գրում է, որ երբ Սևակին հարցրել է, թե ինչո՞ւ է բառարան կարդում, Սևակը պատասխանել է. «Գիտե՞ս՝ ինչ հրապուրիչ բան է բառարան կարդալը, ամեն մի վեպից հրապուրիչ, լեզվաբանությունից հրապուրիչ բան կա ...»²:

Սևակի համար բանասիրությամբ զբաղվելը մեծագույն հաճույք էր և կարող էր օրերով զբաղվել դրանով՝ չզգալով անգամ իր հոգնությունը: Հերթական բառարանը կարդալուց հետո որոշեց գրել «Բաց նամակ բառարանը կազմողին»: Հայ-ռուսերեն բառարանի մասին Սևակը գրում է. «Միայն «Կ» տառի տակ, այսպիսով, տեղ են գտել հարյուրավոր բառեր, որոնք հասկանալու համար անհրաժեշտ է դիմել ռուսերեն կամ օտարերկրյա բառարանների օգնությանը»³: Այս հոդվածում նա հարցնում է հեղինակներին, թե այս բառարանը կազմելիս ի՞նչ բառագիրք են ունեցել իրենց սեղանին⁴: Սևակի բժախնդիր ու պատասխանատու վերաբերմունքն ու քննադատությունը բավական էին, որ ոչ միայն վերանայվեն այդ բառարանում տեղ գտած անճշտությունները, այլև հետագայում հրատարակվելիք գրքերը և հատկապես բառարանները, որտեղ գերակշռում են օտարաբանությունները:

Սևակին անտարբեր չէր կարող թողնել ազգին, մշակույթին և հատկապես լեզվին վերաբերող ոչ մի նախաձեռնություն: Նա փորձում է պատասխաններ և լուծումներ գտնել ու առաջարկել այդ հարցերի շտկման համար: Հատկանշական է Սևակի՝ «Արժեքավո՞ր, թե՞ խոտելի դասագիրք» հոդվածը, որը գրել է դպրոցի ուսուցիչներից մեկի հետ և արտահայտել իր անհանգստությունը մայրենի լեզվի նոր դասագրքի մասին, որը ոչ աշակերտներին, ոչ ուսուցիչներին չէր կարող տալ լեզվական բարձր ճաշակ և պատշաճ մակարդակ: Սևակին վիրավորում է մայրենի լեզվի հանդեպ դրսևորվող կամայական ու անպատասխանատու վերաբերմունքը, և իր վերաբերմունքն արտահայտում է հետևյալ տողերում. «Հայոց լեզուն որքի գլուխ չէ, որ նրա վրա վարսավիրություն սովորեն: Կարելի է թեթևամիտ լինել սեփական գործի, սեփական կյանքի և գլխի հանդեպ, բայց ոչ հանրային գործի, ազգային կյանքի ու սրբության: Անպատասխանատվությունը սահման ունի, որից անց արդեն կոչվում է հանցագործություն, մի հանցագործություն, որի դատապարտման համար

¹ Տե՛ս Արիստակեսյան Ա., Պարույր Սևակ, Ե., 1984, էջ 72:

² Տե՛ս Հախվերդյան Լ., Պարույր, Ե., 2023, էջ 58:

³ Տե՛ս Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Ե., 1974, էջ 93:

⁴ Նույն տեղում, էջ 97:

պետք չեն դատավոր ու դատախազ, որովհետև այս երկուսը հանդես են գալիս միասնաբար՝ Ժողովուրդ անունով և Ազգ անունով»⁵:

Մայրենի լեզուն սրբություն էր Սևակի համար, այդ իսկ պատճառով նրա համար անընդունելի էր օտար բառերի և անհարկի փոխառությունների անտեղի կիրառումը: Նա դեմ չէր նոր բառերի կիրառմանը, քանի որ ժամանակի ընթացքում կյանքը, ինչպես նաև լեզուն զարգանում են: Նոր առարկաների և երևույթների հայտնվելուն զուգահեռ՝ լեզվում առաջանում են նոր բառեր, և անհնար է խոսել առանց նոր բառերի կամ փոխառությունների կիրառման: Սևակը դեմ էր, որ այդ բառերը կամ փոխառությունները դառնան «բեռ», քանի որ «....լեզվին կշիռ է պետք, ոչ թե բեռ»:

Լեզուն արտահայտում է ժողովրդի «Ես»-ը, և եթե լեզվում հանդիպում են օտարածին բառեր, հատկապես սխալ կամ երկիմաստ օգտագործված, կարելի է ասել, սպառնում են ազգի «Ես»-ին՝ ինքնությանը, քանի որ ազգը չի կարող գոյություն ունենալ առանց լեզվի: Այս ամենին Սևակն անդրադարձել է «Պահպանենք և հարստացնենք մայրենին» հոդվածում՝ անվանելով «լեզվական խառնափնթորություն»:

Սևակի համար հատկապես անընդունելի էր, երբ սխալ էին գրում ու խոսում գրողները: Սևակի կարծիքով գրողի առաջնահերթ խնդիրը լեզվին կատարելապես տիրապետելն է, և նրա համար անընդունելի էր, երբ բանաստեղծները չէին կարողանում բառեր գտնել: Ըստ Սևակի՝ բառեր շատ կան, պարզապես բառերի մի մասը քնած է, բայց ոչ մեռած, մի մասը լուռ է, ուստի և խոսեցնել է պետք, իսկ շատ գործածված բառերին, որոնք մաշվել են, փրկել է պետք: Եթե այդ երեք բարդությունները հաղթահարված են, ապա հեղինակին կարելի է կոչել բանաստեղծ⁶: Այս առիթով մեկ այլ հոդվածում, որը վերնագրված է «Պահպանենք և հարստացնենք մայրենին», հեղինակը գրում է. «Այս դատապարտելի վիճակին հասել ենք, կրկնում ենք, որովհետև օտար բառերի գործառնությունը դարձրել ենք մի տեսակ կիրթ լինելու, զարգացվածության, խելքի նշան, մինչդեռ դա պիտի համարվի իբրև սոցիալություն, կիսագրագիտություն, մտավոր խեղճություն, որովհետև որևէ լեզվով քիչ թե շատ կարգին (ուրեմն նաև՝ մաքուր) խոսել չկարողանալը այլ բան չի նշանակում»⁷:

Օտարաբանություններ հայոց լեզվում ևս շատ են կիրառվում՝ հաճախ մոռացության մատնելով հայերենի բառապաշարի ամենահարուստ ակունքները՝ բարբառները: Իսկ լեզուն, ժողովրդի կենդանի լեզուն, ապրում է ժողովրդական բարբառներում, որոնցում ցավոք նույնպես կան օտարամոծություններ: Սևակի համոզմամբ՝ մեր լեզուն հարուստ է և

⁵ Տե՛ս «Գրական թերթ», N 6, Ե., 1964:

⁶ Տե՛ս Սևակ Պ., նշվ. աշխ., 1974, էջ 400:

⁷ Տե՛ս Սևակ Պ., Երկերի ժողովածու, 3 հատորով, Ե., 1983, էջ 24:

կարիք չկա այն օտարաբանություններով լցնելու, քանի որ այն, հարուստ լինելուց բացի, նաև ճկուն լեզու է: «Տերյանը պահանջում է» հոդվածում Սևակը գրում է լեզվի ճկուն և հարուստ լինելու մասին. «Որևէ լեզվի հարուստ կամ աղքատ լինելը, իմ խորին համոզմամբ, որոշվում է ոչ այնքան նրա բառապաշարի հարստությամբ, որքան լեզվի ճկունությամբ: Այդ ճկունությունն է, որ պակասում է մեր մեծագույն մասին»:⁸ Բարբառների և դրանց օգտագործման մասին գրում է նաև Սևակի ամենասիրելի գրողներից մեկը՝ Հ. Թումանյանը: Սևակի համար շատ կարևոր էր գեղարվեստական խոսքում բառի կշիռն ու արժեքը զգալը, բառի գույնն ու երանգը, բառի համն ու հոտը, բառի ձայնն ու լռությունը⁹, ինչը զգում էր Թումանյանի գործերում, և որը, ցավոք, բացակայում էր ժամանակակից գրողների ստեղծագործություններում և գիտական մարդկանց խոսքում: Սևակի կարծիքով գրականության մեջ ազգային հատկանիշն առաջին հերթին լեզուն է, որը սովորական խոսք չէ կամ բառերի կույտ, այլ շոշափելի իրականություն է, և այն երկը, ուր կա ազգային հոգեբանություն, արտահայտված է միայն լեզվի միջոցով¹⁰: Լեզուն հղկելու, ողորկելու և բանաստեղծացնելու գործում անուրանալի է իր՝ Սևակի դերը. «Հայտնի է, որ լեզուն հղկում-ողորկում-ձախարակում են գրողները, այսինքն՝ նաև «ստեղծում»: Բանը միայն նորակազմություններն ու նորաբանությունները չեն, որ նրանք են ստեղծում (այս անգամ առանց չակերտների): Լեզվաշինարարի նրանց դերն ամենից ավելի դրսևորվում է և պիտի երևա տվյալ լեզվի բոլոր կենսունակ տարրերը համարձակորեն «հունցելու» գործում, ըստ որում՝ «հունցել» այնպես, որ «հաց դառնա» բոլորին անհրաժեշտ, բոլորից «մաքսվող հաց»: Միայն այդ դեպքում է լեզուն ճկուն՝ ի վիճակի ոչ միայն արտահայտելու առավելագույնը, այլև արտահայտածը մատչելի դարձնելու: Այս մասին ահա, որ մենք կա՛մ չենք մտածում, կա՛մ մտածում ենք շատ քիչ: Իսկ չէ՞ որ լեզուն է այն միակ միջոցը, որով գործում է մեր մասնագիտությունը, որ գրականություն է կոչվում»¹¹:

Սևակը հայոց այբուբենը համարում է անկրկնելի՝ այն համեմատելով այլ այբուբենների հետ, որոնց հեղինակները վերցրել են մեկը մյուսից: Հայոց այբուբենի ստեղծումով լուծվեց հայ ժողովրդի առջև ծառացած գոյաբանական խնդիրը: Մեսրոպյան այբուբենը և հայոց լեզուն տվեցին հայ ժողովրդի փրկության բանալին: Սևակը հայոց այբուբենը կոչում է անկրկնելի և իր հոդվածում գրում. «Այդ նա էր, դարձյալ ու վերստին նա, որ այդ ամենով մեզ ծանոթացրեց մեզ, տվեց ինքնաճանաչում», իսկ հաջորդող տողերում շարունակում է ասելով. «Առանց ինքնաճանաչման և ինքնա-

⁸ Տե՛ս Սևակ Պ., նշվ. աշխ., 1974, էջ 64:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 356:

¹⁰ Նույն տեղում, էջ 395:

¹¹ Նույն տեղում, էջ 67-68:

վստահության, առանց այդ հույսի ու հավատի, առանց այդ նոր զենքի, որ կոչվում է գրիչ, չէր կարող լինել ո՛չ Ավարայրը, ո՛չ էլ Քաղքեղունը, ինչպես որ անհնարին է կովել՝ դեռ չարթնացած և պատասխան տալ՝ չմտածած»¹²։ Այստեղ Սևակը Մաշտոցին ներկայացնում նաև որպես մեծ քաղաքագետ։

Այս ամենն ուսումնասիրելով՝ հասկանում ենք, որ «Մայրենի լեզու» բանաստեղծության մեջ հնչող հանճարեղ անունները պատահական չեն ընտրված։ Սևակը գրում է լեզվի մասին. «...Դու մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով, Նարեկացիով օծված ու յուզված...»։ Մայրենի լեզուն բանաստեղծի համար սրբազան մասունք է, և այդ մասունքին նվիրված մեկ այլ բանաստեղծության մեջ, որ վերնագրված է «Հայոց լեզու», այն նկարագրվում է բարու, գեղեցիկի, հավատարմության խոսքերով խորունկ, որպես ցոլացիկ ու պարզ լեզու, իսկ վերջում ամփոփում է հետևյալ տողերով.

«Դու այսպիսի՛ն ես, Այսպիսի՛ն ես դու։

Եվ երջանիկ է՝ ով քեզ կարող է կոչել ՄԱՅՐԵՆԻ,

Երանելի է՝ ով քեզանով է խոսում ու դատում...

Դու՛ իմ մայրենի՛, Այսպիսի՛ն ես դու։

Եվ ես՝ երջանիկս ու երանելիս,

Ե՛ս չեմ, այդ ե՛ս չեմ քեզ տիրապետում։

Դո՛ւ ես, այդ դո՛ւ ես ինձ տիրապետում –

Հավիտյա՛ն և մի շտ,

Եվ ա՛յժմ նաև՝ Քեզանով իսկ քե՛զ փառաբանելիս...»։

Որքան էլ Սևակին մտահոգում է մայրենի լեզվի հանդեպ անտարբերությունը, դառնացնում է մեր երիտասարդների օտարամոլությունը, այնուամենայնիվ նա չի հուսահատվում և հողվածներից մեկն ավարտում հետևյալ խոսքերով՝ արթնացնելով հույս և տալով հավատ, որ հայոց լեզուն կապրի հավետ. «Նա հասկանում է խորապես, որ իր ամենամեծ զավակի ծնունդը՝ դառնալով ինչ-որ նոր Սկիզբ, միաժամանակ եղել է և Շարունակություն, որ չի կարող վախճան ունենալ, քանի դեռ մեր մանուկների անաբատ բերանից հնչում է մեր ազգային մեծագույն երգը՝ «Այբ-բեն-գիմ»-ը»¹³։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արիստակեսյան Ա., Պարույր Սևակ, Երևան, 1984։
2. Գասպարյան, Դ., Պարույր Սևակ, Երևան, 2001։
3. Հախվերդյան Լ., Պարույրը, Երևան, 2023։
4. Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1974։

¹² Նույն տեղում, էջ 179։

¹³ Տե՛ս Սևակ Պ., նշվ. աշխ., 1974, էջ 185։

5. Սևակ Պ., Երկերի ժողովածու, 3 հատորով, Երևան, 1983:
6. «Գրական թերթ», N 6, Երևան, 1964:

ЛИНГВИСТИЧЕСКИЕ ПРЕДСТАВЛЕНИЯ ПАРУЙРА СЕВАКА

Ани Израелян

Студент филологического факультета Северного университета

В статье представлено отношение Севака к родному языку. Вопросы языка поэт затрагивал не только в своих произведениях, но и в литературно-критических, публицистических статьях. Касаясь вопросов родного языка, Севак периодически подчеркивает, что язык является богатством нации и краеугольным камнем национальной идентичности, чем и обусловлено щепетильное отношение автора к этому вопросу, а также нетерпимость к иносказаниям и ненужным заимствованиям, что предаёт забвению старые слова и диалекты, а эти иноязычия оскверняют (загрязняют) и обедняют язык.

Ключевые слова: Родной язык, нация, идентичность, ксенофобия, литературовед, литературоведческая критика.

LINGUISTIC VIEWS OF PARUYR SEVAK

Ani Israyelyan

Student of the Faculty of Philology of the Northern University

The article presents Sevak's attitude towards his native language. The poet addressed language issues not only in his writings, but also in literary criticism and publicistic articles. When addressing the issues of the native language, Sevak regularly emphasizes that the language is the wealth of the nation and the cornerstone of the national identity, which is why the author's scrupulous attitude towards this issue, as well as the intolerance of foreign words and inapt borrowings, which obliterates old words and dialects, and named foreign words pollute and impoverish the language.

Keywords: native language, nation, identity, xenophobia, literary critic, literary criticism.

ԿԵՐՊԱՐԱԿԵՐՏՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՆՔՆԵՐԸ ԱԿՆԱՐԿԻ ԺԱՆՐՈՒՄ

Աստղիկ Աբրահամյան

Հյուսիսային համալսարան, ք. գ. թ.

astghik.abrahamyan8@gmail.com

Համառոտագիր

Հոդվածի հիմնական նպատակն է ուսումնասիրել գեղարվեստական ժանրերի միջոցով իրական կերպար ստեղծելու առանձնահատկությունները: Ինչպե՞ս ճանաչել հերոսին, ինչպե՞ս ստեղծել դիմանկար, ինչպե՞ս դրվագը դարձնել մարդկային էությունը բացահայտելու միջոց: Սրանք այն հարցերն են, որոնց պատասխաններն ամենակարևոր պայմանն են լրագրողի աշխատանքի համար:

Հոգեբանական հնարանքների կիրառումը գեղարվեստական և լրագրողական ժանրում անհրաժեշտ է մի կողմից՝ կերպար ստեղծելու, մյուս կողմից՝ հանդիսատեսի վրա հոգեբանական և զգացմունքային ազդեցություն գործելու համար: Աշխատանքում ներկայացված են գեղարվեստական ժանրերի ինչպես տպագիր և հեռուստատեսային դրսևորումները, այնպես էլ հեղինակ-հերոս-լսարան փոխհարաբերություններն ու դրանց առնչվող դիտարկումները:

***Հիմնաբառեր՝** կերպարակերտում, մտապատկեր, դրվագ, հեղինակ-հերոս-լսարան փոխառնչություններ, հոգեբանական հնարանքներ, մարդ-հերոս-կերպար, դիմանկար, հոգեկերտվածք, պատկեր-խոսք-ձայն, հեռուստադիմանկար, գեղարվեստահրապարակախոսական:*

Զանգվածային հաղորդակցության յուրաքանչյուր միջոց ունի իր առանձնահատկությունները, աշխատանքային գործիքները և պահանջում է յուրօրինակ մոտեցում հեղինակ-հերոս-ընթերցող, հեղինակ-հերոս-լսարան փոխառնչություններն առավել իրական և պատկերավոր դարձնելու համար: Ինչպե՞ս ճանաչել հերոսին, ինչպե՞ս կերտել կերպար՝ ուրվագծելով ամենաբնորոշն ու տիպականը:

Յուրաքանչյուր խառնվածք պահանջում է յուրահատուկ մոտեցում և յուրաքանչյուր ծանոթություն իրադարձություն է՝ պայմանավորված զրուցակցի տեսակով և պահի, իրավիճակի, տպավորությունների ազդեցությամբ: Որքան հեղինակը լավ է տիրապետում հոգեբանական հմտություններին, այնքան դյուրին է դառնում հերոսին բացահայտելը: Իրականության գեղարվեստական վերարտադրությունն ստանալու

համար հեղինակից պահանջվում են որոշակի մասնագիտական որակներ և հոգեբանական հմտություններ, որոնք պետք է դրսևորվեն հերոսի հետ ծանոթության պահից մինչև կերպարի կերտման վերջին դրվագը:

Ի տարբերություն լրատվական առավել օպերատիվ ժանրերի՝ գեղարվեստահրապարակախոսական ժանրերն ընդգրկում են կենսագրական առավել մեծ ժամանակահատված, երբեմն հերոսի ողջ կյանքը, և հաճախ խնդիր է առաջանում տասնամյակները տեղավորել ընթացքի մեջ այնպես, որ որևէ կարևոր պահ դուրս չմնա՝ խախտելով կերպարի ամբողջականությունը: Այստեղ է, որ դրսևորվում է հերոսին խոսեցնելու, ամենակարևորը «կորզելու» արվեստը, որը լրագրողի մարդկային, հոգեբանական, մասնագիտական որակների համադրումն է, և որի արդյունքում միայն կարելի է ակնկալել վստահություն, հետևաբար նաև՝ անկեղծ, անկաշկանդ խոսք: Այս մոտեցումն առկա է այն լրագրողների աշխատանքում, ովքեր կարողացել են ստեղծել մնայուն ակնարկներ, էսսեներ, ովքեր տարիների ընթացքում սեփական փորձով յուրացրել են մարդ արարածին ճանաչելու, մարդ-հերոս-կերպար եռանկյունին կերտելու գաղտնիքները: Ահա թե ինչպես է ներկայացնում այս խնդիրը հայ ակնարկի վարպետներից մեկը՝ Մարգո Ղուկասյանը. «Մարդու մասին գրելը շատ դժվար է, պետք է կարողանալ ճանաչել նրան, հասկանալ: Պետք է լինել չափազանց զգույշ, որպեսզի չխաբվես ու չվարկաբեկվես...»:¹⁴ Մարգո Ղուկասյանն այս խնդիրը լուծում է իր ձևով: Հաճախ դիմանկարի հեղինակ են դառնում ակնարկագիրն ու հերոսը: Ահա թե ասվածն ինչպես է հաստատվում «Բալետի արտիստը» ակնարկում. «Եվ մենք երկուսով՝ տողերիս հեղինակն ու բալետի արտիստ Էդվարդ Հայրումյանը, ետ գնացինք ավելի հին ժամանակներ»:¹⁵ Այնուհետ հուշը կրճատում է անցյալի ու ներկայի միջև տարածությունը, փոխարենը լրագրողի ու հերոսի միջև ստեղծված անմիջականությունը կարծել է տալիս, թե նրանց բարեկամությունը հարյուրամյա պատմություն ունի: «Փաստորեն, մենք վաղեմի բարեկամներ էինք, սկսած 1902 թվականից, երբ նրա Իսահակ պապը Բաքվի Արմենիքենդի Փոքր եկեղեցուն ջահ էր նվիրել, և երբ այդ դեպքից ուղիղ հարյուր տարի անց՝ 2002 թվականի աշնանը,

¹⁴ Մ. Ղուկասյանի խոսքը մեջբերված է արձակագրի և հոդվածի հեղինակի զրույցից:

¹⁵ Տե՛ս **Ղուկասյան Մ.**, Վկայություն քսաներորդ դարի, Ե., 2005, էջ 5:

Ծաղկածորում նա ինձ ցույց էր տալիս իր «դուրի» տախտակները: Այստեղ գործ ունենք արդեն դուկասյանական գրչի մեկ այլ առանձնահատկության հետ. ընդամենը մի քանի բառը բավական է, որպեսզի հերոսին խոսեցնի իր միջավայրին հարազատ, միջավայրի պատկեր ստեղծող բառ ու բանով՝ պատկերակերտումը դարձնելով կերպարակերտման անհրաժեշտ նախապայման: «Խնձորս մնաց քաղելու...»¹⁶ ակնարկի հերոսուհու՝ Մարտունաշենից տեղահանված ութսուներկուամյա Մարգարիտ Հովսեփյանի բողոքն ապրումների այնպիսի խտացում է, որի մեջ կարելի է տեսնել այդ օրերն ապրած յուրաքանչյուր մարդու. «Տներս, բաղուխալիքս. շարունակությունը երգեցիկ ձայնով. խնձորս քաղա՞ծ չէր, կարտուխ քանդաա՞ծ չէր: Դադար է տալիս, մտածում է: Լոբիս հասել էր, քաղելու էր: Հիսուն հավ ունեի, ձվերը մնացին չհավաքած: Կովս կթալ եմ, վեղորոյովը վար դրալ, որ մերեմ: Հոնը, մոշը, պոպոքը, հաճարը... Մեր անտառներումը անպտուղ ծառ չկա՞ր, չկա՞ր: Մեղք ըլնեմ ես, դուռս փակել եմ, զինվորական ավտոմեքենայով գնացել...»: Ցավոք, Մարգո Ղուկասյանի գրչի տակ մարմին ստացած այս հառաչանքը շարունակում է հնչել նաև այսօր՝ որպես չինացող դառը ճշմարտություն: Սրատես լրագրողի հայացքն այս դեպքում ևս կանգ է առել այնպիսի խնդրի վրա, որը ժամանակ առ ժամանակ «արյունահոսում է»՝ ընդհանրացնելով մարդկային ճակատագրերն ու ապրումները:

Ղուկասյանական դիմանկարներից յուրաքանչյուրը մի ծանոթություն է արդեն ծանոթ կամ անծանոթ մարդու հետ. տպավորությունն այնպիսին է, որ հեղինակն էլ իր հերոսին ծանոթանում է ընթերցողի հետ՝ աստիճանաբար: Նախ՝ զգացողություններ են, որ ապրում է լրագրողը մինչև հերոսի դուռը բախելը, ապա՝ առաջին հայացք, ծանոթությունն և քիչ-քիչ «սիրտը բացող» հերոս, որը վերջում դառնում է հարազատ ու մտերիմ: Ի դեպ, սիրտը բացելու մասին ահա թե ինչ է գրում Մ. Ղուկասյանը. «Տարբեր տարիքի ու սեռի մարդիկ են, տարբեր կրթության ու մասնագիտության: Եվ որքան տարբեր են նրանց հոգեբանությունը, ապրումները, երևույթների ընկալումները, պատմելու և, առավելապես, լռելու կերպը»: Տարբեր կերպ են լռում մարդիկ և տարբեր պատճառներով: «Ես հիշում եմ մորս խոսքը՝ քարը որ շուռ տաս, մեծ թե փոքր, տակից

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 21:

անպայման մի բան դուրս կգա» (Մ. Ղ.): Ասել է թե, երբ հերոսը խախտում է լռությունը, նշանակում է «քարն արդեն շուտ ենք տվել»: Տարբեր ակնարկներում, տարբեր մտորումների մեջ լրագրողը մաս-մաս տալիս է այն բանաձևը, որի միջոցով հնարավոր է հասնել ամենակարևորին՝ զրուցակցի վստահությանը. «Ի՞նչ կարող ես անել, միայն լսել, հնարավորություն տալ, որ նա դատարկի հոգում կուտակված դառնությունը»¹⁷: Հենց սրա շնորհիվ է ակնարկը դառնում երկխոսություն լրագրողի ու հերոսի և հերոսի ու ընթերցողի միջև:

Հողի, արյան կանչը տարբեր մարդկանց մեջ տարբեր կերպ է հնչում: Մ. Ղուկասյանին ուղեկցել է այդ կանչը և՛ կյանքում, և՛ տողերի մեջ, եթե անգամ այդ տողերով պատմում է ուրիշի մասին. «Ի՞նչ պարզվի, որ լավ լինի: Ինչպես իր, այնպես էլ իմ նախնիները Արևմտյան Հայաստանի Բասենի գավառից էին և իրար շատ մոտ գյուղերից՝ Պատժվան և Դալիբաբա: Նույն հողուջրից ենք, ասացի, իրար լավ կհասկանանք...»¹⁸: Ահա մի երևույթ ևս, որն անմիջապես մերձեցնում, հարազատ է դարձնում. լրագրողի համար սա նաև յուրօրինակ հոգեբանական հնարանք է՝ զրուցակցին առավել անմիջական և մտերիմ դարձնելու: Մեկ այլ ակնարկում, ուղղակի հետևելով տեղահանության ու բռնությունների սարսափն ապրած հերոսի հիշողություններին, մի պահ կտրում է վերջինիս մտքի թելն ու քանդում սեփական հուշերի կծիկը. («Միջանկյալ. ես ևս, այս ակնարկի հեղինակը՝ Մարգո Ղուկասյան, հոգևորականի՝ Տեր-Գաբրիելի թոռն եմ: Իմ պապը՝ Բասենի գավառի Դալիբաբա գյուղի վերջին քահանան, զենք բռնելու տարիքի տղամարդկանց հետ տարվել է Էրզրում, որտեղից այլևս չի վերադարձել...»)¹⁹: Հավանաբար չկա մեկը, որը դիմացինին լսելու պահին զգացած չլինի, որ տարվել է սեփական մտքերով՝ արթնացած զրուցակցի խոսքերից: Նման անմիջական զգացողությունների Մ. Ղուկասյանի էջերում կարելի է հաճախ հանդիպել: Ակնարկն ավարտվում է այսպես՝ «...իբրև եղեռն տեսած վերջին մոհիկաններից մեկը՝ նա իր հուշը փոխանցեց նվաստիս, որ ես էլ իմ հերթին, ընթերցող, փոխանցեմ քեզ...»:

¹⁷ Տե՛ս **Ղուկասյան Մ.**, Միասերը, «Գրական թերթ», ապրիլի 4, 2003:

¹⁸ Տե՛ս **Ղուկասյան Մ.**, Վկայություն քսաներորդ դարի, Ե., 2005, էջ 24:

¹⁹ Տե՛ս **Ղուկասյան Մ.**, Կարսի առաքելոց եկեղեցու քահանայի թոռը, «Հայացք Երևանից», թիվ 6, 2003:

Այսպես է աշխատում լրագրողը, այսպես է ստեղծում դիմանկար՝ հերոսի վրձնով ու ներկով. իրենք միայն մաքուր կտավն է, մնացածը ճիշտ գույնը ճիշտ վրձնահարվածով ճիշտ տեղում դնելն է. սա է հեղինակի խնդիրը, որը Մ. Ղուկասյանը յուրաքանչյուր ակնարկում յուրովի է լուծում:

Յուրաքանչյուր հեղինակ, ժանրի ընդհանրություններն ու առանձնահատկությունները պահպանելով հանդերձ, ունի իր ոճը, և այն հնարավորություն է տալիս ընթերցողին զգալ, թե ակնարկագրի համար ո՞վ է հերոսը՝ պարզապես կերպա՞ր, հետաքրքիր մա՞րդ, ակնարկի հերոս լինելու արժանի ա՞նձ, թե՞ արդեն հարազատ մեկը, որի մասին գրում է հեղինակը՝ կարծես նրա հետ զրուցելով: Վերջին մոտեցումն առավել առկա է Հրաչյա Մաթևոսյանի ստեղծագործություններում: Մաթևոսյանի գրիչը հոսում է այնպես, ինչպես միտքը. սովորաբար գրիչը մտքի հոսքից ընտրում է այն, ինչ անհրաժեշտ է տվյալ ասելիքին: Մաթևոսյանը, անկեղծ լինելով ինքն իր ու ընթերցողի հետ, չի տարանջատում միտքն ու գրիչը: Հավանաբար այդ է պատճառը, որ հաճախ դժվար է տարբերակել մաթևոսյանական ակնարկը, էսսեն, պատմվածքը: Պատմվածքի հերոսները նույնքան իրական են, որքան ակնարկիներ, ակնարկի դրվագները նույնքան պատկերավոր են ու կենդանի, որքան պատմվածքիներ: «Խաչքար Հայաստան» պատմվածքում (ի դեպ, այս ստեղծագործության ժանրը ևս դժվար է որոշել, եթե հեղինակն ինքը չնշի այն), այսպիսի մի միտք կա. «Էս խաչքարերն էնպես են կպած, որ պոկել չի լինի»: Այսպես անքակտելի են նաև Մաթևոսյանի մտքերը. նրանցից պոկել, առանձնացնել որևէ հատված՝ կնշանակի խախտել ամբողջականությունը: Եվ դա, անշուշտ, հոգեբանական հզոր ազդեցություն է թողնում նաև ընթերցողի վրա՝ ստեղծելով մաթևոսյանական գրչով ուրվագծված վառ մտապատկեր:

«Արևը մեզ գտավ Խոսրովի անտառում: Քայլեցինք արքայական անտառում: Խաչքարերի ազնիվ բուրոդ մի փունջ տեսանք: Ինչ ազնիվ փունջ էր, մանուշակի բույր ուներ:

...Ես հիշեցի իմ Սոնա նանին, որ ոտաբոբիկ գնում էր մեր գորավորը, մատուռին, մեր խաչին մատաղ էր խոստանում, պտտվում էր խաչքարի գլխով, յոթ անգամ պտտվում էր մատուռի շուրջբոլորը, աղոթքներ էր մըրմընջում...»²⁰: Խաչքարից խաչքար պատմություններ են, հիշողություններ, ապրումների հոսք և այս՝ առաջին հայացքից միմյանց հետ կապ չունեցող

²⁰ Տե՛ս Մաթևոսյան Հ., Խաչքար Հայաստան, Ե., 2002, էջ 15:

զգացողություններն իրականում կապված են ներքին տրամաբանությամբ, որի կրողը խաչքարն է: «Երկիր Հայաստան, Խաչքար Հայաստան, քո խաչքարը դու ես...», - այսպես է ավարտվում Մաթնոյանի՝ հուշերով հունցված պատմությունը՝ նման մոր ձեռքով հունցված «խաչհացի» խմորին: Առհասարակ հողի, խաչի, մոր, բնության, հոգու մաթնոյանահունց տրամաբանությունն առկա է գրողի բոլոր հերոսների հոգեկերտվածքում, բոլոր ստեղծագործություններում, ուր մշտապես զգում ես «հունցողի» ներկայությունը:

Գեղարվեստահրապարակախոսական ժանրերի համար հաճախ կարևոր նշանակություն են ունենում դրվագները. իսկ ի՞նչ են դրվագները, եթե ոչ կյանքի մեծ ժապավենի հատվածներ, որոնց համակցումից առաջանում է կյանքի համապատկերը: Ի վերջո մարդը բացահայտվում է հենց որոշակի իրադրության մեջ, և մեկ դրվագը կարող է ասել ավելին, քան կյանքի ողջ պատմության սոսկ նկարագրությունը: Եվ միանգամայն տրամաբանական է դառնում դրվագի շուրջ ակնարկ կառուցելու իրողությունը:

Այս սկզբունքն առանցքային է եղել նաև Մուշեղ Գալշոյանի ստեղծագործական մոտեցումներում: Մ. Մանուկյան լրագրողի և Մ. Գալշոյան գրողի հերոսները նույնքան իրական են, որքան այն դրվագները, որոնց միջոցով հեղինակը ծնունդ ու կյանք է տվել կերպարներին: Յուրաքանչյուր փաստ, ճակատագիր, խոհ ու ապրում հեղինակի բառի ու տողի շաղախով դառնում են ամուր հիմք՝ իրական կերպար կառուցելու համար: Գալշոյանի դիմանկարների շարքում իրական ճակատագրեր են, տարբեր իրավիճակներում ապրող իրական հերոսներ՝ ներքին ապրումներով, հույզերով ու զգացումներով: Հեղինակի գրիչը սահում է կյանքի վրայով և մինչ կրկին որևէ հերոսի հանդիպելը կանգ է առնում ժամանակ ու սահման չճանաչող բնության տարբեր հանգրվաններում և բնությունը շարժում ու կերպարանք է ստանում նրա ձեռքի տակ. «Իրիկնապահի փափուկ խաղաղությունն իջավ կիրճ, ծտերի թների հետ քսվեց գետի ալիքներին, ձորիձոր գնաց» («Տաք ձեռքերով մարդիկ»), կամ «Հողը շիկացել էր, տապից առուն կուչ էր եկել, եզրի փշատենին ավելի էր խոնարհվել, որ ջուր խմի...

Այգիներում ողկույզները գրկախառնվել էին արևի հետ՝ համբույրից շիկանում էին, քաղցրանում...» («Լուրթ երկնքի տակ, մայր հողի վրա»)²¹:

Իրականությունը Գալշոյանի համար մարդու և աշխարհի ամբողջականությունն է, գրողը կյանքի ամբողջական պատկերն ստեղծում է իրենց մեծ ու փոքր աշխարհն ունեցող, տարբեր մասնագիտության ու զբաղմունքի տեր մարդկանց դիմանկարների միջոցով («Տաք ձեռքերով մարդիկ», «Խոսքով քեռու այգին», «Անապատից քաղցրություն քամող մարդիկ» և այլն)²²:

Բնության և մարդու անչափելի թվացող ժամանակը Գալշոյանը չափում է մարդ-բնություն զուգահեռների միջոցով. «Արևամուտ էր. Վարդանյանը օրվա խոնջանքն առած նստել էր քարին, ճերմակող քունքերն էր շփում ու ոգևորում Երևանից հյուր եկած տղային» («Հպարտ ժողովուրդ են»): Արևամուտի ու ճերմակող քունքերի զուգահեռներում ապրող գալշոյանական կերպարները մշտապես կապված են իրենց շրջապատող աշխարհին և ապրում են՝ աշխարհի ժպիտն իրենց շուրթերին ու կնճիռները՝ ճակատին առած:

Գալշոյանի իրական ժամանակն անցյալի ու ներկայի հատման կետն է. անցյալը Էրզիրն է, որի թեման ներքին զարգացմամբ կապում է գրողի ակնարկները, էսսեներն ու պատմվածքները: Սրանով են պայմանավորված Գալշոյանի ստեղծագործության թեմատիկ ընդհանրությունները՝ հող, Էրզիր, մարդկային ճակատագրեր...

«Է՛, Ե՛րբ էր, էլի՝ գարուն, այսպիսի կապույտ ու փափուկ մի առավոտ կար, կապույտ աշխարհ... սանձը կտրած Տավրոբիկի հնքից ձորը լցված կապույտը քլթթթում էր...»²³:

Գալշոյանը բացում է կապույտ աշխարհի վարագույրը՝ երևակայության ուժով քանդելով անցյալի ու ներկայի, պատրանքի ու իրականության սահմանը: Նրա հերոսները երկրի ուժը, ոգին, պատմությունը կրողներն են, ովքեր գրուցում են ընթերցողի հետ, մասնակից դարձնում իրենց կյանքին ու կարոտներին, թույլ տալիս թափանցել իրենց հոգու ու

²¹ Տե՛ս Գալշոյան Մ., Քեզ վերևից չպետք է նայել, Գրական ակնարկների ժողովածու, Ե., 1990, էջ 124:

²² «Գրական ակնարկների ժողովածուն» ընդգրկում է Մ. Մանուկյանի՝ մամուլում տպագրված գրական ակնարկները, որոնք նախանշում են գրողի ստեղծագործական առաջին շրջանը:

²³ Տե՛ս Գալշոյան Մ., Մարութա սարի ամպերը, Ե., 1980, էջ 6:

երագի աշխարհ... Եվ որքան բնական ու իրական երանգներով է կերտում Գալշոյանը նույնիսկ կապույտ աշխարհում ապրող իր հերոսներին. «...Բագե Առաքելը ոտք էր փոխում չարուկ ու ժիր, մահակը կայտառ թափ էր տալիս և մի պահ նրան այնպես թվաց, թե Լուսաստղի հետ, Առաքելի հետ, հոտի հետ, շան հետ, ահա, Ճակատասարն է բարձրանում» («Պատրանք»):

Պատրանքի և իրականության սահմանը Մ. Գալշոյանը ջնջեց սեփական ճակատագրով. Բագե Առաքելի վերջաբանի գեղարվեստական նկարագրությունը դարձավ գրողի վախճանի իրական պատկերը:

Հատկանշական է, որ միննույն անձի հետ կապված տարբեր դրվագների միջոցով տարբեր հեղինակներ կարողանում են կերտել միանգամայն տարբեր դիմանկարներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է ներկայացնում հերոսին, իհարկե, բոլոր դեպքերում՝ միանգամայն իրական գծերով:

Այդպիսի սկզբունքով են պատրաստված Մինաս Ավետիսյանի մասին պատմող ֆիլմ-ակնարկները²⁴: Կադրում գերիշխողը կտավներն են, և ինքը՝ նկարիչը՝ մտախոհ, հոգնություն արտահայտող դեմքով: Ռեալիկ Դավոյանի տեքստը կարդում է Խոբեն Աբրահամյանը.

«-Տվե՛ք ինձ իմ շուրթերը, որ ձեզ համար երգեմ,

Տվե՛ք ինձ իմ ձեռքերը, որ ձեզ համար նկարեմ...»:

Պատկերի, խոսքի, ձայնի համարժեք եռամիասնությունը հասցված է զգայական այնպիսի աստիճանի, որ ամբողջությամբ կլանում է հեռուստադիտողին՝ տանելով հերոսի աշխարհ: Մա գեղարվեստական մտածողությամբ կառուցված ցանկացած ֆիլմի մեծագույն հաջողությունն է: Շարունակվում է Մինասի պոեզիան՝ կտավների ու բառերի ներդաշնակության մեջ, իսկ երկրորդ պլանում, ասես կտավի լուսանցքում, դողանջներ են հնչում՝ հետզհետե փոխվելով կոչնակի, ապա տազնապի ակորդների: Միայն այս հնչյունները բավական են արվեստագետի կյանքի ուղին, ապրումներն ու տազնապները ցույց տալու համար: Ամեն ինչ արված է Մինասի ոճով, նրան հատուկ մտածողությամբ:

«-Տվե՛ք ինձ իմ աչքերը, որ տեսնեմ ձեզ այնպես,

Ինչպես արարել է ձեզ բնության ոգին»:

Տողերի մեջ Մինասն է՝ գույնը բառին խառնած, բառը՝ գունեղացրած՝ իր ներկայակնով: Ապա Ջաջուռին նվիրված կտավն է՝ խառնված տողերին, և ծննդավայրի հեքիաթը նույնպես պատրաստ է:

²⁴ Տե՛ս Վարժապետյան Մ., Մինաս, «Հ 1», սեպտեմբեր, 2008:

Կյանքը, միտքը, գործը, հոգին՝ գույնի ու բառի պոեզիայի մեջ: Ահա կտավների վրայից սահում է ծածկոցն ու վարագույրի տակից բացվում է կյանքը: Լռությունը խախտվում է թմբուկի ձայնով, և կադրում դարձյալ կտավներն են: Ժայռի ստորոտում, քարաբեկորների մեջ ևս նկարակալներ են՝ կտավներով, գագաթին՝ վրձիններ: Կա ռեժիսորական հրաշալի աշխատանք, որ գուցե փոքր-ինչ անհասկանալի թվա Մինաս արվեստագետին անծանոթ մարդկանց, բայց նրանք, ովքեր գեթ մեկ անգամ հաղորդակից են եղել նկարչի արվեստին, հաստատ կգտնեն նրան այս դիմանկարի մեջ: Սա պատմություն է Մինաս նկարչի, մարդու, ստեղծագործողի մասին, մարդկանցից հեռու, իր կտավների ու գույների աշխարհում ապրող, բայց արվեստի քարքարոտ ճանապարհին մաքառող արվեստագետի մասին: Այսպես է տեսել, զգացել, պատկերացրել Մ. Վարժապետյանը Մինասին և նրա մեծությանը համարժեք կերպար ստեղծելու խնդիրը լուծել է իր և իր մասին եղած ստեղծագործությունների համադրման ճանապարհով: Բոլորովին այլ խնդիր և նպատակ ունի Մինասի մասին պատրաստված մեկ այլ՝ Արա Շիրինյանի «Մինասի առեղծվածը» ֆիլմը²⁵, որը փորձում է բացահայտել նկարչի հանելուկային մահվան առեղծվածը: Տարբեր կարծիքներ, վարկածներ, հիշողություններ և փաստեր, այս ամենը համախմբված մի հարցի շուրջ՝ ինչո՞ւ: Եթե Մարատ Վարժապետյանի Մինասը հուզական, գունեղ աշխարհի երանգներն է հաղորդում հեռուստադիտողին, իսկ ճակատագրի առեղծվածն անթեղված է թմբուկի հուժկու հարվածների մեջ, ապա Արա Շիրինյանի Մինասը տարիների խորքից դարձյալ ձայն ու պահանջ է բարձրացնում՝ լուծելու իր առեղծվածը: Տարբեր մոտեցումներ՝ հենված տարբեր, սակայն բացառապես ճշմարիտ կենսական փաստերի ու դրվագների վրա: Այսուհանդերձ սա էլ բավարար չէ հերոսի մասին ասելիքն ավարտված համարելու համար:

Պահը ճիշտ ընկալելու, տրամադրություն ստեղծելու, հերոսին խոսեցնելու կամ նրա հետ զրուցելու կարողությունը լրագրողի մարդկային, հոգեբանական, մասնագիտական որակների համադրման արդյունք է: Գեղարվեստահրապարակախոսական ժանրերում հաճախ են հեղինակները հերոսին «Դուք»-ի փոխարեն «դու»-ով դիմում: Սա ևս որոշակի հոգեբանական հնարանք է և տեղին գործածության դեպքում մեծացնում է

²⁵ Տե՛ս **Շիրինյան Ա.**, Մինասի առեղծվածը, «Շողակաթ» հ/ը, ապրիլ, 2007:

խոսքի ուժը: Այս մոտեցումը հաճախ հանդիպում է այն դեպքում, երբ հեղինակը գործ ունի ոչ միայն իրեն, այլև հանրությանը հայտնի, սիրված հերոսի հետ: Նման ոճով է պատրաստված Անդրանիկ Մարգարյանին նվիրված հեռուստադիմանկարը՝ նման զրույցի, որը չի կայացել նրա կենդանության օրոք, և հիմա հեղինակը եկել է ասելու այն, ինչ կուտակված է հոգում:²⁶ Անդրանիկ մանուկից, պատանուց, երիտասարդից, հորից, զինվորից մինչև Անդրանիկ Մարգարյան հասարակական-քաղաքական գործիչն ու վարչապետը տանող ուղին հեղինակը ներկայացնում է փաստերի, առանձին դրվագների, նաև՝ փաստագրական կադրերի և լուսանկարների միջոցով՝ միաժամանակ զրուցելով հեռուստադիտողի և հերոսի հետ. «Գիտեմ, էս տեսակ բաներ չես սիրում, չես սիրում ուշադրության կենտրոնում լինել, բայց եկել ենք, եկել ենք ու ասում ենք՝ ծնունդդ շնորհավոր...»: Հեղինակը մենախոսության միջոցով ստեղծում զրույցի տպավորություն, իհարկե, ոչ պատահականորեն վարչապետին դիմելով «դու»-ով: Նկատի ունենալով, որ «դու»-ով սովորաբար դիմում են հարազատներին և Մեծերին՝ հեղինակն այսպիսով թե՛ շեշտում է հերոսի մեծ լինելը, և թե՛ պահպանում հարազատության անմիջական զգացողությունը՝ առանց որևէ պաշտոնականության:

Որպես վերջաբան՝ ընտրված է չափազանց խորհրդանշական երգ՝ Արթուր Մեսչյանի հեղինակությամբ, որն ամբողջացնում է ասելիքը՝ մեկ անգամ ևս թերթելով հերոսի կյանքի հայտնի և անհայտ էջերը.

«Դռները մեկ առ մեկ փակվում՝ կյանքիս անցած էջերի պես,
 էջերը լույս պահում սրտում, մնացածը տալիս քամուն,
 Եվ հեռանում՝ բարով մնաք...
 Ես հեռանում եմ ամենից, ամեն տեսակ սուտ խաղերից,
 Ես չեմ խաղում, բարով մնաք...»:

Այստեղ հեղինակի ասելիքն առավել ազդեցիկ և տպավորիչ է դառնում երաժշտության միջոցով՝ մեծացնելով հուզականությունը և լսարանի վրա ներգործության ուժը:

Հեղինակն իր խոսքը փոխարինել է առավել խոսուն տարբերակով՝ համոզված լինելով, որ դա թե՛ հոգեբանական ներգործության, թե՛

²⁶ Ա. Մարգարյանին նվիրված ֆիլմում նշված չեն ստեղծագործական խմբի անդամների անունները: Հավանաբար ֆիլմի ստեղծողներն այն համարել են ձոն վարչապետին՝ ողջ ժողովրդի կողմից:

խմաստային և թե՛ կառուցվածքային առումով լավագույն լուծումն է, և չի սխալվել:

Հեռուստատեսային ակնարկի և ընդհանրապես, գեղարվեստահրապարակախոսական ժանրերի արտահայտչամիջոցների առանձնահատկությունները դրսևորվում են թե՛ տեսաշարի (կադրի, պլանի, ռակուրսի) և թե՛ խոսքաշարի միջոցով: Ժանրերը թելադրում են համապատասխան լեզվաոճական և պատկերային մտածողության դրսևորումներ, որոնք էլ դառնում են կերպարակերտման կարևոր բաղադրիչ՝ փոխլրացնելով և հավասարակշռելով միմյանց: Անդրադառնանք մի խորագրի ևս: Արցախյան պատերազմին նվիրված Սամվել Թադևոսյանի «Խոնարհ հերոսներ» ֆիլմաշարը եթեր է հեռարձակվել հայաստանյան տարբեր հեռուստա-եթերներով՝ թեմայի ընտրության, ստեղծագործական մոտեցումների և կերպարակերտման առանձնահատկությունների շնորհիվ մշտապես պահանջված լինելով հեռուստալսարանի կողմից:

Ովքե՞ր են խոնարհ հերոսները: Թեև շարքի յուրաքանչյուր ֆիլմ այս հարցի պատասխանը տալիս է յուրովի, բայց հերոսության և խոնարհության գաղափարը ողջ խորությամբ ամփոփված է նախաբանի մեջ, որով սկսվում է ֆիլմերից յուրաքանչյուրը: «Նրանց, ովքեր խիզախ կյանքով դաժան մահը հեզնեցին և հպարտ մահով մեր սև կյանքին փայլ տվին: Դուք էիք, որ ազատության տատասկոտ ճանապարհին ցավոտ ու բոսոր մշուշի մեջ հյուսեցիք մեր ամպերից խիզախ ու գեղեցիկ երագները: Դուք էիք, որ ըմբոստության ժայռերի բարձրությունից գահավեժ՝ նետվեցիք ժողովրդի մեծ տառապանքի ծովը, որ մոլեգնած ու մրրկածուփ եռում էր ձեր ոտքերի տակ: Դուք էիք, որ բռնության ու արհավիրքի խեղդող խավարի մեջ ձեր բոցավառ աչքերի հրափայլ բոցով մոլոր ու լքված հոգիների ուղիները լուսավորեցիք: Փա՛ռք ձեզ: Հազար տարիների արյան մառախուղի միջից ձեր գլխին տեղացող անթիվ հարվածների տակ դուք քայլում եք անհողորդող, համառ ու վսեմ դեպի մի վեհագույն, մի սքանչելի նպատակ: Եվ այժմ, ով ուխտյալ հսկաներ, ազատության խորանի առաջ ծնրադիր՝ ձեզ եմ նվիրում ձեր արյունով ցողված այս կարմիր երագները և ձեզ, ով անանուն կորած մարտիկներ, մութ անտառներում և մռայլ ձորերում ընկած հերոսներ, որոնց վերջին հառաչանքները մրրիկներին են պահ տրվում, որոնց ոսկորները հողմերն են լիզում հեծեծալով... Փառք ձեզ, խոնա՛րհ հերոսներ...»: Սա՝ որպես սրբազան ձոն՝ յուրաքանչյուր նահատակին: Արթուր Ղարիբյան, Սիմոն Աչիկցյոյան, Վահե Բաղդասարյան,

Կարոտ Մկրտչյան, Մովսես Գորգիսյան, Մուրադ Զաքարյան, Մերուժան Մոսիյան, տասնյակ խոնարհ հերոսներ, ովքեր հերոսացել են մայր հողի սուրբ զոհասեղանին, որպես խոնարհ նահատակներ: Իսկ հետո՝ միանգամայն տարբեր ճակատագրեր, որոնց ուղիները խաչվել են խրամատներում: Ահա մի պայծառ անուն՝ Սիմոն Աչիկզյոզյան, որի պատմությունն սկսվում է այսպես. «Աչքերի մեջ Մեքաստիայի Վեզիրքյովլու գյուղի ծաղկապատ տափարակ դաշտերն էին: Աչքերի մեջ Հովհաննես պապի գերդաստանի կոտորածն էր, որի մնացորդները հրաշքով փրկվել ու որբանոցի սրտմաշուկ տարիներից հետո հիմնվել էին Ռումինիայում»: Խոսքին զուգահեռ՝ կադրում Մեծ եղեռնի արխիվային կադրերի ֆոնի վրա հերոսի հայացքն է՝ խորաթափանց, խոսուն, և հեղինակը շարունակում է ներկայացնել իր հերոսին. «Տաղանդավոր մանկավարժը, գիտնականը, երկրաբանը, նկարիչը, պոետն ու երգիչը զենքը ձեռքին մարտի ելավ՝ վերջնականապես սրբագրելու հատուցման պարտքը: Արիական դավանանքին զինվորագրված Երևանի քաղխորհրդի պատգամավորը հասկացել էր, որ մանդատների մանդատը թնդանոթի երկար փողն է...»: Այս տողերի մեջ հայորդին է, մտավորականի այն ճշմարիտ տեսակը, որը պատրաստ է ինքնագոհաբերման՝ հանուն վեհագույնի: Թեև ֆիլմաշարի յուրաքանչյուր հերոս ներկայացված է յուրովի, նրանց կերպարները դառնում են միջոց՝ ստեղծելու իրականության ամբողջական պատկերը, մոայլ, բայց փառավոր օրերի տրամադրությունները, ընդհանրապես կյանքը՝ վառողի ծխի միջից: Յուրաքանչյուր կերպարի պատմությունն պատմություն է մի ազատագրված տարածքի, մի փառահեղ հաղթանակի, երբեմն էլ, ցավոք, պարտության դառը հոգոց: Սիմոն Աչիկզյոզյանի լեզունը անթեղվում է այնտեղ, ուր տխրահոչակ «Կոլցո» գործողության ջանքերով սկսվում է Գետաշենի, Մարտունաշենի անկումը: «1991 թվականի մարտի 29-ն էր: Երևի զգում էր, գիտեր վաղվա սպասելիքը: Ոտքերը տարան գյուղի գերեզմաններ՝ Սիմոնը մոմ էր վառում և երդումի իր սրբագրած տողերը մրմնջում. «Զոհվելուց չեմ վախենում. միայն թուրքի սրբապիղծ ձեռքը մարմնիս չկաչի»»: Ի լրումն խոսքի՝ Էկրանին բացառիկ ու արժեքավոր կադրեր են. ինքը՝ Սիմոն Աչիկզյոզյանն է, խաչքարի առաջ ծնրադիր՝ մոմը ձեռքին:

Խոսքի գեղարվեստականությունը տեղի չի տալիս անգամ այն պահին, երբ որոտում են թնդանոթները: Մարտական գործողությունների մանրամասն նկարագրության մեջ անգամ բանաստեղծական շունչ կա,

ոգի, որ իշխում է ողջ ֆիլմի ընթացքում: Ահա այդ պատկերներից մեկը. «Խելառությունը հաղթել էր խոհեմությանը, անկոտրում կամքը ավելի զորեղ էր, քան ուղղաթիռներն ու անհաշիվ տանկերը: Պետոն ու Կտրիճը, Արարատն ու Բաղրամյանի Մանվելը մոտեցան տանկերի շարասյանը: Դեղը Աքանյան Ներսեսի տանիքից իր գնդացիքով մեկը մյուսի ետևից ալլահի բաժինն էր ավելացնում: Մանուկն ու Վրեժը փամ-փուշտներն էին հասցնում: Քիչ վերև դիրքավորվել էին Կարոտը, Պետոն, Անդոն ու Մանվելը»: Տպավորությունն այնպիսին է, ասես հեղինակը ակնատեսն է ողջ մարտի և հիմա փորձում է թարմացնել հիշողությունն ու պատմել այն, ինչ տեսել է, զգացել: Սա արհեստական ներկայության տպավորություն ստեղծելու միտումով գործածված հնար չէ: Իրականում ֆիլմի հեղինակ և ռեժիսոր Սամվել Թադևոսյանը բազմիցս եղել է պատերազմի թեժ կետերում՝ անձամբ ժապավենին հանձնելով Արցախյան հերոսամարտի բազում էջեր: Ահա թե ինչու կարողանում է ակնդրին փոխանցել տեսախցիկին և սեփական աչքերին պահ տվածը և՛ որպես փաստագրական նյութ, և՛ ապրած պահերի արձագանք: Հորդաբուխ զգացմունքներով տողերը սուկ գեղեցիկ խոսքեր չեն, այլ ապրածի, զգացածի վավերագրեր: Սրանով է բացատրվում նաև տեսաշարի և ձայնաշարի միջև կատարյալ ներդաշնակությունը, երբ կադրը դառնում է ոչ թե տեքստ «փակելու» միջոց (ինչպես հաճախ պատահում է ռեժիսորական պրակտիկայում), այլ լրացում, տեսանելի է դարձնում ասվածը՝ թե՛ հերոսների, թե՛ մարտական գործողությունների, տանկերի ու հրանոթների իրական պատկերներով: Կադրերի առատությունը հատկապես Արցախյան պատերազմի մասին պատմող ակնարկների և տեսաֆիլմերի ամենամեծ առավելությունն է, որովհետև հենց այդ կադրերն են կատարվածի վավերագրերը, վկաներն ու պատմական ճշմարտության կրողները՝ թեկուզ առանց մեկնաբանության:

Հեղինակը հետաքրքիր հնարքով բացում է հայոց ոգու գաղտնիքը, որը հրաշքներ էր գործում անհավասար մարտի դաշտում. «Արյունածարավներն արդեն զազանաբար սպանել էին Աքանյան Շամիրին, Խաչիկին, Ռազմիկին, Հովհաննեսին: Դեղը թեքվեց Սիմոնի ուղղությամբ ու ասաց. «Դաշնակ ախպեր, պիտի՛ երգենք»: Ու Սիմոնի առաջին կրակոցի հետ պայթեց ֆիդայական խրոխտ երգը. դաշնակցական խումբ, էրթանք մենք Սասուն, Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում...»:

Իսկ ինչպե՞ս են ընկնում քաջերը: «Լավեց վիրավոր հրամանատարի սաստող ձայնը՝ վերն չբարձրանաք: (Թեև բարձրանում էին իրեն փրկելու): Առաջին անգամ տղերքը զինվորական խիստ հրամանի մեջ անսահման սեր, անսահման հայրական քնքշանք տեսան: Տանկի երկրորդ, ապա երրորդ կրակոցը լռեցրին և՛ Միմոնի երգը, և՛ գնդացրի...»:

Ծննդավայր, ընտանիք, հավատամք, մարդկային բարձրագույն որակներ և սխրանքի ճանապարհ. ահա այն առանցքային կետերը, որոնց միջոցով հաջողվել է ամբողջացնել, ստեղծել կերպար՝ և՛ որպես սխրանքի ու հերոսացման օրինակ: Հեղինակը վառ, ինքնատիպ անհատականությանը տարել է դեպի տիպականացում՝ ցույց տալով հերոսացման այն ճանապարհը, որով ազատամարտի տարիներին քայլեցին հազարավոր խոնարհ հերոսներ:

Ֆիլմում պատահական ոչինչ չկա: Յուրաքանչյուր դետալի մեջ իմաստ ու ասելիք կա՝ լռությամբ կամ խոսքով: Ուղղաթիռի թռիչքի կողքին արագիլի թռիչք կա, հարդը կտուցին բույնը նորոգող արագիլի կողքին՝ ավեր տներ ու անտուն մարդիկ, դեպի երկինք նայող թնդանոթի փողերի կրողին՝ հողին խոնարհված խաչքարեր: Թվացյալ խաղաղ մայրամուտի բոսորի մեջ լողացող ուղղաթիռն ասես փորձում է չափել իրականության ու երազի սահմանը: Հակադրություններ, որ գեղարվեստական հաջողված պատկերներ են ստեղծում անգամ այնտեղ, ուր թվում է՝ գեղարվեստն ընդհանրապես պիտի տեղ չունենա:

Հայ գրողները հաճախ են դիմել բնության միջոցով մարդկային տրամադրություններն արտահայտելու հնարքին (Թումանյան, Բաքմի, Բակունց, Գալշոյան...): Դա գեղարվեստական գրականության գեղարվեստաարտահայտչական միջոցներից մեկն է: Ֆիլմում ևս ստեղծված է նմանօրինակ պատկեր. «Ալիարակի փեշից Քյուռաքչայի գետը պղտոր ու վտիտ երևաց: Մռայլ թուխպերը ներխուժում էին խոցված Մարտունաշեն ու անթափանց մառախուղի միջից կարծես Միմոնի խրոխտ երգն էր հնչում...»: Ողջ տեքստն արձակ բանաստեղծություն է, որից, սակայն, չի տուժում փաստագրական նյութը, չի չափազանցվում ոչ մի փաստ, փոխարենը մեծանում է խոսքի ուժը և տպավորության ազդեցությունը:

Ստեղծագործությունը տպավորիչ է, եթե ունի ուժեղ սկիզբ և վերջաբան: «Խոնարհ հերոսների» սկիզբը ձոն է՝ բոլոր հայորդիներին, վերջաբանը տարբեր է յուրաքանչյուրի համար այնպես, ինչպես տարբեր է եղել ամեն մի վախճան՝ ընդհանուր՝ սխրանք անվան տակ: Մի-

մոն Աշիկգյոզյանի սխրանքի պատմությունն ավարտվում է ի՛ր երգով՝ իհարկե, դարձյալ ոչ պատահական. «Չէ, չէ, չէ, չէ, սխալ է, սխալ է, մեր աշխարհն այլ է, մեր աշխարհն այլ է...»:

Գեղարվեստահրապարակախոսական ժանրերի թե՛ տպագիր, և թե՛ հեռուստառադիոդրսերումներում կերպարակերտման կարևորագույն գործոնը հեղինակի ձեռագիրն է, որի հիմքում ընկած են գրիչը, աչքը, ընկալելու և արտահայտվելու կարողությունը: Մնայուն են այն ստեղծագործությունները, որտեղ հեղինակին հաջողվում է մեկտեղել այդ որակները:

Ամփոփելով գեղարվեստահրապարակախոսական ժանրերում կերպարակերտման առանձնահատկությունների շուրջ դիտարկումները՝ պետք է նկատել, որ անկախ ժանրային կանոններից, յուրաքանչյուր հերոս թելադրում է նաև իր կանոնները՝ պայմանավորված անձի ինքնությամբ և հոգեբանությամբ, քանզի մարդկային հարաբերությունները խիստ անհատական են և հաճախ դուրս են գալիս նույնիսկ ամենահանարեղ բանաձևի շրջանակից, ուստի և անձի ինքնությունն է դառնում այն կամերտոնը, որով պետք է առաջնորդվի լրագրողը՝ ցանկալի արդյունքի հասնելու համար: Այս մոտեցումը համապատասխան դրսերումներ է գտնում թե՛ տպագիր, և թե՛ ռադիոհեռուստատեսային գեղարվեստահրապարակախոսական ժանրերում:

Ուսումնասիրելով գեղարվեստահրապարակախոսական ժանրերի համացանցային դրսերումներ՝ կարելի է նկատել, որ արդի համացանցային մամուլը առավելապես տեղեկատվական հոսք ապահովող հաղորդակցության միջոց է, որի օպերատիվության պահանջը նվազագույնի է հասցրել գեղարվեստական մտածողության դրսերումը, ուստի լսարանը գեղարվեստահրապարակախոսական ժանրի ստեղծագործություններ շարունակում է ակնկալել տպագիր էջերից և հեռուստառադիոէջերից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գալշոյան Մ.**, Մարութա սարի ամպերը, Երևան, «Սովետական գրող», 1980:
2. **Գալշոյան Մ.**, Քեզ վերևից չպետք է նայել, Գրական ակնարկների ժողովածու, Երևան, «Նաիրի», 1990:
3. **Ղուկասյան Մ.**, Վկայություն քսաներորդ դարի, Երևան, 2005:

4. Ղուկասյան Մ., Միասերը, «Գրական թերթ», 2003, ապրիլի 4:
5. Մաթևոսյան Հ., Խաչքար Հայաստան, Երևան, 2002:
6. Շիրինյան Ա., Մինասի առեղծվածը, «Շողակաթ» հ/ը, 2007, ապրիլ:
7. Վարժապետյան Մ., Մինաս, «Հ 1», 2008, սեպտեմբեր:
8. <http://www.asparez.am/tag/%D5%A4%D5%AB%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80/>
9. <http://www.asparez.am/news-hy/azatutyun-srach-tevavor-darbiny-hy/#more-90686>

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ВЫДУМКИ В СОЗДАНИИ ОБРАЗА В ОЧЕРКЕ

Асттик Абраамян

Северный Университет, кандидат филологических наук

Стержневой задачей статьи является изучение особенностей создания реального образа с помощью психологических выдумок. Как распознать героя, как создать портрет, как эпизод сделать средством выявления человеческой сути. Это те вопросы, ответы на которых являются важнейшим условием работы журналиста.

Использование психологических выдумок в художественно-публицистическом жанре необходимо с одной стороны для создания образа, с другой стороны для психологического и эмоционального воздействия на аудиторию. В работе представлены, как печатные, так и телевизионные проявления, а также связь автор-герой-аудитория и связанные с ними наблюдения.

Ключевые слова: создание персонажа, образ, эпизод, взаимодействие автор-персонаж-зритель, психологический обман, человек-герой-персонаж, портрет, психотворчество, образ-речь-звук, телевизионный портрет, художественно-публичное.

PSYCHOLOGICAL MEANS OF CHARACTER CREATION IN THE ESSAY
GENRE**Astghik Abrahamyan**

Northern University, PhD in Philology

This article explores the psychological methods utilized in character creation, focusing on the nuances of developing authentic characters. It addresses critical questions such as: How can we understand the protagonist? What techniques are effective for crafting a character portrait? How can an episode serve as a tool for revealing human nature? These inquiries are fundamental to a journalist's craft. The use of psychological techniques in both fiction and journalistic writing is vital not only for character development but also for influencing the audience psychologically and enhancing emotional engagement. This work examines both print and television representations within the realms of fiction and journalism, analyzing the relationships between the author, the character, and the audience, along with various related observations.

Keywords: *character creation, image, episode, author-hero-audience interactions, psychological tricks, person-hero-character, portrait, psyche-creation, image-speech-sound, television portrait, artistic-publicistic.*

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Վահագն Պետրոսյան

Հյուսիսային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս

Vahagn.Petros@mail.ru

Համառոտագիր

Սույն հոդվածը նվիրված է պետական վերահսկողության, իրավական և մասնագիտական հսկողության, ֆինանսական վերահսկողության և հաշվեքննության՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումներին և առանձնահատկություններին, որոնք արտահայտված չեն ՀՀ ազգային օրենսդրության մակարդակում կամ իրացվել են հասկանալի կարգավորումների համատեքստում:

Հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել համայնքների և դրանց տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների պաշտպանության և այդ նպատակով Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով ամրագրված պետական վերահսկողության գործիքակազմերի միջև եղած իրավական հակասությունները՝ ներկայացնելով այն սահմանադրական նորմերը, որոնք առ այսօր չեն իրացվել կամ մասամբ են իրացվել ներպետական օրենսդրական ակտերում:

Հոդվածում մասնավորապես անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի միջև եղած օրենսդրական հակասություններին, համայնքների և դրանց տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության սահմանափակումներին, վերահսկողություն և հսկողություն իրականացնող մարմինների լիազորությունների և գործունեության շրջանակներին: Այս հարցերը քննարկվել են նաև տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի դրույթների լույսի ներքո՝ շեշտը դնելով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բացառիկության և լիակատարության սկզբունքի վրա:

***Հիմնաբառեր՝** համայնք, տեղական ինքնակառավարում, տեղական ինքնակառավարման մարմիններ, օրենք, երաշխիքներ, խնդիր, լիազորություն, համայնքների իրավունքներ, խարտիա:*

Տեղական ինքնակառավարման համակարգը պետության հանրային կառավարման համակարգի բաղկացուցիչ մասն է, որի գործունեության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերություններում մասնակից են դառնում ոչ միայն համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության գործադիր իշխանության մարմինները և դրանց ստորաբաժանումները:

Տեղական ինքնակառավարման համակարգում օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում հանդես են գալիս Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, հանրապետական գործադիր մարմինները՝ նախարարությունները, վարչապետին առընթեր կամ ենթակա մարմինները, նախարարություններին ենթակա մարմինները, դրանց տարածքային ստորաբաժանումները, տարածքային կառավարման մարմինները, տեսչական մարմինները, հաշվեքննիչ պալատը և այլն¹:

Պետության և ՏԻՄ-երի փոխհարաբերությունները իրականացվում են հիմնականում հետևյալ ուղղություններով՝

- ✓ *տնտեսական և ֆինանսական.* ներդրումային ծրագրերի ներկայացում համայնքների կողմից, նպատակային դրամաշնորհների (սուբվենցիաների) տրամադրում և դրանց նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացում պետության կողմից, ֆինանսական համահարթեցման նպատակով հատկացվող դոտացիաների տրամադրում, համայնքների կողմից վերցվող վարկերի և փոխառությունների մասով համապատասխան համաձայնության (պետական լիազոր մարմնի կողմից) տրամադրում, պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով, ինչպես նաև նպատակային դրամաշնորհների նպատակով պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների ծախսման նկատմամբ ֆինանսական վերահսկողության իրականացում և այլն,
- ✓ *իրավական հսկողություն,* որը սահմանափակվում է՝ բացառապես լիազորությունների իրականացման ընթացքում տեղական

¹ Տե՛ս Վահագն Պետրոսյան, Համայնքների իրավունքների տեսական և իրավական հիմունքները, «Հանրային կառավարում» գիտական հանդես, № 5, Ե., 2019, էջ 149-157:

ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականությունն ստուգելով,

- ✓ *մասնագիտական հսկողություն*. իրականացվում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացման արդյունավետությունն ու միասնականությունը ստուգելու նպատակով,
- ✓ *հաշվեքննություն*. համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, համայնքի սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ հաշվեքննության իրականացում,
- ✓ *տեսչական ստուգումներ*. տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպում և անցկացում,
- ✓ *պետական վերահսկողություն*. տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվող ուսումնասիրություններ՝ պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով:

Ըստ էության՝ պետական վերահսկողությունը պետական մարմինների կողմից իրականացվող վերահսկողության տեսակն է: Պետք է նշել, որ վերահսկողության այդ տեսակները և դրանց իրականացման ընթացակարգերը ներառված չեն որևէ կոնկրետ օրենսդրական ակտում, այլ սահմանվում են օրենսդրության տարբեր ոլորտները կարգավորող օրենքներով: Այսպիսով, օրինակ, անկախ իրավական կառույցը Հայաստանի Հանրապետության դատախազությունն է, որի կարգավորման առարկան ներառում է տեղական ինքնակառավարման ոլորտում դատախազական վերահսկողության իրականացման հետ կապված կանոնները կամ Հաշվեքննիչ պալատը, որը ևս անկախ սահմանադրական մարմին է և համայնքներում կարող է իրականացնել հաշվեքննություն:

Դատախազական վերահսկողությունը համայնքների և դրանց ՏԻՄ-երի գործունեության իրականացման նկատմամբ պետական վերահսկողության կարևոր և հիմնական տեսակներից է: Այս վերահսկողության իրականացումը դատախազության կողմից, ըստ էության, փոխարինում է այլ պետական վերահսկողություն և հսկողություն իրականացնող մարմիններին, որոնք վերահսկում են համայնքների գործունեությանը վերաբերող որոշակի կոնկրետ բնագավառներ և, հսկողության

արդյունքներով պայմանավորված, այդ նյութերը փոխանցում են դատախազությանը²:

Տեղական ինքնակառավարման և առհասարակ համայնքների գործունեության ոլորտում դատախազության դերը ներառում է բնակչության իրավունքների և օրինական շահերի, ՏԻՄ-երի և դրանց պաշտոնատար անձանց պաշտպանությունը, ՏԻՄ-երի գործունեության անօրինական միջամտության դեպքերում պատասխանատվության միջոցների կիրառումը, դրանց գործունեության սահմանված կարգի խախտումները, այդ մարմինների կողմից քաղաքացիների իրավունքների ոտնահարման դեպքերում պատասխանատվության միջոցների կիրառումը, համայնքային կամ հանրային գույքի վատնումը և այլն³:

Այսպես՝ համաձայն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատախազի կողմից պետական շահերի, այդ թվում՝ պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետության կողմից համայնքին ուղղված ֆինանսական միջոցների պաշտպանության հարցով կարող է համայնքի դեմ հայց հարուցվել, որի դեպքերը սահմանված են մեջբերված հոդվածով:

Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչն իրավունք ունի ժամանակավոր դադարեցնել հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կգրադվի հանցավոր գործունեությամբ: Ըստ էության՝ Քր.դատ.օր.-ով սահմանված և վերը մեջբերված կարգավորումը իրացվում է նաև համայնքների ղեկավարների նկատմամբ:

Մեր կարծիքով՝ դատախազական նման լիազորության սահմանումը համաչափ է, քանի որ այն բխում է հանրային շահերի պաշտպանության իրավունքից և հանրային ունեցվածքի վերականգնման

² Տե՛ս **Багмст Л.М.**, Правовые и организационные вопросы обеспечения органами прокуратуры конституционно-правовой ответственности органов государственной власти субъектов РФ и органов местного самоуправления, М., 2005, с. 20:

³ Տե՛ս **Сизов В.**, Прокурорский надзор за законностью правовых актов органов местного самоуправления, Законность, № 6, М., 2006, с. 16-19:

անհրաժեշտությունից: Անշուշտ, ինչպես որ համայնքների գործունեության նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող այլ մարմինները, այնպես էլ դատախազական վերահսկողություն իրականացնող մարմինը իրավակիրառ պրակտիկայում այդ վերահսկողությունն իրականացնելիս թույլ է տալիս բազմաթիվ խախտումներ և սխալներ, սակայն սա ոչ այնքան օրենսդրական կարգավորումների խնդիր, որքան համայնքների ՏԻՄ-երի իրավագիտակցության մակարդակի, ինչու չէ՝ նաև համայնքների աշխատակազմերում բարձր որակավորում և հմտություններ ունեցող իրավաբանների բացակայության հարցն է:

Սակայն հարկ է նկատել, որ դատախազի կամ քննիչի կողմից համայնքի ղեկավարի լիազորությունները ժամանակավորապես կասեցնելու դեպքում բաց է մնում վերջինիս փոխարինող անձի, այն է՝ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի նշանակման հարցը: Գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը սահմանել է համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու դեպքերն ու կարգը, սակայն այն, ըստ էության, չի կարգավորում համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու հետ կապված իրավահարաբերությունները՝ դատախազի կամ քննիչի կողմից նրա լիազորությունները ժամանակավորապես կասեցնելու դեպքերում: Օրենսդրական նման բացը իրավակիրառ պրակտիկայում առաջացնում է խնդիրներ:

Այսպես՝ 2018 թվականին ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի քաղաքապետի(համայնքի ղեկավարի) լիազորություններն իր նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում կասեցվել են համապատասխան դատախազի կողմից: Բերված օրինակում թե՛ Մասիս համայնքի ավագանին և թե՛ պետական լիազոր մարմինը հայտնվել էին իրավական փակուղում, քանի որ օրենքը այս դեպքի համար չի սահմանել համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու իրավասություն ունեցող անձին և նշանակման ընթացակարգը: Ճիշտ է, նշված դեպքով պայմանավորված ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է պաշտոնակատար, սակայն այդ նշանակման համար հիմք է հանդիսացել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որոնք սակայն վերաբերում են համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքերին:

Իրավակիրառական անհրաժեշտությունից ելնելով, ինչպես նաև Քր.դատ.օր. 152-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների կիրարկումը լիա-

կատար դարձնելու նպատակով առաջարկվում է լրացում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածում, մասնավորապես՝ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1. կետով. «2.1. Դատախազի, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչի կողմից համայնքի ղեկավարի պաշտոնավարությունը ժամանակավոր դադարեցնելու որոշման ընդունումից հետո եռօրյա ժամկետում մարզպետը համայնքի ղեկավարի տեղակալին նշանակում է համայնքի ղեկավարի պաշտոնակատար»:

Վարչական հսկողության և վերահսկողության գործառնությունները իրականացվում են կառավարության կողմից լիազորված պետական մարմինների կողմից անմիջականորեն կամ մարզպետների միջոցով: ՀՀ ներպետական օրենսդրությունը այլևս չի կիրառում «վարչական հսկողություն» կամ «վարչական վերահսկողություն» եզրույթները, քանի որ Սահմանադրության 188-րդ հոդվածն այլևս սահմանել է իրավական և մասնագիտական հսկողության տեսակները և դրանց հասկացությունները: Վերջին քսան տարիներին գործող օրենսդրությունը սահմանում էր «վարչական հսկողություն» հասկացությունը և դրա իրականացման կարգը, որը, ի դեպ, բխում էր Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 8-րդ հոդվածի բովանդակությունից: Սակայն 2015թ. Սահմանադրական փոփոխությունները հիմք հանդիսացան խմբագրելու այս հսկողության հետ կապված իրավահարաբերությունները սահմանող ներպետական օրենսդրական ակտերը: Չնայած այն հանգամանքին, որ մասնագիտական և իրավական հսկողությանը վերաբերող օրենսդրական խնդիրներին արդեն իսկ անդրադարձել ենք սույն աշխատանքի նախորդ գլխում, այնուամենայնիվ անհրաժեշտ ենք համարում ևս մեկ անգամ վերադառնալ այդ ինստիտուտին՝ որպես համայնքների գործունեության նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող մարմիններից մեկի:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օրենսդրական կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան ընդհանրապես չեն համապատասխանում իրար, մասնավորապես՝ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունների տեսանկյունից: Այսպես՝ համաձայն Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ հողային օրենսգրքի և Քաղ.օր.-ի կար-

գավորումների՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքը տնօրինվում է համայնքի ավագանու կողմից՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

Համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի տնօրինումն ըստ էության համարվում է համայնքների ՏԻՄ-երի՝ օրենքով սահմանված սեփական լիազորությունը, հետևաբար այս լիազորության իրականացման նկատմամբ կարող է իրականացվել բացառապես իրավական հսկողություն: Այսպես՝ 2019 թվականի սկզբից ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացվում են իրավական հսկողություն ենթադրող, սակայն իրավական հսկողության օրենսդրական կարգավորումների հետ որևէ աղերս չունեցող գործողություններ: Նշված մարզի Արմավյան համայնքի կողմից հրապարակային աճուրդի են ներկայացվել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր, որոնք անցկացված աճուրդների հիման վրա օտարվել են օրենքով սահմանված հողամասերի տվյալ տարածքի համար նախատեսված կադաստրային արժեքների շրջանակներում: Սակայն ՀՀ Կոտայքի մարզպետը, իրավական հսկողության արդյունքներով պայմանավորված, կայացրել է որոշում, որով արգելել է Արմավյան համայնքի ղեկավարին կազմակերպել և իրականացնել համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի օտարման գործընթաց:

Նախ՝ անհրաժեշտ է փաստել, որ մարզպետը համայնքի ղեկավարի գործողությունները սահմանափակելու նման լիազորությամբ օժտված չէ, ավելին՝ մարզպետը իրավասու չէ միջամտել հանրային իրավունքի իրավաբանական անձ հանդիսացող համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարման գործընթացներին: Մարզպետը, իրավական հսկողության արդյունքներով պայմանավորված, կարող էր դիմել դատարան՝ գույքի օտարման գործարքները անվավեր ճանաչելու հայցապահանջով: Այսպիսի դեպքերը բազմաթիվ են և հանդիպում են ոչ միայն հիշատակված մարզի համայնքներում, այլև ամբողջ հանրապետությունում: Նմանատիպ խնդիրներն ունեն իրենց առաջացման պատճառները և մենք գտնում ենք, որ դրանք կապված են ինստիտուցիոնալ կարգավորումների հետ:

Այսպես՝ Սահմանադրության 188-րդ հոդվածը հստակ սահմանել է, որ համայնքի ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացման կարգը և դեպքերը սահմանվում են օրենքով, սակայն հարկ է նկատել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքն ամբողջությամբ չի

կարգավորում իրավական հսկողության դեպքերին և ընթացակարգին վերաբերող իրավահարաբերությունները: Նշված օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածները սահմանում են իրավական հսկողության հասկացությունը, իրականացման նպատակները և հսկողություն իրականացնող մարմնի շրջանակային բնույթ կրող գործողությունները: Օրենքով ոչ միայն ընդգրկվում է ներկայացված չեն հսկողություն իրականացնող մարմնի գործողությունները, այլև հսկողության ենթակա մարմնի՝ այդ հսկողության ընթացքում հնարավոր խախտված իրավունքների պաշտպանությանը միտված կառուցակարգերը:

Ելնելով նշվածներից՝ առաջարկվում է խմբագրել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ գլուխն ամբողջությամբ, մասնավորապես՝ հստակ սահմանել իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու դեպքերը, ժամկետները, հսկողության իրականացման ամենամյա ծրագրի ընդունման և իրականացման հետ կապված իրավահարաբերությունները, համայնքի ՏԻՄ-երի իրավունքները հսկողության իրականացման գործընթացներում և դրանց արդյունքների բողոքարկման իրավական հնարավորությունների կառուցակարգերը:

2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» նոր խմբագրությամբ օրենքի փաթեթում ներառված էր նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը ևս ընդունվեց օրենսդրի կողմից: Սակայն մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս օրենքում դեռևս առկա են մի շարք կարգավորումներ, որոնք ենթադրում են հսկողություն իրականացնելու հետ կապված իրավահարաբերություններ, սակայն օրենսդրական սահմանման իմաստով հակասում են և՛ Սահմանադրությանը, և՛ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում «վարչական հսկողություն» եզրույթը և հասկացությունը⁴: Սահմանադրական վերը նշված կարգորոշումների համաձայն համապատասխան փոփոխություններ դեռևս 2016 թվականին կատարվել են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, մինչդեռ Երևանի մա-

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններ, 188-րդ հոդված:

սով դեռևս պահպանվում է նախկին Մահմանադրական կարգորոշումներով պայմանավորված եզրույթների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից՝ մենք առաջարկում ենք փոփոխություններ կատարել նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ գլխում, «վարչական հսկողություն» բառերը փոխարինելով համապատասխանաբար «իրավական հսկողություն» և «մասնագիտական հսկողություն» բառերով:

Ֆինանսական հսկողություն: Նման պետական վերահսկողությունը՝ որպես ֆինանսական վերահսկողություն, բավականին նշանակալից դեր և նշանակություն ունի համայնքների կայուն կենսագործունեության և ճիշտ բյուջետավորման հարցերում: Ֆինանսական վերահսկողությունը բյուջետային գործընթացի անբաժանելի մասն է, թե՛ պետական, թե՛ համայնքային մակարդակով: Ֆինանսական հսկողության հիմնական նպատակն այն է, որ առաջին հերթին համայնքների և դրանց ՏԻՄ-երի կողմից պահպանվեն սահմանված օրենսդրական կարգավորումները և իրացվեն դրանցից բխող պարտավորությունները, երկրորդ՝ ձեռնարկված ֆինանսական հսկողությունը և դրանով պայմանավորված գործողությունները բացահայտեն ֆինանսական միջոցների ծախսման տնտեսական հիմնավորումը և արդյունավետությունը, ինչպես նաև դրանց համապատասխանությունը համայնքային խնդիրներին⁵:

Ըստ որում՝ ֆինանսական հսկողություն իրականացվում է պետական կառավարման մարմինների և ՏԻՄ-երի գործունեության որոշակի կազմակերպական և իրավական ձևերի ու մեթոդների միջոցով՝ նպատակ ունենալով ապահովելու ֆինանսական գործարքների օրինականությունը, տրամաբանությունը և հուսալիությունը, ֆինանսական և տնտեսական գործունեության արդյունավետության օբյեկտիվ գնահատումը, ինչու չէ՝ նաև համայնքների սեփական եկամուտների և տնտեսական ցուցանիշների բարձրացումը⁶:

Կախված ֆինանսական վերահսկողության մակարդակից՝ կարող են լինել պետական վերահսկողության, հաշվեքննության կամ անկախ աուդիտի դրսևորումներ. որոնցով պայմանավորված ֆինանսական վե-

⁵ Տե՛ս Работник контрольного органа муниципального образования, под ред. И.Л. Кокина, М., 2006, с. 201:

⁶ Տե՛ս Финансовое право, под ред. Н.И. Химичевой, №15, М., 2001, с. 112, Финансовое право, под ред. О.Н. Горбуновой, М., 2002, с. 108–109:

րահսկողության մարմինները ունենում են տարբեր լիազորություններ, որոնք սահմանվում են օրենսդրությամբ⁷: Պետական ֆինանսական վերահսկողությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ՀՀ հաշվեքննիչ պալատի, ֆինանսների նախարարություն և ՀՀ վարչապետին ենթակա պետական վերահսկողության ծառայության կողմից: Համայնքային բյուջեների կատարման վերահսկողության ապահովման գործում կարևոր դեր ունեն նաև հարկային մարմինները, որոնք ստուգում են հարկային և ոչ հարկային վճարումների հաշվարկման օրինականությունը և դրանք համապատասխան համայնքի բյուջե փոխանցելու ընթացքը:

Ֆինանսական վերահսկողության հիմնական ձևերն են ուսումնասիրությունը, աուդիտը, ստուգումը, վերահսկողությունը, նորմատիվ ակտերի ու ֆինանսական այլ փաստաթղթերի (ներառյալ դրանց նախագծերի) ուսումնասիրությունները:

Ֆինանսական վերահսկողության արդյունքում բացահայտված ֆինանսական խախտումների հայտնաբերման դեպքերում կարող են կիրառվել հարկադրանքի տարբեր միջոցներ, այդ թվում՝ քրեական պատասխանատվություն: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ՏԻՄ-երի կողմից իրականացվող բյուջետային կամ ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացվում է ֆինանսական հսկողություն՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Վերը նշված օրենքի շրջանակում, սակայն, այն ոչ թե համարվում է ֆինանսական հսկողություն, այլ՝ ֆինանսական վերահսկողություն, որն իրականացվում է ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի, այնպես էլ նույն նախարարության ենթակայությամբ գործող ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված է համայնքների բյուջեների կատարման վերահսկողությունը: Համաձայն նշված հոդվածի 1-ին մասի՝ համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են համայնքի ավագանին, Ազգային ժողովը և կառավարությունը՝ օրենքով

⁷ Տե՛ս **Варфоломеева Ю.А.**, Правовые основы финансового контроля, Финансовое право, № 12, М., 2005, с. 10-15:

իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Կառավարությունը, ի դեմս ֆինանսների նախարարության, համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է պետական բյուջեից համայնքին տրված նպատակային հատկացումների (սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից համայնքի բյուջե մասհանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների) օգտագործման, ինչպես նաև պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների օգտագործման և դրանց մարման ծրագրի նկատմամբ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը բյուջետային վերահսկողությունն իրականացնում է իր կողմից մշակված և հաստատված ամենամյա ծրագրին համապատասխան: Այդ ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքների ցանկը և վերահսկողություն իրականացնելու եռամսյակային ժամանակացույցը: Ֆինանսական վերահսկողությունը վերջինիս կողմից իրականացվում է այդ ժամանակացույցին համապատասխան, եթե անգամ լինում են դեպքեր, երբ պետական որևէ մարմին դիմում է Ֆինանսների նախարարությանը հրատապ կարգով որևէ համայնքում ֆինանսական վերահսկողություն իրականացնելու նպատակով, ապա Ֆինանսների նախարարությունը մերժում է այդ դիմումը՝ հիմք ընդունելով իր կողմից հաստատված ժամանակացույցով տվյալ համայնքում վերահսկողություն իրականացնելու դրույթները: Ուրեմն ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է ծրագրված ժամանակացույցի հիման վրա և չի ենթադրում պարբերական հսկողություն իրականացնելու գործընթաց: Համաձայն այդ ծրագրի՝ ՀՀ ոչ բոլոր համայնքներում է տարվա ընթացքում իրականացվում ֆինանսական վերահսկողություն:

Բազմաթիվ համայնքներ, որոնք չեն ստացել սուբվենցիաներ, չեն վերցրել վարկեր կամ փոխառություններ, պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով պետական բյուջեից չեն ստացել համապատասխան ֆինանսական միջոցներ, դուրս են մնում ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության իրականացման ամենամյա ծրագրից: Ֆինանսական վերահսկողության ընթացքում ֆինանսների նախարարության կողմից ստուգվում են միայն պետական բյուջեից համայնքին տրված նպատակային հատկացումների (սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից համայնքի բյուջե մաս-

հանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների) օգտագործմանը վերաբերող բյուջետային և ֆինանսական փաստաթղթերը:

Ի տարբերություն իրավական և մասնագիտական հսկողության՝ պետք է արձանագրել, որ ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է կոնկրետ պլանի համաձայն և դրանից դուրս հսկողություն իրականացնող մարմինը «չի մտնում համայնք»:

Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորող դրույթները համապատասխանեցնել միմյանց՝ մասնավորապես «վերահսկողություն» բառը փոխարինելով «հսկողություն» բառով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով ֆինանսական հսկողության լիազորությունը վերապահել բացառապես ֆինանսների բնագավառի պետական լիազոր մարմնին՝ հանելով Կառավարությանը և Ազգային ժողովին վերապահված վերահսկողություն իրականացնելու կառուցակարգերը:

23.03.2018թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Պետական վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը⁸, որի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ պետական վերահսկողական ծառայությունը օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով: Հիշատակված օրենսդրական կարգավորումների կիրառման և դրա արդյունքում իրավաիրացնող խնդիրների հայտնաբերման նպատակով մեր կողմից կատարվել են ուսումնասիրություններ, ինչի կապակցությամբ ստորև ներկայացվում է ուսումնասիրության օբյեկտը և մեր եզրահանգումները:

Այսպես՝ 2018 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի կողմից արձակվել է N 2/019-18 հանձնարարագիրը Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմում ուսումնասիրություն անցկացնելու վերաբերյալ (ժամկետը՝

⁸ Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.30/25(1383), Հոդված 472:

15.10.2018-16.11.2018 թթ.): Որպես ուսումնասիրության ենթակա ոլորտ նշվել է պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատումը: Այնուհետև 2018 թվականի հոկտեմբերի 16-ին ծառայության կողմից ստացվել է գրություն, որով պահանջվել է 5-օրյա ժամկետում ներկայացնել մի շարք տեղեկատվություն և նյութեր, ըստ էության՝ համայնքի գործունեությանն առնչվող բոլոր հնարավոր փաստաթղթերը: Գտնում ենք, որ վերահսկողական ծառայության կողմից խախտվել են համայնքի հիմնական իրավունքները հետևյալ պատճառաբանություններով.

1. օրենքով համայնքների նկատմամբ «անսահմանափակ» վերահսկողություն սահմանված չէ:

«Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծառայության գործունեության նպատակն է ապահովել վարչապետին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը: ՀՀ Սահմանադրության 179-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը: ՀՀ Սահմանադրության 180, 184 և 185-րդ հոդվածները սահմանում են, որ համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է, որն ունի իր բյուջեն, որը համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունվում է համայնքի ավագանու կողմից⁹:

Համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք, որը տնօրինվում է համայնքի ավագանու կողմից: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման սկզբունքներից է համայնքների բյուջեների ինքնուրույնությունը՝ տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու և սեփական պատասխանատվությամբ այն տնօրինելու հնարավորությունը:

⁹ Տե՛ս Պետրոսյան Վ., Համայնքների իրավունքների սահմանադրական, ճյուղային և այլ նորմատիվ իրավական երաշխիքները, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, № 9-10 (231-232), Ե., 2018, էջ 21-32:

Վերոգրյալներից բխում է, որ համայնքն ինքնուրույն իրավաբանական անձ է, որն իր գործունեությունն իրականացնում է համայնքային բյուջեի միջոցներով: Ոչ ՀՀ Սահմանադրությամբ, ոչ օրենքներով ՀՀ վարչապետն օժտված չէ համայնքների բյուջեների, դրանց ձևավորման, հավաքագրման կամ կատարման նկատմամբ վերահսկողական լիազորությամբ, այնինչ ծառայության գործունեության նպատակն է ապահովել վարչապետին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը: Հետևաբար, ըստ մեզ, ծառայությունն իրավասու չէ ապահովել վարչապետի վերահսկողական լիազորությունների իրականացումը, քանի որ նման վերահսկողական լիազորություն ՀՀ վարչապետին վերապահված չէ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

Եթե նույնիսկ ընդունենք, որ ՀՀ վարչապետի վերահսկողական լիազորությունը սահմանված է «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ ծառայության լիազորություններից է ՏԻՄ-երում պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով ուսումնասիրությունների իրականացումը, ապա անհրաժեշտ ենք համարում դիտարկել այն հանգամանքը, որ ծառայությունն ակնհայտորեն դուրս է եկել պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով իրականացվելիք ուսումնասիրության շրջանակներից:

2. Ծառայությունը դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներից:

Եթե նույնիսկ ընդունենք, որ համայնքապետարանը կարող է հանդիսանալ պետական վերահսկողության օբյեկտ, ապա ընդգծում ենք, որ ծառայությունը դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից, քանի որ, «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, պետական միջոցներ են համարվում վերահսկվող օբյեկտի (տվյալ դեպքում՝ Անի համայնքի համայնքապետարանի) կողմից կառավարվող, ձևավորվող կամ ձևավորման ենթակա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բոլոր մուտքերը և ելքերը, նյութական ու ոչ նյութական ակտիվները:

Ծառայության ղեկավարը, առաջնորդվելով վերը նշված օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, N Հ/019-18 հանձնարարագրով սահմանել է, որ ուսումնասիրության ոլորտը պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատումն է: Այսպիսով՝ ինչպես բխում է օրենքի կարգավորումներից և հանձնարարագրից, ծառայությունն իրավասու է ուսումնասիրել Անի համայնքի համայնքապետարանի միայն այն փաստաթղթերը, և պահանջել միայն այնպիսի տեղեկատվություն, որն ուղղակիորեն առնչվում է պետական միջոցների հետ:

Այնինչ գործնականում ծառայությունը համայնքապետարանից պահանջել է տրամադրել համայնքի գործունեությանն առնչվող գրեթե բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ 2010-2018 թթ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը, 2010-2018 թթ. գնումների պլանները, գնումների գործընթացի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, 2010-2018 թթ. դրամարկղային ելքերի և մուտքերի օրդերները, բոլոր բանկային հաշիվների քաղվածքները, գլխավոր շրջանառության տեղեկագրերը, 2010-2018 թթ. հողի և գույքի օտարման և վարձակալության տրամադրման աճուրդների փաթեթները, տրանսպորտային միջոցների շահագործման և վառելիքի ծախսը հիմնավորող փաստաթղթերը, աշխատողների ցանկը և վճարված աշխատավարձը, ինչպես նաև այլ փաստաթղթեր:

Գտնում ենք, որ վերոնշյալ պահանջը միանշանակ ոչ իրավաչափ է: Մասնավորապես անհասկանալի է, թե համայնքի եկամուտների և ծախսերի նախահաշիվն ինչպես է առնչվում պետական միջոցների տրամադրման հետ: Եկամուտների և ծախսերի նախահաշիվն ուղղակիորեն առնչվում է համայնքի բյուջեին, որը, ինչպես հայտնի է, ձևավորվում է ինքուրույն: Ծառայության կողմից իր լիազորությունների շրջանակից դուրս գալն առավել ցայտուն է համայնքային սեփականության օտարման կամ տրամադրման, աշխատավարձերի վճարման վերաբերյալ փաստաթղթեր պահանջելու համատեքստում: Մասնավորապես, ինչպես բխում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետից, համայնքային սեփականության օտարման կամ վարձակալության տրամադրման հարցը որոշվում է համայնքի ավագանու կողմից ինքնուրույն, իսկ այդ գործարքներից ստացվող եկամուտն ուղղվում է համայնքային բյուջե: Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի աշխատակազմի և համայնքային հիմնարկների

աշխատողների վարձատրությունն օրենքով սահմանված կարգով կատարվում է համայնքի բյուջեի հաշվին: Գտնում ենք, որ նույնը վերաբերում է նաև պահանջվող այլ փաստաթղթերին, որոնց առնչությունը պետական միջոցների տրամադրմանը որևէ կերպ չի հիմնավորվել ծառայության կողմից:

Վերոգրյալի լույսի ներքո կարծում ենք, որ պետական վերահսկողական ծառայությունը դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից, ինչպես նաև խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված վարչարարության համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Այնինչ վերոնշյալ իրավիճակում ծառայությունն ակնհայտորեն չի պահպանել համաչափության սկզբունքը, քանի որ պահանջել է այնպիսի տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ և չափավոր չեն:

3. Առկա չէ ապացույց առ այն, որ ծառայությունը պահպանել է «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված՝ ուսումնասիրություն անցկացնելու ընթացակարգային նորմերը:

Նշված օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծառայության կողմից ուսումնասիրություններն իրականացվում են ծառայության ղեկավարի տված հանձնարարագրերի հիման վրա՝ համաձայնեցնելով վարչապետի հետ: Նույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ծառայությունը վերահսկողություն իրականացնելիս իրեն օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում՝ վարչապետի սահմանած կարգով ստանում է անհատույց և ազատ հասանելիություն վերահսկվող օբյեկտում կամ դրա պաշտոնատար անձի մոտ գտնվող և ծառայության լիազորություններին առնչվող բոլոր թղթային կամ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններին ու համակարգերին, տեղեկություններին և փաստաթղթերին: Մինչդեռ Անի համայնքի համայնքապետարանին չի ներկայացվել որևէ տեղեկատվություն առ այն, որ նշանակված ուսումնասիրությունը համաձայնեցված է վարչապետի հետ: Պարզ չէ նաև, թե արդյոք վարչապետին ներկայացվել են վերահսկողության անհրաժեշտ

տությունը հիմնավորող տեղեկություններ: Նման տեղեկություններ կարող են հանդիսանալ Անի համայնքի համայնքապետարանի նկատմամբ նշանակված ուսումնասիրության առիթը, նպատակը, պարզաբան ման ենթակա հարցադրումները, ենթադրյալ խախտումը և վերահսկողության անհրաժեշտությունը հիմնավորող այլ հանգամանքներ: Համեմատության համար հարկ է նշել, որ ՀՀ վարչապետի 11.07.2018թ. N 937-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ այն պարագայում, երբ ծառայությունը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում այդ մարմինների կողմից վերահսկողա կան գործառույթներ նախաձեռնելու և իրականացնելու նպատակով միջնորդություն է ներկայացնում այդ մարմիններին, ապա միջնորդության մեջ պետք է պարտադիր նշվեն վերոնշյալ տեղեկությունները:

Գտնում ենք, որ սույն իրավիճակում ևս վարչապետի համաձայնությունն ստանալու համար վարչապետին և վերահսկվող օբյեկտին պետք է ներկայացվեն առնվազն նշանակված ուսումնասիրության առիթը, նպատակը, պարզաբանման ենթակա հարցադրումները, ենթադրյալ խախտումը, որպեսզի վերահսկվող օբյեկտի համար ևս պարզ լինի, թե որն է ուսումնասիրության կոնկրետ նպատակը, ուսումնասիրության սահմանները, ենթադրյալ խախտումը:

4. Ծառայությունը չի ապահովել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքը: ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: ՄԻԵԴ նախադեպային իրավունքում հաստատվել է, որ «քրեական մեղադրանք» հասկացությունը տարբերվում է ներպետական օրենսդրության մեջ դրան տրված մեկնաբանումից (Ադոլֆն ընդդեմ Ավստրիայի, § 30):

Կարծում ենք, որ «մեղադրանք» հասկացությունը պետք է ընկալվի Կոնվենցիայի իմաստով: Այսպիսով՝ այն կարելի է բնորոշել որպես «անհատին իրավասու մարմնի կողմից տրված պաշտոնական ծանուցում ենթադրյալ հանցագործություն կատարելու մասին»: Ինչպես նաև պետք է

պարզել, թե արդյոք «ենթադրյալ մեղադրյալի դրությունը արդյոք հիմնովին փոփոխվե՞լ է» (տե՛ս, օրինակ, Դեվեերն ընդդեմ Բելգիայի, § 42, § 46, Էկլին ընդդեմ Գերմանիայի, § 73):

Քրեական մեղադրանքի առկայությունը պարզելու համար կարևոր է գործերից մեկում դրա որոշման առանձին չափանիշների սահմանումը (Էնգելը և մյուսներն ընդդեմ Նիդերլանդների, § 82-§ 83)՝

- ✓ ներպետական օրենսդրության դասակարգումը,
- ✓ իրավախախտման բնույթը,
- ✓ հնարավոր պատժի (տուգանքի) խստությունը:

Առաջին չափանիշը միայն հուշող բնույթ ունի, եթե ներպետական օրենսդրության մեջ իրավախախտումը դասակարգված է որպես քրեական, ապա մյուս չափանիշները քննարկելու անհրաժեշտություն չի առաջանա: Երկրորդ չափանիշը գնահատելու համար կարող են հաշվի առնվել հետևյալ պայմանները.

- արդյոք կիրառելի իրավական նորմը ուղղված է կոնկրետ խմբի՞, թե՞ ունի նորմատիվ բնույթ (Բենդենունն ընդդեմ Ֆրանսիայի, § 47),
- արդյոք վարույթը իրականացվում է հանրային մարմնի՞ կողմից, որն ունի որոշման կիրառման լիազորություններ (Բենհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության, § 56),
- արդյոք իրավական նորմն ունի նյութակա՞ն, թե՞ պատժիչ բնույթ (Օթթյուրքն ընդդեմ Գերմանիայի, § 53),
- արդյոք պատժի կիրառումը կապվա՞ծ է մեղքի հայտնաբերման հետ (Բենհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության, § 56):

Երրորդ չափանիշը որոշվում է հնարավոր մաքսիմալ պատժաչափի հետ համադրված (Campbell and Fell v. the United Kingdom, § 72, Demicoli v. Malta, § 34):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերության համաձայն՝ ուսումնասիրության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ պատասխանատվության միջոցներ կիրառելու կամ դրանց կիրառման մասին հանձնարարականներ տալու համար և հաշվի առնելով այն, որ մեղքի հայտնաբերման պարագայում պետական միջոցների հետ կապված խախտումները կարող են առաջացնել նաև քրեական պատասխանատվություն, կարող ենք արձանագրել, որ երկրորդ և երրորդ չափանիշներն առկա են տվյալ իրավիճակում:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՄԻԵԴ նախադեպային իրավունքում 6-րդ հոդվածն իր քրեական թևով կիրառելի է համարվել մի շարք վարչական իշխանությունների նկատմամբ, որոնք ունեին լիազորություններ տնտեսական և ֆինանսական իրավունքի ոլորտներում (Լիլի Ֆրանսն ընդդեմ Ֆրանսիայի, Դյուբուսն ընդդեմ Ֆրանսիայի, Մենարինի Դիագնոստիքսն ընդդեմ Իտալիայի):

Վերոնշյալից բխում է, որ տվյալ պարագայում գործում են 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքները, մասնավորապես առկա է իրավունք իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին: Այնինչ այն պարագայում, երբ ծառայության կողմից չեն հայտնվել նշանակված ուսումնասիրության առիթը, նպատակը, պարզաբանման ենթակա հարցադրումները, ենթադրյալ խախտումը, ապա բացակայում են համայնքապետարանի (համայնքապետարանի պաշտոնատար անձի) արդյունավետ պաշտպանության միջոցները, պաշտպանությունը դառնում է անիրական, քանի որ (1) համայնքապետարանը (պաշտոնատար անձը) չգիտի, թե ինչու՞ մն է կայանում ուսումնասիրության նպատակը, (2) կոնկրետ ինչպիսի՞ ենթադրյալ իրավախախտումն է ուսումնասիրության առիթ հանդիսացել, (3) ո՞րն է ուսումնասիրության պարզաբանման ենթակա հարցերի շրջանակը: Նշվածն իմանալու պարագայում, օգտվելով իր իրավունքից, համայնքապետարանը կարող է ներկայացնել հակափաստարկներ, օրինակ՝ չհամաձայնել նշանակված ուսումնասիրությանը կամ տեղեկատվություն և փաստաթղթեր ներկայացնելու պահանջին:

Կարծում ենք, որ ՀՀ վարչապետին ենթակա պետական վերահսկողական ծառայությունը չպիտի օժտված լինի օրենքով համայնքներում իրականացնել վերահսկողական գործառույթներ, այդ թվում՝ ուսումնասիրություններ: Առաջինը՝ նման իրավական հնարավորություն գործադիրի համար Սահմանադրությունը չի սահմանել, երկրորդը՝ այդպիսի լիազորությամբ արդեն իսկ տասնյակ տարիներ օժտված են և՛ Հաշվեքննիչ պալատը, և՛ ֆինանսների նախարարությունը՝ համապատասխանաբար «Հաշվեքննիչ պալատի մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով: Գտնում ենք, որ խախտվել է լիազորությունների բացառիկության սկզբունքը, ինչ-

պես նաև անհարկի համայնքի ինքնուրույնության իրավունքի խախտման անթույլատրելիության սկզբունքը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է փոփոխություն կատարել «Պետական վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, մասնավորապես նշված օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասից հանել 3-րդ կետի կարգավորումները, ինչպես նաև 6-րդ հոդվածի 2-րդ մասից հանել 2-րդ պարբերության իրավակարգավորող դրույթները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն (2005թ. փոփոխություններով), ([www. arlis.am](http://www.arlis.am)):
2. ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով), (www. arlis.am):
3. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, ընդունվել է 15.10.1985թ., (www. arlis.am):
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի և Ա.Վաղարշյանի), «Իրավունք», Երևան, 2010:
5. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, ընդունվել է 07.05.2002թ., (www. arlis.am):
6. Պետրոսյան Վ., Համայնքների իրավունքների տեսական և իրավական հիմունքները, «Հանրային կառավարում» գիտական հանդես, № 5, Երևան, 2019, էջ 149-157:
7. Պետրոսյան Վ., Համայնքների իրավունքների սահմանադրական, ճյուղային և այլ նորմատիվ իրավական երաշխիքները, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, № 9-10 (231-232), Երևան, 2018, էջ 21-32:
8. Багмст Л.М., Правовые и организационные вопросы обеспечения органами прокуратуры конституционно-правовой ответственности органов государственной власти субъектов РФ и органов местного самоуправления, Авторсф. дне. канд. юрид. наук: 12.00.02, Москва, 2005.
9. Варфоломеева Ю.А., Правовые основы финансового контроля, “Финансовое право”, № 12, Москва, 2005, с. 10-15.
10. Сизов В., Прокурорский надзор за законностью правовых актов органов местного самоуправления, “Законность”, № 6, Москва, 2006, с.16-19.
11. Работник контрольного органа муниципального образования, под ред. И.Л. Кокина, М., 2006, с. 201.
12. “Финансовое право”, под ред. Н.И. Химичевой, М., 2001, № 15, с. 112.
13. “Финансовое право”, под ред. О.Н. Горбуновой, М., 2002, с. 108 –109.

ОСОБЕННОСТИ ГОСУДАРСТВЕННОГО КОНТРОЛЯ ЗА ЗАЩИТОЙ ПРАВ ОБЩИН В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ваагн Петросян

преподаватель Северного университета

Данная статья посвящена предусмотренным Конституцией нормам и особенностям государственного контроля, правового и профессионального контроля, финансового контроля и бухгалтерского учета, которые не выражены на уровне национального законодательства РА или были реализованы в контексте противоречивых норм. Основная цель статьи - выявить и осветить правовые противоречия между защитой прав граждан и их органами местного самоуправления и с этой целью инструментами государственного контроля, установленными Конституцией и Законом о местном самоуправлении. Правительство, представив нереализованные или частично реализованные на сегодняшний день конституционные нормы, реализовано во внутреннем законодательстве. В статье конкретно говорится о законодательных противоречиях между Конституцией Республики Армения и Законом «О местном самоуправлении», ограничениях деятельности общин и их органов местного самоуправления, объеме полномочий и деятельности органов местного самоуправления, органы, осуществляющие надзор и контроль. Эти вопросы также обсуждались с учетом положений Европейской Хартии местного самоуправления, подчеркивающей принцип исключительности и полноты полномочий органов местного самоуправления.

Ключевые слова: сообщество, местное самоуправление, органы местного самоуправления, право, гарантии, проблема, права сообщества, права общин, хартия.

FEATURES OF STATE CONTROL OVER THE PROTECTION OF
COMMUNITY RIGHTS IN THE REPUBLIC OF ARMENIA

Vahagn Petrosyan

Lecturar at the Northern University

This article is devoted to the norms and features of state control, legal and professional control, financial control and accounting provided for by the Constitution, which are not expressed at the level of the national legislation of the Republic of Armenia or were implemented in the context of contradictory norms. The main purpose of the article is to identify and highlight legal contradictions between the protection of the rights of communities and their local governments and, for this purpose, the instruments of state control established by the Constitution and the Law on Local Self-Government. The government, having presented constitutional norms that have not been implemented or partially implemented to date, have been implemented in domestic legislation. The article specifically talks about legislative contradictions between the Constitution of the Republic of Armenia and the Law “On Local Self-Government”, restrictions on the activities of communities and their local self-government bodies, the scope of powers and activities of local self-government bodies. bodies exercising supervision and control. These issues were also discussed taking into account the provisions of the European Charter of Local Self-Government, which emphasizes the principle of the exclusivity and full powers of local governments.

Keywords: *community, local self-government, representative, authority, community rights, charter.*

**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Լիաննա Հակոբյան

Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկան
liannahakobyan77@mail.ru

Լիլիա Յոլչյան

Հյուսիսային համալսարանի իրավագիտության և հասարակագիտական
առարկաների ամբիոնի դասախոս
lilya.yolchyan@mail.ru

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է պետական կառավարման ապակենտրոնացման էության բացահայտմանը, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում լիազորությունների ապակենտրոնացման հիմնահարցերին: Ներկայացվում է լիազորությունների ապակենտրոնացման առկա վիճակի վերլուծությունը, բացահայտվում է և նշվում ապակենտրոնացման մասով Հայաստանում առկա ինստիտուցիոնալ և կիրառական բնույթի խնդիրներն ու խոչընդոտները: Հոդվածի շրջանակում արվել են կոնկրետ եզրահանգումներ, որոնց արդյունքներով պայմանավորված, մշակվել և ներկայացվել են տեղական ինքնակառավարման համակարգում լիազորությունների ապակենտրոնացման մակարդակի բարձրացման միտված առաջարկություններ, որոնք կարող են ունենալ կիրառական նշանակություն տեղական ինքնակառավարման ոլորտում մշակվող պետական քաղաքականության համատեքստում:

***Հիմնաբառեր՝** ապակենտրոնացում, պետական, կառավարում, տեղական ինքնակառավարում, պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, օրենք, երաշխիքներ, լիազորություն, իրավունքներ, օրենսդրություն:*

Արդի պայմաններում պետական կառավարման համակարգի ապակենտրոնացումը ցանկացած պետության սոցիալ-տնտեսական բարեփոխումների կարևոր ուղղություններից մեկն է, ինչի արդյունքում պետության մեջ ձևավորվում են կառավարման համակարգի

ժողովրդավարացման և թափանցիկության մակարդակի բարձրացման, ինչպես նաև արդյունավետության ապահովման նոր նախադրյալներ:

Կարելի է վստահորեն ասել, որ ապակենտրոնացումը ժողովրդավարական բարեփոխումների անբաժանելի մասն է, ինչով էլ որոշակիորեն պայմանավորվում է դրանց իրականացման արդյունավետությունը: Այն ժողովրդավարական հասարակարգի կայացման և դրա հետագա զարգացման ոչ միայն կարևոր, այլև անհրաժեշտ բաղադրիչ է¹⁰: Պետական մարմինների ապակենտրոնացումը օրինաչափ գործընթաց է՝ հանդիսանալով հասարակության ժողովրդավարացման, պետական իշխանության վերափոխման, իշխանությունների տարանջատման, քաղաքացիների քաղաքական իրավունքների և ազատությունների ձեռքբերման և մասնավոր սեփականության ներդրման արդյունք:

Պետք է նշել, որ հանրային կառավարման արդյունավետությունը մեծապես պայմանավորվում է իշխանության թևերի միջև լիազորությունների օպտիմալ պատվիրակմամբ և գործառույթների այնպիսի տարանջատմամբ, որը հնարավորություն է ընձեռում ապահովել դրանց միջև հակակշիռների օպտիմալ համադրություն:

Կարող ենք ասել, որ պետական իշխանության ապակենտրոնացումը՝ իշխանության, լիազորությունների փոխանցումն է կառավարող համակարգի կենտրոնից դեպի ծայրամաս և դրա հիման վրա ծայրամասային ենթահամակարգերի (տարածքային մարմիններ, քաղաքապետարաններ և այլն) քաղաքական և իրավական անկախության ամրապնդումն է: Այլ կերպ ասած, ապակենտրոնացումը իշխանության լծակների և գործառույթների տեղափոխման գործընթաց է կենտրոնական մակարդակից դեպի ավելի ցածր, տեղական մակարդակ՝ կառավարման կենտրոնական և ներքնի օղակների միջև արդյունավետ փոխհարաբերությունների կազմակերպման միջոցով:

Հարկ է նշել, որ գործառույթների նման տեղափոխումը բնավ չի ենթադրում պետական կառավարման համակարգի ուղղահայաց կառուցվածքի թուլացում, քանի որ տվյալ պարագայում կառավարման օղակների ուղղահայաց ենթակայությունը պահպանվում է, իսկ ապակեն-

¹⁰ Տե՛ս **Տերտեքյան Վ., Ղազարյան Է.**, Ապակենտրոնացումը որպես ժողովրդավարական բարեփոխումների բաղադրիչ, «Պետական կառավարման ժողովրդավարացման հիմնահարցերը» թեմայով կայացած գիտաժողով, Ե., 2000, էջ 81:

տրոնացման արդյունքում բարձրանում է ներքին վարչարարության և փոխանցված գործառնությունների իրականացման արդյունավետությունը:

Վերը նշվածը պայմանավորված է նրանով, որ կառավարման ներքևի օղակները, ավելի մոտ գտնվելով կառավարվող օբյեկտին, ավելի լավ են տիրապետում տեղերում առկա իրավիճակին և դրա արդյունքում վարչական որոշումներն իրագործելու ավելի մեծ հնարավորություններ ունեն: Բազմաթիվ ժողովրդավարական պետություններում հենց տեղական կառավարման մարմիններն են, որ իրենց պատվիրակված լիազորությունների շրջանակում անմիջականորեն լուծում են ամենօրյա կարևորագույն հանրային հարցեր, ու թերևս նաև դրանով է պայմանավորված քաղաքացիների համեմատաբար բարձր կառավարչական հետաքրքրությունը և ակտիվ մասնակցությունը տեղական իշխանությունների գործունեությանը:

Պետության կողմից տեղական իշխանություններին ավելի մեծ լիազորություններ փոխանցելն ինքնին չի նշանակում հանրային ծառայությունների ոլորտի վերափոխում:

Պետական կառավարման ապակենտրոնացման գործուն համակարգի ներդրումը բարդ գործընթաց է, որը չի կարող իրականացվել շատ կարճ ժամանակահատվածում՝ դիտարկվելով որպես միանգամյա իրավական գործընթաց կամ առանձին վարչական միջոցառում. դա շարունակական գործընթաց է, որը պահանջում է անընդհատ և նորանոր ջանքեր, համակարգային մոտեցում, չթուլացող ուշադրություն և մշտական կանոնակարգում՝ հաշվի առնելով նաև, որ երբեմն այն անհրաժեշտ է իրականացնել մի քանի փուլերով:

Հետևաբար ապակենտրոնացման գործընթացի հաջողության գրավականն ամուր քաղաքական կամքն ու հենարանն է¹¹:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք ասել, որ պետության կենտրոնական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև գործառնությունների ապակենտրոնացումը չափազանց բարդ գործընթաց է, որն անդրադառնում է ինչպես բուն կառավարման գործընթացին, այնպես էլ ֆինանսական, վերահսկողական, կարգավորման, հաշվետվողական գործառնությունների վերաբաշխմանը, որոնք փաստացի հանդիսա-

¹¹Տե՛ս **Ղազարյան Է.**, Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները ՀՀ-ում, Ե., 2008, էջ 20:

նում են կառավարման համակարգի տարբեր մակարդակների միջև փոխ-հարաբերությունների կարևոր տարրեր:

Բացի այդ՝ գտնում ենք, որ ապակենտրոնացումը այդքան էլ հարթ գործընթաց չէ, և չնայած քաղաքական և տնտեսական ուժերի համատեղ ջանքերին, որոնք առաջ են քաշում ապակենտրոնացման անհրաժեշտությունը, հաճախ իրականության և սահմանված նպատակների միջև առկա են լինում որոշակի հակասություններ՝ պայմանավորված ինչպես քաղաքական, այնպես էլ օրենսդրական բնույթի խնդիրներով:

Ապակենտրոնացման հիմնական նպատակներն են՝ բարելավել պետական հատվածի կառավարման արդյունավետությունը և բարձրացնել ազգաբնակչության կյանքի որակը: Ապակենտրոնացումը դիտվում է որպես հանրային ծառայությունների ոլորտում առկա պահանջների և բնակչության շրջանում պետական ինստիտուտների գործառույթների առավել արդյունավետ իրականացման կարևոր գործընթաց: Քաղաքականության տեսանկյունից ապակենտրոնացումը պետք է նպաստի հանրային ծառայությունների ավելի արդյունավետ իրականացմանը՝ թույլ տալով հաշվի առնել տեղական կարիքները և պայմանները՝ միաժամանակ տարածաշրջանային և ազգային նպատակներին հասնելու պայմանով:

Այսպիսով՝ ապակենտրոնացման դեպքում հիերարխիկ կառուցվածքով գործադիր իշխանության վերին օղակին վերապահված պատասխանատվությունների և լիազորությունների որոշակի ծավալն առավել արդյունավետ իրականացնելու ակնկալիքով փոխանցվում է կառավարման ներքևի օղակներին, որոնք ձևավորվում են երկրի վարչատարածքային կառուցվածքի տրամաբանությամբ համապատասխան:

Ապակենտրոնացման երևույթի, ինչպես նաև վերջինիս առնչվող սահմանադրական դրույթների ընկալման տարբեր մոտեցումների հետազոտությունը հիմք է տալիս սահմանել ապակենտրոնացումը որպես համապարփակ եզրույթ, որի որակական որոշակիությունը միջնորդավորվում է պետական կառուցվածքի և իրավական ավանդույթի ազգային առանձնահատկություններով:

Ապակենտրոնացումը բազմաշերտ և բազմակողմ երևույթ է, ինչը թույլ է տալիս պետություններին բարձրացնել ժողովրդավարական վերափոխման և պետական կառուցվածքի արդյունավետությունը՝ միաժամանակ հարմարեցնելով վերջինիս կառուցողական ռեսուրսը կոնկրետ

պայմաններին ու իրական հնարավորություններին՝ ցուցադրելով որդեգրած ուղենիշների յուրահատկությունը և դրանց կենսագործման հետևողականությունը:

Պետք է նշել, որ ապակենտրոնացման առաջին փորձերը սկսվեցին 1980-ական թվականների վերջերից, երբ բազմաթիվ արտասահմանյան երկրներ ձեռնարկեցին որոշակի պետական գործառույթների ապակենտրոնացման գործընթաց, ինչը պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ նախադրյալներով, մասնավորապես.

- տնտեսության ազատականացումը, քաղաքացիական հասարակության ձևավորումը ժամանակի ընթացքում իմաստագրելու են պետության կողմից մինչ այդ իրականացվող գործառույթների և լիազորությունների մի մասը, որոնք կորցնում են իրենց արդիականությունն ու նշանակությունը:
- հասարակության զարգացման արդյունքում ձևավորված և պետական կառավարման համակարգում չընդգրկված տնտեսական, սոցիալական, քաղաքական և հասարակական միավորներն առավել կենսունակ և ճկուն են նոր փոխհարաբերություններում ակտիվ դերակատարում ունենալու իմաստով:

Պետական իշխանության ապակենտրոնացումը՝ որպես ժողովրդավարության զարգացման կարևոր բաղադրիչ, ամրագրված է 1985 թվականին Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում: Խարտիայում սահմանված են մի քանի բաղադրիչներ, որոնք հիմք են հանդիսանում պետության կառավարման և ֆինանսավորման խնդիրների ապակենտրոնացման համար¹²: Ըստ խարտիայի՝ հասարակական իշխանությունը, որպես կանոն, հիմնականում իրականացվում են քաղաքացուն ամենամոտը կանգնած իշխանությունների կողմից¹³:

Խարտիայում սահմանված է նաև հետևյալ կարևոր դրույթները: Տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն ազգային տնտեսական քաղաքականության շրջանակներում ձեռքբերելու բավականաչափ սեփական ֆինանսական միջոցներ, որը նրանք իրենց գործառույթներն իրականացնելիս կարող են ազատորեն տնօրինել¹⁴:

¹² Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, Հոդված 3.1:

¹³ Նույն տեղում, Հոդված 4.3:

¹⁴ Նույն տեղում, Հոդված 9.1:

Տեղական իշխանությունների ֆինանսական ռեսուրսների առնվազն մի մասը պետք է ձևավորվի տեղական հարկերից և տուրքերից, որոնց դրույքաչափերը տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն հաստատելու օրենքով սահմանված կարգով¹⁵:

Հարկ է նշել, որ վերջին ժամանակահատվածում ապակենտրոնացման արդյունքում տեղական իշխանություններին վերապահված գործառնությունների շրջանակն աստիճանաբար ընդլայնվում է: Տարբեր երկրներ ապակենտրոնացման ոլորտում մշակում են կառավարման տարբեր մակարդակների միջև գործառնությունների բաժանման սեփական տարբերակներ, սակայն ընդհանուր առմամբ ապակենտրոնացման արդյունքում տեղական կառավարման մարմիններին վերապահվող հիմնական ոլորտները հետևյալն են՝

- ✓ համայնքների զարգացում,
- ✓ հողօգտագործման պլանավորում,
- ✓ շրջակա միջավայրի պաշտպանություն,
- ✓ բնակարանային շինարարություն,
- ✓ կոյուղու սպասարկում և ջրամատակարարում,
- ✓ անձրևաջրերի հեռացում,
- ✓ տեղական հանրային ճանապարհներ և հանրային օգտագործման տարածքներ,
- ✓ հասարակական տրանսպորտ,
- ✓ հրդեհային պաշտպանություն,
- ✓ տեղական հասարակական անվտանգություն,
- ✓ նախնական կրթություն, ներառյալ մանկապարտեզները,
- ✓ առողջապահություն,
- ✓ սոցիալական ծառայություններ,
- ✓ մշակութային և սպորտային գործունեություն,
- ✓ գրադարաններ և մշակութային կենտրոններ:

Ապակենտրոնացումը, բացի հանրային ծառայությունների ոլորտում որդեգրած բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունից, կարող է բխել նաև քաղաքական, կառավարչական, վարչական կամ գուտ ֆիսկալ նպատակներից: Քաղաքական տեսանկյունից ապակենտրոնացումն իրականացվում է ժողովրդավարության ամրապնդման նպատակով՝ որոշումների կայացման մակարդակն ավելի մոտեցնելով

¹⁵ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, Հոդված 9.3:

այն զանգվածին, որին ուղղված են պետական կառավարման գործառնությունները:

Ապակենտրոնացման գործընթացների վերլուծությունը վկայում է, որ վերջինս դրական նշանակություն է ունենում նաև իշխանության կենտրոնական մարմինների կառավարչական գործունեության արդյունավետության տեսանկյունից: Քանզի դրա շնորհիվ կենտրոնական կառավարման մարմինները լիցքաթափվում են որոշակի ծանրաբեռնվածությունից՝ առավելապես նպատակաուղղվելով իրենց իրավասության տակ մնացած խնդիրների լուծմանը:

Ի թիվս այլ երևույթների՝ ակնկալվում է, որ պետական մարմինների գործառնությունն ավելի արդյունավետ կլինեն, եթե ազգաբնակչության կարիքներին ու պահանջներին անմիջականորեն արձագանքեն տեղական իշխանությունների իրավասու պաշտոնատար անձինք: Ապակենտրոնացման կարևոր առանձնահատկություններից է նաև հանրային հաշվետվողականությունը, որը կապահովի տեղական կառավարման մարմինների ժողովրդավարական վերահսկողությունը, ինչի հիման վրա քաղաքացիները հնարավորություն կունենան ազդելու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների վրա:

Ապակենտրոնացումը կարող է արդարացված լինել նաև վարչական տեսանկյունից՝ պայմանավորված ծառայությունը մարդկանց մոտեցնելու ցանկությամբ, այսինքն՝ բնակչությանն ավելի մոտ գտնվող իշխանության մարմինների միջոցով: Բայց եթե դա պարզապես կենտրոնական իշխանությունների գործառնությունների փոխարինումն է տեղական կառավարման մակարդակների գործառնություններով, և միևնույն ժամանակ ծառայությունների որակն անփոփոխ է, ապա դրական փոփոխություններ դժվար է ակնկալել: Կարելի է ենթադրել, որ ապակենտրոնացումն ամրապնդում է ծառայությունների բարելավմանն ուղղված հրապարակայնության մեխանիզմները: Եթե տեղական իշխանություններն այնքան էլ կախված չեն կենտրոնական մարմիններից, ապակենտրոնացումը կարող է դրականորեն ազդել ինչպես արդյունավետության, այնպես էլ արդարության ցուցանիշների վրա:

Ապակենտրոնացման գործընթացում ծառայությունների որակի բարձրացումը կարող է ունենալ բարդություններ, եթե, ինչպես հաճախ է տեղի ունենում, քաղաքական, ֆինանսական և վարչական բարեփո-

խումներն իրականացվում են չհամակարգված կերպով կամ անհետևողականորեն:

Ուսումնասիրությունները վկայում են, որ բազմաթիվ երկրներում ապակենտրոնացումը թելադրված է եղել հիմնականում բուն տնտեսական պատճառներով: Ազգային կամ նույնիսկ տարածաշրջանային մակարդակում որոշակի գործառույթներ իրականացնելը շատ դեպքերում կապված է չափազանց մեծ ծախսերի հետ, մինչդեռ տեղական մակարդակում դրանց իրականացումն անհամեմատ ավելի մատչելի է: Այս առումով իշխանության ապակենտրոնացման գործում կարևոր դեր է խաղում նաև ֆիսկալ ապակենտրոնացումը, քանի որ հենց ֆինանսական հարցերում անկախությունից է կախված տեղական խնդիրների լուծման արդյունավետությունը:

Ապակենտրոնացման ֆիսկալ չափանիշներից ելնելով՝ ծառայություն մատուցելու համար պատասխանատվությունը փոխանցվում է իշխանության այն մակարդակին, որն առավել ընդունակ է կառավարելու և անհրաժեշտ ռեսուրսներ ներգրավելու իր առջև դրված խնդիրների լուծման համար: Այս մոտեցման վտանգներից մեկն էլ այն է, որ կառավարությունն օգտագործում է այս հանգամանքը որպես առիթ՝ իր որոշակի պարտավորություններից ազատվելու համար: Նման պարագայում ապակենտրոնացումը հատուկ մտահոգություն է առաջացնում հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ անհրաժեշտ է չեզոքացնել հետամնացությունը կամ աջակցել սոցիալական ծրագրերի իրագործմանը:

Հարկ է նշել, որ ներկայումս աշխարհում գոյություն չունի ապակենտրոնացման միասնական ընդունելի մոդել և տարբեր երկրներում դրա հետ կապված գործընթացներն ու ընթացակարգերը որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Դրանք հիմնականում տարբերակվում են ըստ ապակենտրոնացման հիմքում դրված հիմնական նպատակների ու խնդիրների, ինչպես նաև կազմակերպչական կառուցվածքի և իրականացման մեխանիզմների: Ապակենտրոնացման ձևերը տարբերվում են միմյանցից նաև իրենց առանձնահատկություններով, առաջացրած քաղաքական հետևանքներով և հաջողության հասնելու պայմաններով:

Պետական իշխանության բաշխման ոլորտում ապակենտրոնացման երևույթի՝ միմյանց հետ սերտորեն կապված հասկացությունների պրիզմայով կատարված վերլուծությունը վկայում է, որ այդպիսի հաս-

կացությունների մեծամասնությունը, մասնավորապես ապահամակենտրոնացումը (դեկոնցենտրացիա), մասնակի ապակենտրոնացումը (դեվոյուցիա), իշխանության և լիազորությունների փոխանցումը և պատվիրակումը դասվում են ապակենտրոնացման հնարավոր ձևերին, որոնք բնորոշում են պետական իշխանության տարանջատումը ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց կտրվածքներով¹⁶:

Ապակուտակման դեպքում կենտրոնական կառավարությունը տարածաշրջանային կառավարման մարմինների միջև բաշխում է իր կառավարչական գործառույթների մի քանիսը, ինչպիսիք են, օրինակ, պլանավորումը և ֆինանսավորումը՝ իրեն վերապահելով կառավարման գործընթացի ընդհանուր վերահսկողությունը: Ապակուտակումը դասվում է ապակենտրոնացման վարչական ձևին, որի իրականացման ընթացքում որոշումներ կայացնելու իրավունքը շարունակում է վերապահվել պետական իշխանության կենտրոնական մարմիններին: Մասնակի ապակենտրոնացման դեպքում կենտրոնական կառավարությունը կառավարման ստորին օղակներին է փոխանցում որոշակի լիազորություններ և գործառույթներ, որի հիմնական նպատակներն են պետական կառավարումը մոտեցնել ազգաբնակչությանը, ինչպես նաև բարձրացնել հանրային կառավարման թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Այս պայմաններում տեղական ինքնակառավարումը գործում է կենտրոնական իշխանությունների կողմից հաստատված ընդհանուր քաղաքականության շրջանակներում, սակայն սեփական գործառույթներն իրականացնելիս դրանք գործում են ինքնուրույն:

Թեև ապահամակենտրոնացումն ապակենտրոնացման տարածված ձևերից մեկն է, սակայն երբեմն դրանք տարանջատվում են միմյանցից: Այսպես՝ ֆրանսիացի տեսաբան Գ. Բրեբանը նշում է, որ ապահամակենտրոնացման դեպքում իշխանական լիազորությունները պետության կողմից պատվիրակվում են վերջինիս կառուցվածքային ստորաբաժանումներին, այսինքն՝ կենտրոնական վարչական ապարատը տարածքներում հզորացնում է իր ծայրամասային ծառայությունները¹⁷: Ապահամակենտրոնացման դեպքում, ընդհակառակը, իշխանական իրավասությունները մեկ իրավաբանական անձից

¹⁶Տե՛ս **Ляпин И.Ф.**, Конституционные особенности децентрализации государственной власти в российской федерации, “Право”, Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, № 1, М., 2015, с. 152-154:

¹⁷ Տե՛ս **Брэбан Г.**, Французское административное право, М., 1988, с. 86:

փոխանցվում են մյուսին. պետությունից դեպի տեղական կամ համայնքային մարմիններ կամ հասարակական հաստատություններ: Այսպիսով՝ տվյալ դեպքում ապակենտրոնացումն ընկալվում է որպես պետությունից և պետական ինստիտուտներից իշխանական լիազորությունների փոխանցում ոչ պետական սուբյեկտներին, իսկ ապահամակենտրոնացումը հանդիսանում է իշխանական լիազորությունների ներպետական ապակենտրոնացում:

Ելնելով վերոգրյալից՝ ապակենտրոնացումը կարելի է դիտարկվել լայն, նեղ և ավանդական իմաստներով: Լայն իմաստով ապակենտրոնացման տակ հասկացվում են պետական իշխանության ապակենտրոնացման բոլոր օրենսդրական ձևերը: Այս մոտեցումը թերևս ավելի սերտացնում է ապակենտրոնացումն ուղղահայաց և հորիզոնական հարթություններում իշխանությունների տարանջատման համակարգի հետ:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ապակենտրոնացումը կարող է ունենալ սահմանադրական, օրենսդրական և պայմանագրային իրավական բնույթ, իսկ իշխանությունների տարանջատումը կարող է գոյություն ունենալ միայն առաջին երկուսի շրջանակում: Այլ կերպ ասած, ապակենտրոնացումը վերաբերվում է ցանկացած հանրային իշխանությանը, իսկ իշխանությունների տարանջատումը՝ միայն պետականին: Հետևաբար կարելի է պնդել, որ ապակենտրոնացումն ավելի ընդհանուր երևույթ է, քան իշխանությունների տարանջատումը:

Նեղ իմաստով պետական իշխանության ապակենտրոնացումն իշխանության բաժանման սահմանադրական ձևերից է, որի դեպքում սահմանված կարգով, նախատեսված շրջանակներում, ծավալով և ձևերով իրականացվում է իշխանական լիազորությունների փոխանցում համընդհանուր պետական մակարդակից դեպի տվյալ երկրում պատմականորեն ձևավորված այլ ավելի ցածր իշխանության մակարդակ:

Պետական իշխանության ապակենտրոնացման և վերջինիս իրագործման մեխանիզմները խորությամբ հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է հիմնվել այն սկզբունքների համակարգի վրա, որն այս գործընթացը դարձնում է նպատակահարմար, օրինական և արդյունավետ: Սակայն, միևնույն ժամանակ, նույնիսկ մեկ սկզբունքի կորուստը կամ անարդյունավետությունը կարող է խաթարել պետական իշխանության ապակենտրոնացման ոլորտում ներդրված բոլոր ջանքերը:

Պետական իշխանության ապակենտրոնացման գործընթացի հիմքում ընկած բոլոր սկզբունքները կարելի է բաժանել դոկտրինալ կամ համոզմունքային և լեզալ կամ իրավական տեսակների: Վերջիններս ունեն իրավական տարբեր բնույթներ՝ սահմանադրական, օրենսդրական, պայմանագրային¹⁸: Այդ իսկ պատճառով պետական իշխանության «ուղղահայաց» ապակենտրոնացման սկզբունքներն առնչվում են հետազոտվող գործընթացի կարգավորիչ, կարգավիճակային, սուբյեկտիվ, ընթացակարգային, ռեսուրսային ասպեկտներին¹⁹: Նման սկզբունքներով էլ հենց պայմանավորված է լինում պետական իշխանության ապակենտրոնացման շրջանակների սահմանման խնդիրները:

Ընդհանուր առմամբ պետական իշխանության ապակենտրոնացումը կարող է հիմնվել հետևյալ սկզբունքների վրա.

- *արդյունավետություն*. ապակենտրոնացման արդյունքում պետք է նվազեցվեն կենտրոնական վարչական ապարատի մեծածավալ ծախսերը, ինչպես նաև բարելավվեն կառավարման արդյունավետությունը՝ տեղական խնդիրների ավելի լավ գիտակցման և սահմանափակ ռեսուրսների բաշխման վարչական ու տնտեսական օպտիմալացման արդյունքում,
- *թափանցիկություն*. ապակենտրոնացման գործընթացը պետք է ապահովի տեսանելի կապ՝ հարկ վճարողների կողմից վճարված գումարների և տեղական մակարդակով մատուցվող ծառայությունների մակարդակների միջև,
- *հաշվետվողականություն*. ապակենտրոնացման արդյունքում կառավարման կատարողականությունը բարձրանում է՝ ապահովելով ժողովրդավարական ճանապարհով ընտրված պաշտոնյաների հաշվետվողականությունն իրենց ընտրողներին,
- *սոցիալական ակտիվության մակարդակի բարձրացում*. ապակենտրոնացումը նաև ապահովում է համայնքներում սոցիալական

¹⁸ Տե՛ս **Ляпин И.Ф.**, Особенности децентрализации государственной власти в системе государственного управления современной России, “Право и управление XXI век”, № 1, М., 2011, с. 55-60:

¹⁹ Տե՛ս **Պետրոսյան Վ.**, «Համայնքների ՏԻՄ-երի պետության կողմից պատվիրակված լիազորությունները և դրանց հետ կապված հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», «Հյուսիսափայլ» գիտական հանդես, № 2(10) 2022:

ակտիվության մակարդակի բարձրացում և վարչարարական գործընթացում ազգաբնակչության լայն հատվածների ներգրավում:

Ուսումնասիրությունները վկայում են, որ պետական իշխանության ապակենտրոնացումը և տեղական ինքնակառավարման բարեփոխումները հետխորհրդային երկրներում հանգեցրել են այդ համակարգերի երեք հիմնական մոդելների ձևավորմանը²⁰: Առաջին մոդելը տեղական ինքնակառավարման մարմինների ֆորմալ ապակենտրոնացված համակարգն է, որը բնութագրվում է վարչական ապակենտրոնացման ընդգծված ուղղվածությամբ՝ տեղական համայնքների ինքնավարության հիման վրա, որոնք ունեն մի շարք տեղական և տարածաշրջանային հարցեր լուծելու օրինական իրավունքներ: Սահմանադրությամբ նախատեսվում են տեղական ինքնակառավարման տարբեր կազմակերպչական մոդելների ձևավորում և որոշ չափով նաև դրանց ֆինանսական ինքնավարություն²¹: Այնուամենայնիվ, օրենսդրությամբ հստակ չի սահմանվում, թե տեղական ինքնակառավարման մարմիններից որոնք ունեն ինքնավարություն, ուստի դրանց թիվը կարող է կամայականորեն ավելացվել կամ կրճատվել՝ տարածաշրջանային իշխանությունների որոշմամբ: Նման սահմանադրական կառուցվածքի դեպքում տեղական իշխանությունների նոր մարմինները տարածաշրջանային և ազգային մակարդակներում չափազանց անկայուն են և հակասական, և նման մոդելի շրջանակում ապակենտրոնացման սահմանադրական սկզբունքները հռչակվում են պետության կողմից որպես դրա անբաժան մաս:

Երկրորդ մոդելն ընկալվում է որպես կենտրոնացման և ապակենտրոնացման երկու միտումների համադրություն, որում իշխանության ներկայացուցչական մարմինները և տեղական գործադիր մարմիններն ունեն պետական և տարածքային մարմիններից վարչական ինքնավարության համեմատաբար բարձր աստիճան, բայց նրանք մնում են պետության հովանու ներքո: Այս մոդելն իրականացվում է տեղական

²⁰ St' u Разработка новых правил игры в старых условиях, "Органы самоуправления в Восточной Европе, на Кавказе и Средней Азии", под ред. И. Мунтяну, В. Попа. Будапешт, в 3 томах, т. 3, 2001, с. 313:

²¹ St' u **Костенников М.В., Куракин А.В.**, Актуальные проблемы науки административного права, М., 2011, с. 573:

իշխանության մարմիններին (համայնքապետարաններ, գյուղապետարաններ համայնքներ) պատվիրակված գործառույթների և լիազորությունների լայն շրջանակի տրամադրմամբ՝ պետության կողմից երաշխավորված պարտավորությունները կամ ծառայությունները լիազորված պաշտոնյաների միջոցով իրականացման համար, որոնք նշանակված են կենտրոնական կառավարության կողմից՝ տվյալ ոլորտում վերահսկողություն իրականացնելու նպատակով: Պետք է նշել, որ քանի դեռ պետությունը վերահսկողություն է իրականացնում տեղերում, ապա դժվար է այս համակարգը անվանել ինքնակարգավորվող, քանի որ տվյալ դեպքում սահմանափակվում է տեղական նախաձեռնությունների հնարավորությունները, ինչպես և խոչընդոտվում է տեղական մարմինների վարչական գործունեության անկախությունը:

Երրորդ մոդելն անկասկած վարչական կենտրոնացման առանձնահատկություններ ունի: Դրա տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ տեղական իշխանությունները ժամանակավորապես լիազորված են իրականացնելու «պետական իշխանության» գործառույթները տեղական մակարդակում: Իր հերթին, դա ստեղծում է գործադիր իշխանության բարձրագույն մարմինն ենթակա «իրավասությունների հիերարխիկ բուրգ», որն ինքնին չեզոքացնում է տեղական իշխանության մարմինների դերն ու նշանակությունը: Նման իրավիճակում տեղական իշխանությունների ղեկավարները գործում են որպես կենտրոնական կառավարության կողմից նշանակված պաշտոնատար անձիք և ոչ մի կերպ չեն հանդիսանում տեղական իշխանության իրապես ապակենտրոնացված մարմինների ներկայացուցիչներ: Արդյունքում ստացվում է մի իրավիճակ, որն առավելություններ է տալիս գործադիր իշխանության կողմից նշանակված մարմիններին՝ համայնքների բնակիչների կողմից ընտրված մարմինների նկատմամբ²²:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող օրենքներով, ՏԻՄ-երին վերապահված են շուրջ 900 լիազորություն: Դրանցից ընդամենը մի մասն է, որ իրենց նշանակությամբ և «մասշտաբի էֆեկտի» իմաստով ունեն էական նշանակություն, քանի որ հանրային բնույթի ծառայությունների զգալի

²² Ст' u Ляпин И.Ф., Современные модели децентрализации государственной власти: опыт государств СНГ, “Административное и муниципальное право”, № 5, М., 2011, с. 33–37:

կամ գերակա մասը դեռևս շարունակում է մատուցվել պետական կառավարման մարմինների մակարդակում, որը թերևս Հայաստանում լիազորությունների ապակենտրոնացման ցածր մակարդակի հիմնական պատճառներից մեկն է²³:

Այսպիսով՝ պետական իշխանության ապապետականացման ոլորտում կիրառվող մոդելները տարբերվում են այն չափանիշով, թե որքանով է քաղաքական որոշումների կայացման գործում կառավարման տարածքային մակարդակն ազատ կենտրոնական իշխանությունից և ունի արդյոք դրա համար անհրաժեշտ ռեսուրսներ: Սակայն միաժամանակ պետք է նշել, որ հանրային կառավարման գործընթացում ապակենտրոնացման տարբեր ձևերի գրագետ և համալիր համադրությունը միայն թույլ կտա այն դարձնել ավելի արդյունավետ, օպերատիվ, ռացիոնալ ու ավելի ժողովրդավարական:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով) (www.arlis.am):
2. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, ընդունվել է 15.10.1985թ., (www.arlis.am):
3. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենք՝ ընդունվել է 07.05.2002թ. (www.arlis.am):
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի), Երևան, «Իրավունք», 2010:
5. **Պետրոսյան Վ., Ղազեյան Խ.**, Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ապակենտրոնացման գործընթացի ընդլայնման անհրաժեշտությունն ու իրականացման կառուցակարգերը, «Հանրային կառավարում» գիտական հանդես, № 1-10, 2023, էջ 10-23:
6. **Պետրոսյան Վ.**, Համայնքների ՏԻՄ-երի պետության կողմից պատվիրակված լիազորությունները և դրանց հետ կապված հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, «Հյուսիսսփայլ» գիտական հանդես, № 2(10), Երևան, 2022:

²³ Տե՛ս **Պետրոսյան Վ., Ղազեյան Խ.**, Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ապակենտրոնացման գործընթացի ընդլայնման անհրաժեշտությունն ու իրականացման կառուցակարգերը, «Հանրային կառավարում» գիտական հանդես, № 1(10), Երևան, 2023, էջ 10-23:

7. Брэбан Г., Французское административное право, Москва, 1988, с.86.
8. Ляпин И.Ф., Современные модели децентрализации государственной власти: опыт государств СНГ, “Административное и муниципальное право”, № 5, Москва, 2011, с. 33–37.
9. Разработка новых правил игры в старых условиях, Органы самоуправления в Восточной Европе, на Кавказе и Средней Азии, под ред. И. Мунтяну, В. Попа, в 3 томах, т. 3, Будапешт, 2001, с. 313.
10. Костенников М.В., Куракин А.В., Актуальные проблемы науки административного права, Москва, 2011, с. 573.

СУЩНОСТЬ И ОСОБЕННОСТИ ДЕЦЕНТРАЛИЗАЦИИ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Лианна Акопян

декан юридического факультета Северного университета

Лилиа Елчян

преподаватель Северного университета

Статья посвящена раскрытию сущности децентрализации государственного управления, основы децентрализованного управления системой местного самоуправления Республики Армения. В статье представлено решение существующей проблемы децентрализации власти, выявлены и упомянуты проблемы и препятствия институционального и практического характера в Армении относительно децентрализации. Во введении к статье были сделаны конкретные выводы, по результатам которых были разработаны и включены в систему местного самоуправления высоковольтные электростанции, способные повысить уровень, имеющие практическое значение. контексте разрабатываемой государственной политики в сфере технического самоуправления.

Ключевые слова: децентрализация, государство, управление, местное самоуправление, органы государственного управления, органы местного самоуправления, право, гарантии, полномочия, права, законодательство.

THE ESSENCE AND FEATURES OF DECENTRALIZATION OF PUBLIC ADMINISTRATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Lianna Hakobyan

Dean of Law department at the Northern University

Lilia Jolchyan

Lecturar at the Northern University

The article is devoted to revealing the essence of decentralization of public administration, the basis of decentralized management of the local government system of the Republic of Armenia. The article presents a solution to the existing problem of decentralization of power, identifies and mentions problems and obstacles of an institutional and practical nature in Armenia regarding decentralization. In the introduction to the article, specific conclusions were made, based on the results of which high-voltage power plants were developed and included in the local government system, capable of increasing the level of practical importance. in the context of the developing state policy in the field of technical self-government.

Keywords: *decentralization, state, management, local government, government bodies, local government bodies, law, guarantees, powers, rights, legislation.*

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Անի Խեչոյան

Հյուսիսային համալսարանի իրավագիտության և
հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ, ի.գ.թ.

anykhechoyan@gmail.com

Լիլիթ Գրիգորյան

Հյուսիսային համալսարանի իրավագիտության

ֆակուլտետի ուսանող

lilit.grigoryan4523@mail.ru

Համառոտագիր

Աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները մարդկանց ստիպում են հեռանալ իրենց երկրից, հաստատվել տարբեր պետություններում, ստեղծել իրենց համար բարեկեցիկ կյանք: Ներկայումս փախստականների ընդունումն ու նրանց իրավունքների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը պետությունների առջև ծառացած կարևորագույն խնդիրներից են, որոնք գնալով ավելի մեծ ծավալներ են ձեռք բերում՝ իրենց վրա սևեռելով միջազգային հանրության ուշադրությունը և պահանջելով պետությունների միջև համագործակցությունն ու օժանդակությունը հասցնել որակական նոր մակարդակի: Միջազգային հանրությունը փորձել է հնարավորինս կարգավորել այս խնդիրը կոնվենցիաների և միջազգային կառույցների միջոցով, սակայն առանձին պետություններ երբեմն ունենում են դժվարություններ փախստականներին ընդունելու հարցում:

Այդ դժվարությունները, կարծում ենք, ոչ միայն սոցիալ-տնտեսական բնույթի են, այլև կապված են փախստականների հիմնախնդիրների՝ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավակարգավորումների անկատարության հետ:

Հիմնաբառեր՝ փախստական, ապաստան հայցող, ապաստան, քաղաքացիություն չունեցող անձ միջազգային պաշտպանություն, միջազգային կազմակերպություն, կոնվենցիա:

Ժամանակակից աշխարհում ամենաբնորոշ երևույթներից մեկը փախստականների և այլ միգրացիոն հոսքերի լայն տարածումն է: Ներկայումս փախստականների առաջացման գլխավոր պատճառը

պատերազմներն ու ներքին հակամարտություններն են: Փախստականների առաջացման պատճառ են նաև էկոլոգիական աղետները:

Չնայած փախստականների հետ կապված բազմաթիվ խնդիրներին՝ վերջիններիս միջազգային-իրավական պաշտպանությանն ուղղված փաստաթղթերը լիարժեք չեն կարգավորում այս կատեգորիայի անձանց իրավական կարգավիճակի հետ կապված հարցերը:

Կարող ենք ասել, որ «փախստական» հասկացության սահմանման և փախստականների կարգավիճակի վերաբերյալ հստակ և համակողմանի իրավակարգավորումներ նախատեսված չեն նաև պետությունների ներպետական օրենսդրություններով. բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Այս տեսակետից թեմայի վերաբերյալ տեսական հետազոտությունները, ինչպիսին է նաև սույն գիտական հոդվածը, ձեռք են բերում ոչ միայն տեսական, այլև կարևոր կիրառական նշանակություն այն առումով, որ առաջարկում են նշված հիմնահարցերի կարգավորման անհրաժեշտ լուծումներ:

Պետք է նշել, որ թեև Հայաստանի Հանրապետությունում փախստականների միջազգային իրավական հիմնահարցերի վերաբերյալ առկա են արժեքավոր գիտական հետազոտություններ, այդ հիմնախնդիրները դեռևս տեսական և գործնական ավելի լայն ուսումնասիրության կարիք ունեն:

Ակնհայտ է, որ փախստականների ընդունումը բազմաթիվ դժվարություններ է ստեղծում ապաստանի երկրների համար՝ հատկապես ծանրաբեռնելով ավելի ցածր կենսամակարդակ ունեցող պետությունների տեղական ռեսուրսները: Սակայն փախստականների ինտեգրումը միաժամանակ նաև ընդունող երկրի համար մեծ հնարավորություններ է ստեղծում: Փախստականները մասնավորապես կարող են օգտակար լինել պետությանը՝ իրենց հետ բերելով նոր հմտություններ և կարողություններ, ներգրավելով ռեսուրսներ միջազգային համայնքներից՝ նպաստելով հասարակության բազմազանությանը:

Փախստականների միջազգային իրավական կարգավիճակի հետ կապված հիմնախնդիրներն անմիջականորեն առնչվում են նաև մեր հանրապետությանը, քանի որ, ինչպես հայտնի է, 2020 թ. արցախա-ադրբեջանական պատերազմի և 2023թ. իրադարձությունների հետևանքով Արցախից բռնի տեղահանված անձինք ապաստան գտան Հայաստանի Հանրապետությունում. նրանց մի մասը ՀՀ-ում ստացավ

փախստականի կարգավիճակ, մինչդեռ, ինչպես արդեն նշեցինք, փախստականների իրավական կարգավիճակի հասկացության և բովանդակության հետ կապված ՀՀ օրենսդրության մեջ դեռևս գոյություն ունեն բացեր:

Փախստականների պաշտպանության միջազգային իրավական ինստիտուտի ձևավորումն ունի հնագույն արմատներ, սակայն միջազգային հանրության պատասխանատվությունը փախստականների պաշտպանության և աջակցության նկատմամբ սկիզբ է առել վերջին հարյուրամյակում: Տարբեր ժամանակաշրջաններում հայրենիքը լքած մարդկանց քանակը միշտ էլ մեծ չափերի է հասել, սակայն 20-րդ դարի առաջին կեսին այս երևույթն առավել մեծ ծավալների հասավ: Դրա պատճառը հատկապես Առաջին համաշխարհային պատերազմն էր իր պատճառած վնասներով և հետևանքներով²⁴:

1921թ.-ին Ազգերի լիգայի շրջանակներում (որը ստեղծվել էր Առաջին համաշխարհային պատերազմից հետո որպես խաղաղություն երաշխավորող կազմակերպություն), հրավիրվեց փախստականների հիմնախնդրին վերաբերող առաջին համաժողովը: Համաժողովի արդյունքում որոշում ընդունվեց հիմնադրել ռուս փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի պաշտոնը: Այդ պաշտոնում նշանակվեց նորվեգացի հայտնի գիտնական և պետական գործիչ Ֆրիտյոֆ Նանսենը: Հետագայում՝ 1925թ.-ին, Նանսենին հանձնարարվեց նաև ուսումնասիրել հայ փախստականների հիմնախնդիրը, և այդ նպատակով վերջինիս ղեկավարությամբ ստեղծվեց հատուկ հանձնաժողով²⁵:

Եվրոպայում մարդկանց մեծաքանակ տեղաշարժը կասեցնելու նպատակով 1943թ. նոյեմբերին հիմնվեց «Օգնության և հետապատերազմյան վերականգնման Միացյալ ազգերի ադմինիստրացիան» /UNRRA/՝ պատերազմի արդյունքում տեղահանված անձանց օգնություն տրամադրելու համար: Այս կազմակերպությունը փախստականների հիմնախնդրով զբաղվող կազմակերպությունն չէր. այն օգնում էր պատերազմի արդյունքում տեղահանված անձանց, հազվադեպ՝ քաղաքական

²⁴ Տե՛ս Վարդանյան Ք., Փախստականների միջազգային իրավական և ներպետական պաշտպանությունը, Ե., 2018, էջ 9:

²⁵ Տե՛ս **Նանսեն Ֆ.**, Խաբված ժողովուրդ, Ազգերի ընկերակցության Գլխավոր հանձնակատարի հետազոտական ճանապարհորդությունը Վրաստան և Հայաստան, Ե., 2000, էջ 11:

փախստականներին: Եվ քանի որ UNRRA-ի հիմնական գործառնությունը փախստականների (այդ թվում՝ քաղաքական փախստականների) պաշտպանությունն ապահովելը չէր, այն չէր կարող համարվել հիմնական կառույց, որը հավասարապես կտրամադրեր օգնություն բոլոր տեսակի փախստականներին, ուստի անհրաժեշտություն կար ստեղծել միջազգային մի կազմակերպություն, որի առաջնային գործառնությունը կլիներ փախստականների պաշտպանությունը:

1947թ. ՄԱԿ-ի կողմից ստեղծվեց Փախստականների միջազգային կազմակերպությունը (այսուհետ՝ ՓՄԿ), որն առաջին միջազգային մարմինն էր, որ զբաղվեց փախստականների հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությամբ: Նրա գործառնությունն էին անձի կարգավիճակի հաստատումը, իրավական և քաղաքական պաշտպանությունը, հայրենադարձությունը, վերաբնակեցումը նոր տարածքում: Ժամանակի ընթացքում պետությունները սկսեցին անվստահություն ներկայացնել այս կազմակերպության նկատմամբ և չէին ֆինանսավորում վերջինիս, ինչի հետևանքով 1951թ. ՓՄԿ-ն դադարեցրեց իր գոյությունը:

Փախստականների միջազգային-իրավական կարգավիճակի վերաբերյալ առաջին հիմնարար միջազգային իրավական փաստաթուղթը «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ. կոնվենցիան է (այսուհետ՝ Կոնվենցիա), որի 1-ին հոդվածի համաձայն՝ փախստական համարվում է այն անձը, ով՝

1. փախստական է համարվել՝ ըստ 1926թ. մայիսի 12-ին 1928թ. Հունիսի 30-ի համաձայնագրերի կամ ըստ 1933թ. հոկտեմբերի 28-ին 1938թ. փետրվարի 10-ի կոնվենցիաների, 1939թ. սեպտեմբերի 14-ի արձանագրության կամ Փախստականների հարցերով միջազգային կազմակերպության կանոնադրության,

2. մինչև 1951թ. հունվարի 1-ը տեղի ունեցած իրադարձությունների և ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական կարծիքի հարելու պատճառով հետապնդվելու հիմնավորված երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և նման երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և նման իրադարձությունների հետևանքով գտնվելով իր նախկին մշտական

բնակության երկրից դուրս, անկարող է կամ նման երկյուղի պատճառով, չի ցանկանում վերադառնալ այնտեղ²⁶:

Այնուամենայնիվ, անձինք, որոնք ստիպված են իրենց ծագման երկիրը լքել միջազգային կամ ազգային զինված ընդհարումների պատճառով, որպես կանոն, փախստականներ չեն համարվում 1951թ. կոնվենցիայով և 1967թ. արձանագրությամբ: Այդուհանդերձ նրանց միջազգային պաշտպանությունն ապահովված է այլ փաստաթղթերով, ինչպիսիք են, օրինակ, 1949թ. Ժնևի կոնվենցիան «Պատերազմի զոհերի պաշտպանության վերաբերյալ» և 1949թ. Ժնևի կոնվենցիային կից 1977թ. «Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության վերաբերյալ» արձանագրությունը: Սակայն օտարերկրյա ներխուժումը պետության տարածք կամ դրա մի մասը կամ դրանց բռնազավթումը կարող է հետապնդում առաջացնել 1951թ. կոնվենցիայում թվարկված մեկ կամ մի քանի շարժառիթներով: Նման դեպքերում փախստականի կարգավիճակը կախված կլինի այն բանից, թե հայցողն արդյոք ի վիճակի կլինի ապացուցել, որ բռնազավթված տարածքում ինքն ունի «հետապնդման հիմնավոր երկյուղ» և, ի լրումն դրա, արդյոք նա ի վիճակի է օգտվելու իր կառավարության պաշտպանությունից կամ այն ուժի պաշտպանությունից, որի պարտքն է զինված ընդհարումների ընթացքում ապահովել նրա երկրի շահերը, թե ոչ, և արդյոք նման պաշտպանությունը կարող է արդյունավետ համարվել²⁷:

Կարծում ենք, Կոնվենցիայի փոփոխությունը, մասնավորապես՝ «պատերազմների կամ զինված ընդհարումների հետևանքով երկիրը լքած անձանց» ներառումը փախստականի հասկացությունում, կարևոր քայլ կարող է լինել փախստականների կարգավիճակի առավել հստակ սահմանման առումով:

Փաստորեն, վավերացնելով կոնվենցիան՝ պետությունները համաձայնեցին ստանձնել դրանում ամրագրված՝ «փախստական» հասկացության հետ կապված պարտավորությունները: Իհարկե, Կոնվենցիան չի պարտադրում պետություններին անպայմանորեն փախստականի կար-

²⁶ Տե՛ս Փախստականի կարգավիճակի մասին կոնվենցիա, Հոդված 1:

<https://www.arlis.am/documentview.aspx?docID=60134>

²⁷ Տե՛ս Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկ, ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակ, Ե., 2011, էջ 51:

զավիճակ տալ: Ապաստան տալու կամ մերժելու հետ կապված որոշումը կայացնում են ներպետական իրավասու մարմինները՝ պետությունների կամքի և հնարավորությունների սահմաններում՝ առաջնորդվելով միջազգային իրավունքի հիման վրա ընդունված ներպետական օրենսդրությամբ:

Տարբեր պետություններ իրենց ներպետական օրենսդրությամբ տարբեր կերպ են կարգավորում փախստականների իրավունքները՝ Կոնվենցիայով սահմանված հասկացության հիման վրա ձևավորելով իրենց ազգայինը և դիտելով այն որպես իրենց երկիր ընդունելու համար չափանիշ:

Հայաստանի Հանրապետությունն անկախություն ձեռք բերելուց հետո միջազգային լիիրավ անդամ դառնալու և միջազգային հեղինակություն ձեռք բերելու նպատակով անդամակցել է միջազգային համընդհանուր և տարածաշրջանային մի շարք կազմակերպությունների, միացել, ստորագրել և վավերացրել է բազմաքանակ միջազգային պայմանագրեր և ստանձնել պարտավորություններ՝ կյանքի կոչելով դրանցով սահմանվող դրույթները: ՀՀ-ն 1993թ. հուլիսի 6-ին միացել է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ. կոնվենցիային և 1967թ. Արձանագրությանը: Հետագայում, ի լրումն իր կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների, 1999թ.-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Փախստականների մասին» ՀՀ օրենքը: Չնայած այն հանգամանքին, որ սույն օրենքի ընդունումը բավականին առաջադիմական քայլ էր, այնուամենայնիվ, նրանում առկա էին մի շարք բացեր, որոնք հետագա մշակման ու կատարելագործման կարիք ունեին: Այդ բացերն էական խոչընդոտներ էին ստեղծում ապաստան հայցողների և փախստականների իրավունքների լիակատար պաշտպանության համար:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է փախստականի ճանաչման, ապաստանի տրամադրման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ապահովում է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ. կոնվենցիայի, դրա 1967թ. արձանագրության կիրառումը և ճանաչում է բոլոր օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ ՀՀ տարածքում և ՀՀ պետական սահմանի անցման կետերում ապաստան հայցելու, ինչպես նաև ապաստան ստանալու իրավունքը, եթե նրանք բավարարում են ապաստանի տրամադրման համար օրենքով սահմանված անհրաժեշտ պա-

հանջները: Այս օրենքը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան ապահովում է նաև բոլոր օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց իրենց քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության կամ որևէ այլ երկիր վտարելուց պաշտպանությունը, որտեղ նրանց սպառնում է խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելու վտանգ:

Ներպետական օրենսդրությունը տալիս է նաև ապաստանի սահմանումը: Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ ապաստանն օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ-ում շնորհված պաշտպանությունն է: Ապաստանը տարածվում է նաև այլ պետության կողմից փախստական ճանաչված օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի վրա, եթե նա սահմանված կարգով մուտք է գործել ՀՀ տարածք և ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ բնակության իրավունք տվող կացության որևէ կարգավիճակ: Ապաստանի տրամադրումը պետք է ընթանա խաղաղ և մարդասիրական մթնոլորտում, և դա չպետք է վերածվի անբարյացակամ վերաբերմունքի, քանի որ դա չի ենթադրում որևէ քննադատություն փախստականի քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության կամ որևէ այլ երկրի հանդեպ²⁸:

Ի տարբերություն կոնվենցիայի՝ ՀՀ օրենքը փախստական է ճանաչում ոչ միայն ռասսայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական հայացքների հետևանքով հետապնդման հիմնավոր երկյուղ ունեցող անձանց, այլ նաև այն օտարերկրյա քաղաքացուն, որը ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով: Ինչպես արդեն նշել ենք, ներպետական օրենսդրությունն ավելի լայն սահմանում է տվել փախստականի հասկացությունը, ինչը հնարավորություն է տալիս օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց ավելի մեծ շրջանակի պաշտպանել և տալ

²⁸ Տե՛ս «Փախստականի և ապաստանի մասին» ՀՀ օրենք:
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=48710>

հնարավորություն օրինական հիմքով բնակվել այստեղ: Այսպիսի ընդլայնումը, մեր կարծիքով, իհարկե, դրական է, սակայն երբեմն այլ հիմքերով, քան նախատեսված է Կոնվենցիայով, ապաստան հայցողների մեծ հոսքը պետության համար կարող է առաջացնել ծանր հետևանքներ, քանի որ պետք են մեծ ռեսուրսներ նրանց կենսական միջոցներով ապահովելու և աջակցելու համար:

Փախստականը, նշված դրույթի համաձայն, կարգավիճակ ստանալուց հետո ստանձնում է կոնվենցիայով և ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանել է. «Յուրաքանչյուր փախստական իրեն ապաստան տված երկրի հանդեպ ունի պարտականություններ, որոնք, մասնավորապես, պահանջում են, որ նա ենթարկվի այդ երկրի օրենքներին ու ենթաօրենսդրական ակտերին, ինչպես նաև հասարակական կարգի պահպանմանն ուղղված միջոցառումներին»:

Կան դեպքեր, երբ փախստականները չեն կարողանում կամ չեն ցանկանում վերադառնալ իրենց երկիր, քանի որ իրենց երկրում կրկին հալածանքների վտանգ կա: Կարգավիճակ տալու դեպքում ապաստանի երկիրը փախստականներին տալիս է մշտական բնակության իրավունք՝ հետագայում քաղաքացիություն ստանալու հնարավորությամբ: Այնուամենայնիվ, շատ պետություններ վախենում են սակավ ռեսուրսների բաշխման հետևանքներից: Սակայն փախստականների ինտեգրումը ապաստանի երկրին կարող է օգուտներ բերել, այնքանով, որ փախստականները կարող են օգուտ բերել պետությանը՝ իրենց հետ բերելով նոր հմտություններ և կարողություններ, կարող են ներգրավել ռեսուրսներ միջազգային համայնքներից, կարող են նպաստել հասարակության բազմազանությանը:

Այս իմաստով համակարծիք ենք տեսական այն դիրքորոշումների հետ, համաձայն որոնց՝ հասարակությունը և տնտեսությունը կարող են զարգանալ այլ մշակույթներից նոր մոտեցումներ և հայեցակարգեր փոխանցելով: Բայց և այնպես պետությունն առանց բավարար ռեսուրսների խնդիրներ է ունենալու նաև փախստականների ինտեգրմանն աջակցելու հարցում: Կարծում ենք՝ այս խնդիրն առաջնային և հիմնարար պետք է համարել և միջազգային կազմակերպությունների միջոցով նախապահովել պետությանը բավարար միջոցներով, որպեսզի պետությունն

էլ իր հերթին բավարարի փախստականներին կենսաապահովման միջոցներով:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը նախատեսել է փախստականների վերաբերյալ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին է ժամանակավոր պաշտպանությունը²⁹: Ժամանակավոր պաշտպանությունը կարճաժամկետ միջոց է, որը կիրառվում է անձանց զանգվածային ներհոսքի ժամանակ և տրվում է օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց խմբերին: ՀՀ կողմից ժամանակավոր պաշտպանության տակ վերցված օտարերկրացիները ևս ճանաչվում են փախստական և ունեն փախստականների համար օրենքով սահմանված միևնույն իրավունքներն ու պարտականությունները, սակայն նրանց ապաստան է շնորհվում առանց սովորաբար կիրառվող ընթացակարգերի: Լիազոր պետական մարմինները ժամանակավոր պաշտպանության ենթակա անձանցից չեն պահանջում ներկայացնել ապաստանի անհատական դիմումներ և վերջիններիս տեղեկացնում են լիազոր մարմին անհապաղ դիմելու անհրաժեշտության մասին: Լիազոր մարմինը ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականներին տրամադրում է ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ, ապա այն փոխանակվում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով: Ժամանակավոր պաշտպանությունը տրվում է 1 տարի ժամկետով, երկարաձգման հնարավորությունով:

Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականների խմբի ծագման երկրի իրավիճակի կարգավորման հիմնավոր նախադրյալների առկայության կամ ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականների խմբի՝ ՀՀ-ում գտնվելու հետ կապված՝ ՀՀ ազգային անվտանգությանը սպառնացող խնդիրների առաջացման դեպքում Կառավարությունը Արտաքին գործերի հարցերով և Ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմինների համատեղ առաջարկով կարող է տվյալ խմբի նկատմամբ դադարեցնել ժամանակավոր պաշտպանությունը: ՀՀ-ի կողմից ժամանակավոր պաշտպանություն ստացած խմբի նկատմամբ ժամանակավոր պաշտպանության դադարեցման դեպքում այդ խմբի անդամներն այլևս չեն օգտվում ժամանակավոր պաշտպանված

²⁹ Տե՛ս «Փախստականի և ապաստանի մասին» ՀՀ օրենք, Հոդված 3.:

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=48710>

անձանց համար սահմանված իրավունքներից: Ժամանակավոր պաշտպանությունից զրկված անձինք իրավունք ունեն ներկայացնելու ապաստանի անհատական դիմում, որ կքննարկվի օրենքով սահմանված՝ ապաստանի անհատական ընթացակարգով: Ժամանակավոր պաշտպանություն ստացած խմբի անդամների՝ փախստականի ճանաչման և ապաստանի իրավունքի դադարեցումը, ինչպես նաև չեղյալ հայտարարելն իրականացվում են օրենքով սահմանված՝ անհատական ընթացակարգով ապաստան ստացած փախստականների համար նախատեսված ընթացակարգերով:

Փախստականների պաշտպանությունը երաշխավորելու համար պետությունը պարտավոր է մշակել և կիրառել փախստականի կարգավիճակի ճանաչման արդարացի ընթացակարգեր: ՀՀ օրենքը նախատեսել է փախստական ճանաչվելու ներառման, բացառման և կարգավիճակի դադարեցման դրույթները:

«Փախստական ճանաչվելու ներառման դրույթ» ասելով՝ նկատի ունենք այն հիմնարար չափանիշները, որոնց առկայության դեպքում օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը ճանաչվում է փախստական: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը իմպլեմենտացրել է կոնվենցիայով նախատեսված ներառման դրույթները՝ դրանք ներառելով «փախստական» հասկացության մեջ: Այդ դրույթներն են՝

1. անձինք գտնվում են իրենց ծագման երկրից դուրս (քաղաքացիական պատկանելության կամ, եթե որևէ պետության քաղաքացի չեն, իրենց նախկին մշտական բնակության վայրից դուրս),

2. չեն կարող կամ չեն ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից կամ վերադառնալ այնտեղ,

3. այդպիսի անհնարինությունը կամ ցանկության բացակայությունը պայմանավորված է հետապնդումների ենթարկվելու հիմնավոր երկյուղով,

4. հետապնդումները, որոնցից անձը երկյուղում է, պայմանավորված են ռասայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելիության կամ քաղաքական համոզմունքների հատկանիշներով:

Փախստականի կարգավիճակի բացառման դրույթներն այն չափանիշներն են, որոնց առկայությամբ անձը չի կարող ճանաչվել փախս-

տական: Մասնավորապես «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի ճանաչվում փախստական, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա՝

1. կատարել է հանցագործություն ընդդեմ խաղաղության, պատերազմական հանցագործություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություն՝ համաձայն նման հանցագործությունների կապակցությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ստեղծված միջազգային փաստաթղթերի,

2. կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն ՀՀ տարածքից դուրս նախքան ՀՀ-ում ապաստան հայցող դառնալը,

3. մեղավոր է ճանաչվել Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին հակասող արարքների կատարման մեջ:

Ապաստանի տրամադրումը կարող է մերժվել այն փախստականին, որը ժամանել է երրորդ ապահով երկրից, որտեղ նա չունի հետապնդման, մարդու իրավունքների խախտումների կամ իր երկիր վերադարձվելու երկյուղ կամ չունի արտաքին հարձակման, համատարած բռնության, այլ երկրի տիրապետության տակ գտնվելու, ներքին հակամարտությունների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների (վտանգների) ենթարկվելու երկյուղ: Փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու մերժման որոշումը կայացնում է միայն լիազոր մարմինը՝ ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը՝ ՄՔԾ-ն:

Օրենքը սահմանել է այն հիմքերը, որոնց առկայությամբ փախստական ճանաչված անձի կարգավիճակը դադարում է³⁰: Մասնավորապես, անձը դադարում է փախստական ճանաչվել, եթե նա՝

1. կամավոր կրկին ընդունել է այն երկրի պաշտպանությունը, որի քաղաքացին էր,

2. կորցրած լինելով իր քաղաքացիությունը՝ կամավոր վերաստանձնել է այն,

3. ձեռք է բերել Հայաստանի Հանրապետության կամ որևէ այլ պետության քաղաքացիություն և օգտվում է այդ պետության պաշտպանությունից,

³⁰ Տե՛ս «Փախստականի և ապաստանի մասին» ՀՀ օրենք, Հոդված 10.:
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=48710>

4. կամավոր վերահաստատվել է այն երկրում, որը լքել էր կամ որից մեկնել էր հետապնդման երկյուղի պատճառով,

5. այլևս չի կարող մերժել այն երկրի պաշտպանությունը, որի քաղաքացին է, որովհետև այն հանգամանքները, որոնց պատճառով նա ճանաչվել էր փախստական, դադարել են գոյություն ունենալ,

6. չունենալով քաղաքացիություն՝ ի վիճակի է վերադառնալ իր նախկին բնակության երկիրը, քանի որ այն հանգամանքները, որոնց պատճառով նա ճանաչվել էր փախստական, դադարել են գոյություն ունենալ, կամ

7. անձնական պատճառներով այլևս չի ցանկանում համարվել փախստական:

Փախստականին ՀՀ-ում տրամադրված ապաստանը դադարեցվում է, եթե նա հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում ՀՀ ազգային անվտանգության համար կամ դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար: Փախստականին ՀՀ-ում տրամադրված ապաստանը դադարեցվում է, եթե նա մեկնել է ՀՀ-ից և գտնվում է ՀՀ տարածքից դուրս «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 30-րդ հոդվածի հիման վրա տրված կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի գործողության ժամկետից հետո: Փախստականի ճանաչումը և նրան տրամադրված ապաստանը դադարեցնում է միայն ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (ՄԲԾ):

Լիազոր մարմնի կողմից փախստականի ճանաչումը կարող է նաև չեղյալ հայտարարվել, եթե պարզվում է, որ անձն ակնհայտորեն չի բավարարում օրենքով փախստական ճանաչվելու պահանջներին, որովհետև նոր հայտնաբերված ապացույցները վկայում են, որ նախկինում արված հայտարարությունները և ներկայացված փաստաթղթերը կեղծ են: ՄԱԿ ՓԳՀ-ն նախատեսել է նաև ապաստան հայցողների պարտականությունները, որոնց մեջ կարևոր է ճիշտ տեղեկություններ տալու պարտականությունը: Մասնավորապես՝ «1. Ապաստան հայցողը պարտավոր է համագործակցել Միգրացիոն ծառայության հետ՝ տրամադրելով լիարժեք և ճիշտ տեղեկատվություն, 2. Ապաստան հայցողը պարտավոր է Միգրացիոն ծառայություն ներկայացնել ունեցած բոլոր փաստաթղթերը»:

Անդրադառնալով լիարժեք և ճիշտ տեղեկություն տալու պարտականությանը՝ գտնում ենք, որ գործնականորեն որևէ գործիքակազմ դեռևս

չկա ապաստան հայցողների այս պարտականությունը չկատարելու դեպքում վերջիններիս պատասխանատվության ենթարկելու համար: Այսինքն, երբ ապաստան հայցողը լիազոր մարմնին տրամադրում է կեղծ տեղեկատվություն, դա բացահայտելու դեպքում առավելագույնը, որ կարող է արվել փախստականի ճանաչումը չեղարկելն է: Սակայն, մեր կարծիքով, պետական մարմնին սուտ տեղեկություն ներկայացնելու համար ապաստան հայցողը պետք է կրի նաև այլ պատասխանատվություն, օրինակ՝ տուգանք: Այսպիսի կարգավորումը զերծ կպահի մի շարք խնդիրներից:

ՀՀ օրենքը նախատեսել է նաև ապաստան հայցողների և փախստականների անձը հաստատող փաստաթղթերին վերաբերող կարգավորումներ: ՄՔԾ-ն յուրաքանչյուր ապաստան հայցողին և նրա ընտանիքի անդամներին, ապաստանի հայց ներկայացնելուց հետո անվճար տրամադրում է անձը հաստատող վկայական: Ապաստան հայցողների անձը հաստատող վկայականը տրամադրվում է երեք ամսով, և մինչև ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը լիազոր մարմնի կողմից այդ վկայականի վավերականության ժամկետը յուրաքանչյուր անգամ երկարաձգվում է երեքական ամսով: Անձը հաստատող վկայականը հաստատում է ապաստան հայցողի օրինական բնակության փաստը և գործում է ՀՀ ողջ տարածքում: Այն իրավունք է տալիս ապաստան հայցողին ընտրելու բնակության վայր ցանկացած բնակավայրում: Անձը հաստատող վկայականը կորցնում է իր վավերականությունը ապաստանի հայցի մերժման վերաբերյալ վերջնական որոշումն ապաստան հայցողին ուղարկելուց մեկ շաբաթ հետո, իսկ հայցը բավարարելու դեպքում՝ լիազոր մարմնի կողմից ապաստան հայցողին, կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տրամադրվելու պահից:

Փախստականի կարգավիճակ ստանալուց հետո անձին տրվում է ճամփորդական փաստաթուղթ: Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը փախստականի անձը և ՀՀ-ում օրինական բնակությունը հաստատող և ՀՀ-ից դուրս գալու համար նախատեսված վավեր փաստաթուղթն է: Այն նաև հիմք է փախստականի կողմից օրենքով սահմանված իրավունքներից ու ազատություններից օգտվելու համար: Լիազոր մարմինը ՀՀ-ում ապաստան ստացած փախստականներին անվճար տրամադրում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ: Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը վավերական է երկու տարի, որից հետո փախս-

տականի դիմումի հիման վրա լիազոր մարմինը յուրաքանչյուր անգամ փաստաթղթի վավերականության ժամկետը երկարաձգում է ևս երկու տարով: Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը կորցնում է վավերականությունն ապաստանի տրամադրման կամ փախստականի ճանաչման վերաբերյալ որոշումը չեղյալ հայտարարելու կամ դադարեցնելու մասին վերջնական որոշում կայացնելուց մեկ շաբաթ հետո:

ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և ներպետական օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ն ամբողջությամբ ընդունում է միջազգային փաստաթղթերով նախատեսված կարգավորումները և ՀՀ օրենսդրությունն այսօր առավելագույնս համապատասխանում է միջազգային չափանիշներին: Որոշ դեպքերում, ինչպես արդեն նշել ենք, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքն առավել լայն կարգավորումներ է նախատեսում, քան միջազգային պայմանագրերը: Այսինքն՝ միջազգային կոնվենցիայով նախատեսված դրույթների նկատմամբ ՀՀ ներպետական օրենքը փախստականների վերաբերյալ ունի լրացնող դեր, ինչը հնարավորություն է տալիս կոնվենցիոն բացերի դեպքում առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ:

Ներկայումս փախստականների պաշտպանությունը ստացել է համաշխարհային բնույթ, և խոցելի խմբում գտնվող մարդիկ փնտրում են առավել ապահով երկիր, որտեղ կարող են ստեղծել բարեկեցիկ կյանք: Այս առումով ՀՀ-ն համարվում է ապահով երկիր, քանի որ առաջնային տեղում է մարդը, նրա իրավունքները և մարդկանց իրավունքների զանգվածային խախտումներն այստեղ բացակայում են: Պետությունը ղեկավարվում է Կոնվենցիայով և ՀՀ օրենքով՝ պահպանելով այն գաղափարը, որ փախստականի ինստիտուտը բացառապես մարդասիրական բնույթ ունի և չի հետապնդում որևէ քաղաքական շահ և միայն միջազգային կազմակերպությունների և առանձին պետությունների համագործակցությամբ կարող է փախստականներին տրամադրվել արդյունավետ պաշտպանություն, ինչը նրանց համար ամենակարևորն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Նանսեն Ֆ.**, Խաբված ժողովուրդ, Ազգերի ընկերակցության Գլխավոր հանձնակատարի հետազոտական ճանապարհորդությունը Վրաստան և Հայաստան, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 2000:

2. Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիա (www.arlis.am):
3. Փախստականների և ապաստանի մասին ՀՀ օրենք (2008թ.) (www.arlis.am):
4. Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկ, ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակ, Երևան, 2011:
5. Վարդանյան Ք., Փախստականների միջազգային իրավական և ներպետական պաշտպանությունը, Ոստումնական ձեռնարկ, Երևան, «Հայրապետ» հրատ., 2018:

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ МЕЖДУНАРОДНОЙ И ВНУТРЕННЕЙ ПРАВОВОЙ ЗАЩИТЫ ПРАВ БЕЖЕНЦЕВ

Ани Хечоян

Заведующий кафедрой права и социальных наук Северного
университета, к.ю.н.

Лилит Григорян

Студент юридического факультета Северного университета

События, происходящие в мире, вынуждают людей покидать свою страну, селиться в разных государствах, создавать себе благополучную жизнь. В настоящее время прием беженцев и создание благоприятных условий для реализации их прав относятся к числу важнейших проблем, стоящих перед государствами, которые приобретают все больший объем, привлекая внимание международного сообщества и требуя привнести сотрудничество и помощь между государствами выходят на качественный уровень. Международное сообщество пыталось максимально решить эту проблему посредством конвенций и международных структур, однако отдельные страны иногда испытывают трудности с приемом беженцев.

Полагаем, что эти трудности носят не только социально-экономический характер, но и связаны с несовершенством как международного, так и внутригосударственного правового регулирования по вопросам беженцев.

Ключевые слова: беженец, искатель убежища, убежище, лицо без гражданства, международная защита, международная организация, конвенция.

FUNDAMENTAL ISSUES OF INTERNATIONAL AND DOMESTIC LEGAL PROTECTION OF REFUGEES' RIGHTS

Ani Khechoyan

Head of the Department of Law and Social Sciences of Northern University, PhD

Lilit Grigoryan

Student of the Faculty of Law of the Northern University

The events taking place in the world force people to leave their country, settle in different states, create a prosperous life for themselves. At present, the acceptance of refugees and the creation of favorable conditions for the realization of their rights are among the most important problems faced by the states, which are gaining more and more volume, drawing the attention of the international community and demanding to bring the cooperation and assistance between the states to a qualitative level. to a new level. The international community has tried to resolve this problem as much as possible through conventions and international structures, but individual countries sometimes have difficulties in accepting refugees.

We believe, that these difficulties are not only of a socio-economic nature, but are also related to the imperfection of both international and domestic legal regulations regarding refugee issues.

Keywords: *refugee, asylum seeker, asylum, stateless person, international protection, international organization, convention*

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՈՒՍԱՆՈՂԻ ԱԶՔԵՐՈՎ

Սյուզաննա Խաչատրյան

Հյուսիսային համալսարանի 4-րդ կուրսի ուսանող
 Լուչիան Բլազա համալսարանում Erasmus+ շարժունության
 ծրագրի շահառու
syuzannakhachatriann@gmail.com

Համառոտագիր

Բուհերի կառավարման համակարգում այսօր իրենց նշանակալից դերակատարում ունեն ուսանողները, որոնք ընդգրկված են ֆակուլտետային և գիտական խորհուրդներում, ուստի նրանք հնարավորություն ունեն «ներքևից» իրենց առաջարկներն անելու կրթական բարեփոխումների գծով և նույնիսկ ներկայացնելու իրենց փորձը: Այս առումով կարևորվում է կրթական շարժունության ծրագրերին մասնակցած ուսանողներին ականջալուր լինելը, քանի որ հենց նրանք են իրենց փորձառությունը բերում հայրենական բուհ և կիսվում կրթական բարեփոխումների առաջավոր փորձով: Եվ այստեղ հատկապես կարևորվում է դասախոսակենտրոն ուսուցումից կրթական ծառայությունների ուսանողակենտրոն համակարգին անցման փորձի ուսումնասիրումը:

Հիմնաբառեր՝ կրթական շարժունության ծրագրեր, ուսանողակենտրոն ուսուցում, կրթական բարեփոխումներ:

Կրթական բարեփոխումները համալսարանական միջավայրում հարափոփոխ բնույթ են կրում, որոնց իրենց մասնակցությունն են ցուցաբերում նաև ուսանողները: Որպես առաջնային շահառուներ՝ ուսանողներին հետաքրքրում է կրթության որակի ապահովման, կրթական բարենպաստ միջավայրի ձևավորման, գործատուների հետ շփումների ամրապնդման, բուհ-աշխատաշուկա փոխադրությունների սերտացման խնդիրները:

Հայաստանի բարձրագույն կրթության ժամանակակից համակարգը ներկայացված է պետական, միջպետական և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների խառնուրդով, որոնք ունեն տարբեր աստիճանի ինքնավարություն և ֆինանսական անկախություն: Սահմանափակ պետական ֆինանսավորման պայմաններում ուսանողների ուսման վարձը բուհերի եկամտի հիմնական աղբյուրն է: Եկամուտ-

ների ոչ դիվերսիֆիկացված աղբյուրների պատճառով բուհերը սահմանափակ են բյուջեով և հիմնականում կենտրոնանում են պահպանման, այլ ոչ թե զարգացման ներդրումների վրա:

Հայաստանի կառավարությունը պետք է ապահովի, որ առավելագույն ուշադրություն դարձվի իր փոխգործակցության մեջ միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող բազմաթիվ միջամտություններին իր կրթական համակարգում, հատկապես այստեղ՝ ԲՈՒՀ-ի համակարգում: Մասնավորապես այս նկատառումը պետք է ուղղված լինի առավելագույն և կայուն ազդեցության հասնելուն՝ խուսափելով նախագծերի միջև անհամապատասխան կրկնությունից և նոր նախագծերում զգալի «ավելացված արժեք» ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման շուրջ երեք քառորդն իրականացվում է կրթավճարների հաշվին, իսկ բակալավրիատի կրթության տևողությունը հիմնականում չորս տարի է: Հետևաբար ուսանողությունը կանգնում է լուրջ մարտահրավերի առջև՝ փորձելով հասկանալ, թե որքանով են արդարացվում համալսարանում ուսումնառության տարիներին ծախսված ֆինանսական և ժամանակային ռեսուրսները: Թերևս նման ցուցիչ կարող է հանդիսանալ կոնկրետ մասնագիտության գծով շրջանավարտի աշխատանքի անցնելու արագությունը, որը, ցավոք, չի բարձրաձայնվում հայրենական բուհերի կողմից, և որևէ մասնագիտություն ընտրելիս դիմորդի համար հասկանալի չի դառնում աշխատաշուկայում դրա պահանջարկի աստիճանը: Այնուհանդերձ նման պրակտիկա գործում է միջազգային բուհերում, որոնց կողմից պարբերաբար հրատարակվում են ըստ իրենց մասնագիտության շրջանավարտների աշխատանքի անցման տեսակարար կշիռն ու արագությունը: Կարծում ենք, որ հայաստանյան բուհական համակարգում առաջավոր այդ փորձի ներդրումը պետք է համարել արդիական:

Հաջորդ հիմնախնդիրը, որին առնչվում են ՀՀ բուհերի ուսանողները, կրթական գործընթացում մասնագիտական կիրառական հմտությունների մատուցման թերաբժնորումն է: Դասավանդվող առարկայական ծրագրերը գերհագեցած են տեսական գիտելիքներով և կիրառական հմտությունների և կարողությունների մատուցման բաղադրիչները լիարժեք չեն դրսևորում: Արդյունքում շրջանավարտները, համալսարաններում կուտակելով ծանրակշիռ մասնագիտական գիտելիք-

ներ, չեն կարողանում արդյունավետորեն դրանք իրացնել աշխատավայրերում, քանի որ չունեն ձևավորված լիարժեք մասնագիտական կարողություններ և հմտություններ: Փորձը ցույց է տալիս, որ եվրոպական համալսարաններն աստիճանաբար կրճատում են լսարանային հաճախումների ժամերը և ուսումնառության ծանրության կենտրոնը բուհերից տեղափոխում են աշխատավայրեր:

Այսինքն՝ ուսանողներին «գործուղում» են գործատուի մոտ՝ կոնկրետ աշխատանք կատարելու՝ առանց բուհից կտրելու: Իսկ այսօր հայաստանյան բուհերի բակալավրիատի ուսանողների շաբաթական լսարանային ծանրաբեռնվածությունը հասնում է մինչև 30 ժամի, և սովորողները շաբաթական 5 օր ծանրաբեռնված ակադեմիական ռեժիմով կրթօջախներ են հաճախում և կենտրոնանում տեսական ուսուցման վրա՝ հետին պլան թողնելով գործնականը: Փորձը ցույց է տալիս, որ այդ բացը լրացնելու համար շատ միջազգային բուհեր ուսանողներին իրենց մասնագիտությամբ աշխատանքի է տեղավորում հենց համալսարանական տարիներին՝ նրանց բուհի ամբիոնների կողմից առաջադրանքներ տրամադրելով, որպեսզի արդյունավետ համակցվի տեսականն ու գործնականը, որպեսզի իր իսկ ուսումնառության տարիներին ուսանողը կիրառական հմտություններ ձեռք բերի: Այս պարագայում, կիսով չափ կրճատվում են համալսարանական հաճախումները՝ դրանով իսկ ուսանողին հնարավորություն տալով խորանալու գործնական աշխատանքի մեջ և «առաջին ձեռքից» վերցնելու իր մասնագիտության մեջ տեղի ունեցող նորությունները:

Կրթական բարեփոխումների առանցքային ուղին է նաև խմբային աշխատանքների ակտիվացումը: Մեկուսացված, անհատական ճանապարհով առաջադրանքների կատարումը այնքան էլ արդյունավետ չեն համարվում: Խմբային աշխատանքների փորձ չունենալով՝ ապագա շրջանավարտը հաղորդակցման խնդիրներ է ունենում աշխատանքային կոլեկտիվում, դժվարություններ է տեսնում աշխատանքային խմբերի աշխատանքներում ներդաշնակ համագործակցելիս: Ավելին, խմբային աշխատանքների կատարմամբ ուսանողի մոտ ձևավորվում են համատեղ որոշումների կայացման հմտություններ, առաջորդության որակներ, որոնք չափազանց կարևոր են հետագա կարերիայի աճի գործընթացում:

Եվ, վերջապես, կրթական բարեփոխումներին իրենց լուրջ աջակցությունն են ցուցաբերում ուսանողական շարժունության ծրագրերը:

Թեկուզ մեկ կիսամյակ արտասահմանյան որևէ բուհում սովորելը սոցալ-մշակութային և անգամ ակադեմիական տարողությամբ կարող է համարժեք լինել երկու և ավելի կիսամյակ հայրենական բուհում սովորելուն: Ուսումը շարունակելով արտասահմանում, հայտնվելով նոր միջավայրում՝ ձեռք ես բերում ոչ միայն ակադեմիական, այլև կենցաղավարման, հաղորդակցման, մշակութային նոր գիտելիքներ, որոնք լրացնում են կուտակված մասնագիտական հմտություններին, կարողություններին և ուժեղացնում են շրջանավարտի մրցունակությունը: Եվ պատահական չէ, որ եվրոպական բարձրագույն կրթության տարածքում արդեն այնպիսի պահանջ է ներկայացվում, համաձայն որի՝ շրջանավարտի կուտակած կրեդիտներից առնվազն 15%-ը ձեռք է բերվելու ուսանողական շարժունության ծրագրերից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կարողությունների զարգացման ծրագրերի ներազդեցության ազգային զեկույց ([https://erasmusplus.am/ here-publications/?lang=hy](https://erasmusplus.am/here-publications/?lang=hy)):
2. Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում (https://erasmusplus.am/home/wp-content/uploads/2021/07/Bologna-Reforms-in-Armenia_Report_2012-min.pdf):
3. Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեփոխության ամրապնդում ([https://erasmusplus.am/ here-publications/?lang=hy](https://erasmusplus.am/here-publications/?lang=hy)):

ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ РЕФОРМЫ ГЛАЗАМИ СТУДЕНТА

Сюзанна Хачатрян

Студентка 4 курса Северного университета

Бенефициар программы мобильности “Erasmus+” в Университете Лучиана Блага

Сегодня студенты, входящие в состав факультетских и научных советов, играют значительную роль в системе управления вузами. Поэтому у них есть возможность внести свои предложения “снизу” в сфере образовательных реформ и даже представить свой опыт. В этой связи важно прислушиваться к студентам, принявшим участие в программах образова-

тельной мобильности, ведь они привносят свой опыт в отечественный вуз и делятся передовым опытом образовательных реформ. И здесь особенно важно изучение опыта перехода от педагого-центрированного обучения к личностно-ориентированной системе образовательных услуг.

Ключевые слова: программы образовательной мобильности, студенто-ориентированное обучение, образовательные реформы.

EDUCATIONAL REFORMS THROUGH THE EYES OF A STUDENT

Suzanna Khachatryan

4th year student at Northern University

Beneficiary of the “Erasmus+” mobility program at Lucian Blaga
University

Today, students, who are included in faculty and scientific councils, have a significant role in the management system of universities. Therefore, they have the opportunity to make their proposals “from below” in the field of educational reforms, and even present their experience. In this regard, it is important to listen to the students who participated in the educational mobility programs, because they bring their experience to the domestic university and share the advanced experience of educational reforms. And here, the study of the transition experience from teacher-centered teaching to the student-centered system of educational services is especially important.

Keywords: educational mobility programs, student-centered learning, educational reforms.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

« Կանաչ գործարարություն»

Արմեն Ճուղուրյան	«Կանաչ ձեռնարկատիրության» ֆինանսական վերահսկողության ուղիները.....	8
---------------------	---	---

Սվետլանա Կարապետյան	«Կանաչ նորամուծությունների» կառավարման առանձնահատկությունները	25
------------------------	--	----

Լուսինե Առուստամյան	Կայուն զարգացման աուդիտի խնդիրները.....	35
------------------------	---	----

Բանասիրություն

Անի Բսրայեյյան	Պարույր Սևակի լեզվագիտական հայացքները.....	42
-------------------	---	----

Աստղիկ Աբրահամյան	Կերպարակերտման հոգեբանական հնարանքները գեղարվեստահրապարակախոսական ժանրերում...	48
----------------------	---	----

Իրավագիտություն

Վահագն Պետրոսյան	Համայնքների իրավունքների պաշտանության պետական վերահսկողության առանձնահատկու- թյունները ՀՀ-ում.....	65
---------------------	--	----

Լիանա Հակոբյան Լիլիա Յուլյան	Պետական կառավարման ապակենտրոնացման էությունը և առանձնահատկությունները ՀՀ-ում.....	87
---------------------------------------	--	----

Անի Խեչոյան Լիլիթ Գրիգորյան	Փախստականների իրավունքների միջազգային և ներպետական իրավական պաշտպանության հիմնախնդիրները.....	103
--------------------------------------	---	-----

Երիտասարդ հետազոտողի ամբիոն

Սյուզաննա Խաչատրյան	Կրթական բարեփոխումներն ուսանողի աչքերով....	119
------------------------	---	-----

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Հյուսիսափայլում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A 4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի սկզբում գրել հայերեն համառոտագիրը և հիմնաբառերը, իսկ դրանց ռուսերեն և անգլերեն տարբերակները՝ հոդվածի վերջում:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով.
 - Երևանի Հյուսիսային համալսարան, խմբագրական խորհուրդ,
 - ուղարկել hyusisayin@gmail.com էլեկտրոնային փոստին:

ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

2024 1 (13)

ЮСИСАПАЙЛ

НАУЧНЫЙ ЖУРНАЛ

2024 1 (13)

HYUSISAPAYL

SCIENTIFIC JOURNAL

2024 1 (13)

Համարի պատասխանատու՝ Ա. Ճուղուրյան

Սրբագրիչ և համակարգչային ձևավորող՝ Ս. Մանուչարյան

*Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է
Հյուսիսային համալսարանի [www//northern.am](http://www/northern.am) պաշտոնական
կայքում:*

Չափեր՝ 60x84 ¹/₁₆

Տպագրություն օֆսեթ՝ 6.6 մամ.

Տպաքանակ՝ 120

Տպագրված է՝ Մեկնարկ ՄՊԸ-ում

Երևան-25, Արմվյան 41